

ՍԱՐԳԻՍ ԱՐԾՐՈՒՆԻ

# 1988-ի ՇԱՐԺՄԱՆ 30-ԱՄՅԱԿԸ



ԱՐՄԱՐԿ

32(47.922)

ՆԽ-88

հշ.

ՍԱՐԳԻՍ ԱՐԾՐՈՒՆԻ

5921

1988-Ի ՇԱՐԺՄԱՆ  
30-ԱՄՅԱԿԸ



ԵՐԵՎԱՆ  
ԱՆՏԱՐԵՍ  
2018

SARGIS ARTSRUNI

## 30 ANNIVERSARY OF 1988 MOVEMENT

Erevan 2018

Արժրունի Սարգիս

1988-ի Շարժման 30-ամյակը/Սարգիս Արժրունի: Կազմող՝ Արման Մուսինյան, խմբագիր՝ Աշոտ Սարգսյան: Ճեանվորող՝ Ավետիս Ավագյան. - Եր.: Անտարես, 2018. - 172 էջ:

Ղարաբաղյան շարժման 30-ամյակի առիթով Սարգիս Արժրունու հեղինակությամբ հրատարակված հոդվածների սույն ժողովածուն ինչպես 1988-90 թվականների համաժողովրդական պայքարի դրվագների, այնպես էլ դրա հետ սերտորեն կապված կարևոր այլ իրողությունների համակարգված մի պատկեր է ներկայացնում: Լայն ընթերցողից զատ այն կարող է օգտակար լինել այս շրջանի պատմության մասնագետներին:

## ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Ղարաբաղյան շարժման 30-ամյակի առիթով 1in.am կայքը «88-ի Շարժում — 30» խորագրի տակ ներկայացրեց Սարգիս Արժրունու հեղինակած ընդարձակ մի հոդվածաշար: Այն Շարժման ժամանակագրորեն համակարգված պատմությունն է, այլ նրա հիմնական դրվագներին նվիրված էսսեների կամ ակնարկների շարք, որոնք, սակայն, փաստորեն ընդգրկում են այդ տարիների իրադարձությունների գրեթե ամբողջական պատկերը:

Շարժման հորեյանը ընդարձակ այս անդրադարձի առիթն է եղել, իսկ շարժառիթն ու նպատակը ներկայացնենք հենց հեղինակի երկու ձեռագրերով:

– «Երրորդ հանրապետության պատմությունը՝ մասնավոր, բզկրված, հարմարեցված է իրար հաջորդող առաջնորդների քմահաճույքներին, քաղաքական կոնյունկտուրային»:

– «Հայոց պատմության դպրոցական դասագրքերում 88-ի շարժումն ու Երրորդ հանրապետության պատմությունը խայրառակ, ոչ պրոֆեսիոնալ մատուցում ունեն, ինչի հեղեանքով սերունդներն անհաղորդ են մնալու մեր պատմության հերոսական էջերից մեկին»:

Պետք է ասել, որ հեղինակն այս բացը լրացնելու ուղղությամբ կարելի էր ներդրում է անում: Չհաշված առանձին թեմաներով էպիզոդիկ հրատարակումները, վերջին 20 տարվա մեջ առաջին անգամ է, որ, այսպես ասենք, «ոչ ՀՀ-ական» (կամ «ոչ Կոնգրեսական») կայքը եւ չեզոք մի հեղինակ իր առջեւ խնդիր է դրել, դեմ գնալով սույն «քաղաքական կոնյունկտուրային», օբյեկտիվության դիրքերից ներկայացնել Շարժման տարիները ու դրա հետ կապված իրողությունները:

Հեղինակը բավարար չափով տեղյակ է նյութին, ժամանակի քաղաքական միջավայրին ու նրբություններին: Ոչ միայն դպրոցական ու բուհական դասագրքերում, այլև պատմաբան գիտնականների ուսումնասիրություններում, այս թեմաներով քաղաքական վերլուծություններում եւ այլն, քաղաքայում են Ս. Արժրունու կողմից արված կարևոր արձանագրումներ,

ատանց որոնց Շարժման պատմությունը կորցնում է իր բովանդակությունը: Մասնավորապես՝

– Ղարաբաղյան շարժման շարժիչ ուժերը, նրա հետապնդած առաջնային քաղաքական խնդրի դինամիկան:

– Շարժման միջազգային համարումը, պատմական դերը, նրա դեմ պայքարող ճակատները:

– Համաժողովրդական Շարժման՝ 1988թ. մայիսին ձևավորված «Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի» կատարած կարեւոր շրջադարձը, նրա պատմական դերակատարությունը:

– Ներքաղաքական պայքարի հիմնական առանցքը, մի կողմից՝ Կոմիտեի որդեգրած «քաղաքական պրագմատիզմի», մյուս կողմից՝ հայդատականության կամ քաղաքական ավանտյուրիզմի մեջ:

– Շարժման քաղաքական արժեքային համակարգը եւ այլն:

Կարելի է ասել, որ հեղինակը, սկզբնաղբյուրների վրա հենված գիտական ուսումնասիրության նպատակ չունենալով, ընտրած ժանրում, օբյեկտիվության եւ անաչառության իմաստով հասել է հնարավոր առավելագույնին:

Տեքստերը տեղադրել ենք Նույնությամբ՝ կայքի հրապարակման ժամանակագրական հաջորդականությամբ: Ուղղել ենք ակնհայտ վրիպակները: Ծանոթագրել ենք միայն փաստական անճշտությունները, ինչպիսիք, անշուշտ, անխուսափելի են լրագրողական հոդվածներում:

Հարգելով հեղինակի սեփական կարծիք ունենալու իրավունքը, չենք անդրադարձել առանձին հարցերի հետ կապված նրա եզրահանգումներին ու գնահատականներին Նույնիսկ այն դեպքերում, երբ դրանց հետ սկզբունքորեն համաձայն չենք եղել:

Որպես «Հավելված» տեղադրել ենք նույն հեղինակի մի քանի այլ հրապարակումներ, որոնք, թեեւ այս խորագրի տակ չեն ներկայացվել, սակայն ուղղակի կամ միջնորդավորված առնչվում են հոդվածաշարի թեմատիկային եւ առավել ամբողջական դարձնում այն:

Վերջում ավելորդ չենք համարում նշել հետեւյալը. ակնհայտ է, որ Սարգիս Արծրունին հրապարակախոսական ծածկանուն է, բայց երբ օրերից մի օր այս հոդվածաշարի հեղինակի իրական անունը բացահայտվի, դա միայն պատիվ կերի նրան:

ԱՇԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ

## Ինչպես կոմունիստները զրկվեցին իշխանությունից,

ՀՅԴ-ն՝ «հացից»

(04.12.2017)

1988-ի համազգային շարժումը՝ իր արժեքներով, գաղափարներով, ընկած է Երրորդ հանրապետության հիմքում: Իհարկե, անցած տարիների ընթացքում իշխանությունները շեղվել են 88-ի արժեքներից՝ Հայաստանը կանգնեցնելով ինստիտուցիոնալ եւ բովանդակային ճգնաժամի շեմին: Սրանով հանդերձ՝ 88-ի շարժումը ոչ միայն չի կորցնում իր պատմականությունը, այլ նաեւ՝ իր հզոր էներգետիկայով, Հանրապետությունը փրկում է վերջնական դիսկրիմինացիայից:

88-ի առաջին ամիսներին դժվար էր պատկերացնել, որ «Միացում» եւ «Լենին, պարտիա, Գորբաչով» կարգախոսներով սկսված համազգային շարժումը դառնալու է այն օրրանը, որտեղ ծնվելու է նոր քաղաքագիտական միտքը: Շարժման քաղաքական, գաղափարական բյուրեղացումը սկսվեց 88-ի մայիսից, երբ «Ղարաբաղ» կոմիտեին միացան հետագայում նրա կորիզը դարձած գործիչները, այդ թվում՝ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը:

Միայլ կլինի ասել, թե Հայաստանի կոմունիստական իշխանությունը չէր ուզում Արցախի միացումը Հայաստանին, ու գուցե Նույնիսկ ՀԿԿ առաջին դեմքերը դառնային Ղարաբաղի ամենաթունդ պաշտպանները՝ միայն թե 88-ի համազգային շարժման ընդերքում չծնվեին կոմունիստական իշխանության գոյությունը կասկածի տակ դնող երկու գաղափարները՝ անկախության եւ դեմոկրատիզացիայի պահանջը: 88-ի շարժումը հենց այս գաղափարների շնորհիվ դարձավ իրական այլընտրանք կոմունիստական իշխանությանը, գերեզմանափոր սովետական կայսրության, սնուցող արմատ անկախ Հայաստանի համար: 88-ի շարժումը սկսվեց Ղարաբաղի խնդրով, սակայն բովանդակային հարթության վրա շատ շուտով դարձավ Արեւելյան Եւրոպայի ամենազանգվածային դեմոկրատական շարժումներից մեկը: Առանց «Ղարաբաղ» կոմիտեի էլ Արցախի



հարցը կարող էր համազգային դառնալ: «Ղարաբաղ» կոմիտեն այլ՝ ավելի պատմական առաքելություն ունի. հարթակի գործիչներն անկախության հռչակումից տարիներ առաջ կարողացան այլընտրանք ձեռավորել կոմունիստական իշխանությանը՝ դառնալով քաղաքական նոր մտքի կրողներ, դեմոկրատիան դարձնելով համազգային գաղափար, մեր ու աշխարհի երկխոսության կամուրջ:

Համազգային շարժումը՝ իր արժեհամակարգով, ինստիտուցիոնալ կառուցվածքով, գործիչների աշխարհայացքով գաղափարական ու քաղաքական այլընտրանք էր նաեւ հայ ավանդական քաղաքական մտքին, այսպես կոչված՝ դաշնակցականությանը: Վերջինիս պահանջատիրության կարգախոսին հակադրվեց 88-ի շարժման պրագմատիզմը, հարեան երկրների հետ հակադրությանը՝ երկխոսության եւ տարածաշրջանային համագործակցության տեսլականը, հայկական «թալիբանականությանը»՝ համազգային շարժման ինտեգրացիոն ռեսուրսը:

Ոխերիմ թշնամիներ կոմունիստներն ու դաշնակցականները դարձան դաշնակիցներ՝ Սովետը փրկելու հարցում, համազգային շարժման ինստիտուցիոնալ կառույց ՀՀԸ-ի դեմ:

Պատահական չէ, որ 1998-ի պալատական հեղաշրջման հետեւանքով, երբ Հայաստանում հաղթեց հայկական «թերմիդորականությունը», դրա առանցքում պարտկոմ Ռոբերտ Քոչարյանն ու ՀՅՄ-ն էին: Հայաստանում տեղի էր ունեցել պարտկոմադաշնակցական ռեանձ, որը հետետղականորեն խժողում էր 88-ի արժեքները: «Թերմիդորի» հակասահմանադրական ռեժիմը Հայաստանում շարունակվում է առ այսօր՝ տարբեր մուտացիաներով, բայց նույն գիշատիչ էությունը<sup>1</sup>:

## Ո՛վ էր ղեկավարում համազգային շարժումը

(05.12.2017)

Պատմական բոլոր իրադարձությունների շուրջ զարգացվում են տարբեր վարկածներ՝ դրանց առաջացման, լատենտ մոտիվների, սովետային դերակատարների շուրջ: 88-ի շարժումը բացառություն չէ, մանավանդ, որ հայ իրականությունը չէր ունեցել նման զանգվածային շարժում՝ հստակ օրակարգով, հարթակի գործիչների ու հարյուր հազարավոր ցուցարարների ներդաշնակությամբ:

Խորհրդային ղեկավարությունը Երեւանի զանգվածային ցույցերի հետեւում տեսնում էր իմպերիալիզմին, Ափյուռքին, Դաշնակցությանը, մատնեւերին, սակայն՝ ոչ երբեք Հայաստանի հասարակությանը, որն ընդամենը օգտվեց Միխայիլ Գորբաչովի հռչակած Վերակառուցման առաջացրած «ծնախից»:<sup>2</sup> ԽՄԿԿ ղեկավարության ոչ աղեկվատ քաղաքականությունն ու արձագանքն ընդամենը մեծացնում էին Հայաստանի հասարակության օտարվածությունը Մոսկվայից՝ համազգային շարժման օրակարգում ավելի հաստատուն դարձնելով անկախության գաղափարը:

Մեկ այլ վարկածի համաձայն՝ 88-ի շարժման թիկունքում կանգնած է եղել խորհրդային ՊԱԿ-ը: Այս վարկածն անհեթեթություն է, եթե նույնիսկ հարթակի գործիչներից մեկը կամ երկուսը վերահսկելի են եղել կոմունիստական իշխանության կամ խորհրդային հատուկ ծառայությունների կողմից: Զանգվածային շարժումները՝ հասարակության տուլյեկտության հստակ ամրագրումով, չեն կարող բեմականացվել որեւէ կենտրոնի կամ հատուկ ծառայության կողմից: 88-ի շարժումը՝ իր մասշտաբայնությամբ, չէր կարող վերահսկվել կայսրության մարմինների կողմից:

Օբյեկտիվորեն պետք է ընդունենք, որ 88-ի շարժման ծավալման համար առկա էին միանգամից մի քանի համատեքստ: Նախ՝ Խորհրդային կայսրության մայրամուտը լուրջ ճգնաժամ էր հարուցել ոչ միայն ԽՍՀՄ-ում, այլ նաեւ՝ Արեւելյան Եւրոպայի երկրներում, որտեղ մեկը մյուսի հետեւից տապալվում էին կոմունիստական ռեժիմները, գլուխ էին բարձրացնում տարածքային վեճերը, ազգային, կրոնական, լեզվական խնդիրները: Արեւելյան Եւրոպայի,

<sup>1</sup> [in.am/2256406.html](http://in.am/2256406.html). 04.12.2017թ.:

Մերծրայթյան երկրների, Հայաստանի շարժումներն ունենին շատ ընդհանրություններ, որովհետեւ սնվում էին միեւնույն համաշխարհային համատեքստից, մյուս կողմից՝ դեմոկրատական յուրաքանչյուր շարժման հատուկ էր իր ազգային օրակարգը:

88-ի շարժումը զանգվածային էր մեկ այլ պատճառով. Սովետական Հայաստանի հասարակության սոցիալական կառուցվածքն իր մեջ քաղաքացիականության էլեմենտներ էր պարունակում, ինչը նպաստեց թե՛ Շարժման ինստիտուցիոնալ կայացվածությանը եւ թե՛ օրակարգի բազմաբովանդակությանը: 88-ի Շարժումը, անշուշտ, հիմքում ուներ Արցախի խնդիրը, սակայն միանգամայն ոչ արդեվատ կլինի այն դարաբաղյան շարժում համարելը, որովհետեւ Ազատության հրապարակում եւ Մատենադարանի տարածքում ձեռարկվում էին ապագա Հայաստանի հիմքերը՝ ազգային գաղափարախոսությունից՝ մինչեւ լեզվի խնդիր, Արցախի խնդրից՝ մինչեւ էկոլոգիա:

Շարժումը ղեկավարող «Ղարաբաղ» կոմիտեն իր կառույցներն ուներ ակադեմիական եւ, այսպես կոչված, արդյունաբերական միջավայրում, եւ 1988-90 թթ.-ին հենց կոմիտեն էր թելադրում Հայաստանի քաղաքական օրակարգը: «Ղարաբաղ» կոմիտեն դարձել էր այլընտրանքային իշխանություն եւ պատահական չէ, որ համազգային շարժման երեք-չորս պատգամավորներ կարողանում էին ՀԽՍՀ Գերագույն խորհրդին թելադրել հանրային պատվերը:

Կոմիտեն կոլեզիալ մարմին էր, սակայն դրա 11 անդամների շարքում, քնական լիդերության սկզբունքով, առաջին պլանում հայտնվեցին Լեւոն Տեր-Պետրոսյանն ու Վազգեն Մանուկյանը՝ երրորդ հանրապետության առաջին նախագահն ու վարչապետը<sup>2</sup>:

<sup>2</sup> Վազգեն Մանուկյանի համար բազմիցս օգտագործվող «վարչապետ» փոխորդը ծիշր չէ. 1990թ. օգոստոսի 13-ին եւս ընկրվեց ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ: Օգոստոսի 23-ին Անկախության հռչակագրով ՀԽՍՀ-ն վերանվանվեց Հայաստանի Հանրապետություն, սակայն գործառնոր իշխանության ղեկավարի պաշտոնական փոխորդը մնաց նույնը՝ Մինիստրների խորհրդի նախագահ: «Մինիստրների» բառը երբեմն թարգմանվում էր «նախարարների»:

Լեւոն Տեր-Պետրոսյան-Վազգեն Մանուկյան տանդեմը Հայաստանում տապալեց կոմունիստական մենիշխանությունը՝ իշխանության բերելով ՀՀԸ-ին<sup>3</sup>: Սակայն համազգային լիդերների տանդեմը մեկ տարվա կյանք ունեցավ, իսկ արդեն 1996-ին 88-ի հարթակի ընկերները դարձան ռխերիմ ախոյաններ<sup>4</sup>:

## Ղարաբաղը պահողների ու ծախողների մասին

(07.12.2017)

«Ղարաբաղը մերն է» էնցիոնալ բանաձեւը համայն հայությանը միավորում է նաեւ այսօր, իսկ երեք տասնամյակ առաջ դա Հայաստանի հասարակությանը եւ աշխարհասփյուռ հայությանը կոնսոլիդացնող հիմնական բանաձեւն էր, նույնիսկ այն մարդկանց համար, ովքեր կոմֆորմիստ էին ու Ազատության հրապարակ չէին գնում կամ էլ՝ պարտիականի տոմսը պինդ պահում էին գրպաններում:

«Ղարաբաղը մերն է» կարգախոսը, սակայն, էնցիոնալ ենթատեքստ ունի, իսկ քաղաքական հարթության վրա այն դրսեւորվում է տարբեր, նույնիսկ հակադրվող ձեակերպումներով: Սխալ է այն պնդումը, որ Ղարաբաղի հարցում բոլորը նույն դիրքորոշումն են ունեցել եւ այն ընդամենը շահարկվել է «Ղարաբաղ» կոմիտեի կողմից՝ իշխանության գալու համար: Այս պարզունակ մեղադրանքը հետո առիթ դարձավ, որպեսզի տարիներ անց փոխգիջումների մասին խոսող Լեւոն Տեր-Պետրոսյանին քննադատները մեղադրեն Ղարաբաղը «ծախելու» մեջ:

88-ին Հայաստանի կոմկուսի ղեկավարները մասնավոր զոույցներում ու շփումներում «Ղարաբաղը մերն է»-ի ոչ պակաս ջատագովներ էին, սակայն պրակտիկ քաղաքականության մեջ համոզված

<sup>3</sup> Ծիշր չէ Հայաստանում կոմունիստական մենիշխանության փապալումը վերագրել Տեր-Պետրոսյանին ու Մանուկյանին. դա փոխի է ունեցել «Ղարաբաղ» կոմիտեի եւ ՀՀԸ-ի գլխավորած համաժողովրդական շարժման շերտիկ:

<sup>4</sup> [in.am/2257098.html](http://in.am/2257098.html). 05.12.2017թ.:



կարծում էին, որ «Ղարաբաղն իրենց գրպանում չէ», այլ խոսքով՝ անխմաստ էին համարում համազգային զարթոնքն՝ ամեն բան թողնելով Մոսկվայի ողորմածությանը: Մոսկվայի 1921 թվականի «ողորմածությունը» նրանց համար դաս չէր եղել, ոչ էլ՝ այն, որ Մոսկվայի «ողորմածության» հետեանքով Երեանի քթի տակ հալթափվել էր Նախիջեանը:

Սփյուռքի դաշնակները նույնպես՝ 88-ին գաղթօջախներից ազդարարում էին, որ «Ղարաբաղը մերն է», բայց հետեից հիշում էին Կարսի ու Արդահանի, կարոտի աղբյուր Մասիսի ու վշտի խորհրդանիշ վանի մասին: Ու այս ամենի՝ վիրտուալ և անիրական օրակարգի արանքում կորչում էր Արցախի սուբյեկտությունը: 88-ի շարժման հիմնական առանձնահատկությունը հենց այն է, որ այն մեծացնում էր Արցախի սուբյեկտությունը՝ թե համազգային շարժման հարթակներում և թե ՀՀ-ի իշխանության տարիներին, երբ ԼՂՀ-ն հրադադարի պայմանագրի կողմ էր, բանակցային գործընթացի լիարժեք մասնակից:

88-ի շարժման հիմնական առաքելությունը հենց այն էր, որ նա ԼՂ խնդիրը դուրս բերեց ազգային նեղ համատեքստից՝ ներկայացնելով մարդու իրավունքների և ինքնորոշման սկզբունքի գերակայության հարթության վրա: Այլ խոսքով՝ Արցախի հարցում 88-ին շարժման պահանջները համահունչ էին համաշխարհային համատեքստին ու պատահական չէ, որ միջազգայնորեն լեգիտիմացված էր հայկական կողմի հաղթանակն արցախյան պատերազմում:

Ճակատագրի հեգնանքով՝ ԼՂՀ-ն բանակցություններից դուրս մղած և 88-ի արժեքներին հակադրվող Ռոբերտ Քոչարյանը Լեւոն Տեր-Պետրոսյանին մեղադրում էր Ղարաբաղը «ծախելու» մեջ՝ թեև անհասկանալի է, թե ԼՂՀ առաջին ու Հայաստանի երկրորդ նախագահն ինչպես էր սպահովելու հաղթանակը՝ Արցախի սուբյեկտությունը հետետղականորեն սպանելուց հետո: Հավանաբար՝ Մեղրին փոխանակելու ճանապարհով<sup>5</sup>...

## Փլատակների տակ մնացած կայսրություն, փլատակներից հառնող շարժում (08.12.2017)

Օրվա խորհուրդը ստիպում է մի փոքր խմբագրել մեր խորագրի թեմատիկ ցանկն ու ժամանակագրությունը: 88-ը մեր ժողովրդի պատմության մեջ հիշարժան է ոչ միայն համազգային զարթոնքով, այլ նաև դեկտեմբերի 7-ի ավերիչ երկրաշարժով: 1988-ի նոյեմբերին համազգային շարժման օրակարգում արդեն տեղ էին գտել Հայաստանի ինքնիշխանությանը վերաբերող դրույթներ, իսկ Մոսկվան դիմում էր բացահայտ ռեպրեսիվ քայլերի:

Պատահական չէ, որ երբ տեղի ունեցավ դեկտեմբերի 7-ի երկրաշարժը, շատերը դա համարեցին Մոսկվայի «ծեռքի գործը»: Մինչև հիմա էլ՝ ժողովրդական խոսակցությունների մակարդակում այս վարկածը շրջանառվում է, մանավանդ, որ երկրաշարժից մի քանի օր հետո Հայաստան ժամանած Միխայիլ Գորբաչովը Երեանում «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին ձերբակալելու հրաման տվեց:

Մյուս կողմից՝ խորհրդային կոմկուսի ղեկավարությունը շրջափակել էր ոչ միայն Հայաստանն, այլ նաև՝ աղետի գոտին, որը օրեր շարունակ մեկուսացված էր միջազգային օգնությունից, ինչի հետեանքով հնարավոր չեղավ փլատակների տակից հանել հազարավոր մարդկանց: Սակայն հենց երկրաշարժը դարձավ այն ինդիկատորը, որը կանխորոշեց 88-ի համազգային շարժման հաղթանակը, ձեռնվորեց Հայաստանի հասարակության ամփոփ վերաբերմունքը խորհրդային Միության հանդեպ:

Նույնիսկ երեք տասնամյակը չի կարող քողարկել մեր վեհության զգացումը, հուզմունքը, երբ հիշում ենք, որ փլատակների տակից դուրս բերված մարդիկ առաջինը հարցնում էին Արցախի մասին, կամ չի մոռացվի Գորբաչովի շուկը, երբ Գյումրիի փլատակների վրա մարդիկ նրանից հաշիվ էին պահանջում «Ղարաբաղ» կոմիտեի անդամների ձերբակալության համար<sup>6</sup>:

<sup>5</sup> Իրականում հայրենի այդ դրվագում Գորբաչովին հարց էր ուղղվել Արցախի ճակատագրի և «Ղարաբաղ» կոմիտեի հետ երկխոսության վերաբերյալ (այդ պահին

<sup>5</sup> [in.am/2257879.html](http://in.am/2257879.html). 07.12.2017թ.:

Երկրաշարժի փլատակների տակից նոր թափով հառնում էր ազգային զարթոնքը՝ չնայած շարժման լիդերների ձեռքակալությանը: Շուտով Մոսկվայում հասկացան, որ «Ղարաբաղ» կոմիտեն Հայաստանի ողջ ժողովուրդն է ու նոր ցնցումներից խուսափելու համար՝ արդեն 1989թ.-ի մայիսին կոմիտեի տղաներն ազատ արձակվեցին:

Մյուս կողմից՝ երկրաշարժը հայաստանցիների համար բացահայտեց խորհրդային հզորության միջը, մարդատյացությունը, կոռուպցիոն դեմքը: Խորհրդային կայսրությունն անդառնալիորեն մնացել էր երկրաշարժի փլատակների տակ<sup>7</sup>....:

### Թե ինչու Մոսկվան չներեց Կարեն Սերոբիչին (09.12.2017)

88-ի շարժման առաջին ամիսներին Մոսկվայի եւ Երեւանի կոմունիստական իշխանությունները փորձում էին վերահսկել այն՝ հարթակ ուղարկելով նոմենկլատուրային մտավորականների: Ըստ ամենայնի՝ կոմկուսում չէին գիտակցում, որ աշխարհը թեակոխել է երկրորդ աշխարհամարտից հետո ամենագլորալ փոփոխությունների պատմաշրջանը, ու ավանդական մեթոդներով հնարավոր չէ կառավարել հասարակությանը, օրակարգ թելադրել տասնյակ, հարյուր հազարավոր մարդկանց, ովքեր Ազատության հրապարակում ծեաւվորում էին քաղաքացիական կամք, այլընտրանքային իշխանություն, որն ամեն օր ավելի էր բացահայտում կոմունիստական իշխանության սնանկությունը:

Նույնիսկ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը, ով անտարակույս անցած հարյուրամյակում մեր իրակալության ամենսիրված ղեկավարներից մեկն էր, ոչ աղեկվառ գնահատեց իրավիճակը: Նա թերեւս հույս ուներ իր անձնական

<sup>4</sup> Կոմիտեն դեռ ձեռքակալված չէր, ինչը եւ նրան հունից հանել էր (զրե՛ս «Երեւոյան Երեւան», 12.12.1988թ.):

<sup>7</sup> lin.am/2258491.html. 08.12.2017թ.:

հեղինակության շնորհիվ կառավարելի պահել Ազատության հրապարակը, սակայն գերագնահատել էր իր ազդեցությունը կամ ավելի ստույգ՝ թերագնահատել էր հասարակության գործոնը: Կարեն Սերոբիչը նույնիսկ Ազատության հրապարակ եկավ, սակայն դա շրջաարձային եղավ այն իմաստով, որ Հայաստանի հասարակության վրա իր ազդեցությունը կորցրեց Հայաստանի կոմկուսի միակ հեղինակավոր գործիչը, որը մոսկովյան ու երեւանյան կուսակցական էլիտայում թերեւս միակն էր, որին ժողովուրդը պատրաստ էր լսել:

Կարեն Դեմիրճյանը սովետական ղեկավարի կերպարի մեջ գուցե նույնիսկ անկեղծ էր, երբ Ազատության հրապարակի հարթակից ասում էր, թե Ղարաբաղն իր գրպանում չէ՝ ակնարկելով, որ հարցի լուծման բանային Մոսկվայում է: Սակայն Հայաստանի հասարակությունը, որ վերջապէս հավատացել էր իր ուժին ու հավաքականությանը, Դեմիրճյանի խոսքերը դիմավորեց սուլոցներով: Ժողովրդի ու Կարեն Սերոբիչի միջեւ օտարման պատ էր գոյանում, մանավանդ՝ ազատությունն իր հետ բերում էր թափանցիկություն, եւ ջրի երես էին դուրս գալիս ՀԿԿ ղեկավարների կոռուպցիոն գործունեության նորանոր դրվագներ:

Կարեն Դեմիրճյանն իրեն մեկուսացրեց Հայաստանի հասարակությունից, սակայն ավելի մեծ պորթլեմներ ունեցավ Միխայիլ Գորբաչովի ու նրա շրջապատի հետ: Դեմիրճյանի պատմախնդրությունը թույլ չէր տալիս, որպեսզի նա գործիք դառնա Մոսկվայի ձեռքին՝ ռեպրեսիվ մեթոդներով զսպելով շարժման ծաւալումը<sup>8</sup>:

1988-ի մայիսին շարժման հարթակը վերջնականապէս ազատվեց պալատական մտավորականներից, «Ղարաբաղ» կոմիտեի կողողինացումն իր ձեռքը վերցրեց 60-ականների ուսանողական հուզումների կազմակերպիչ Վազգեն Մանուկյանը<sup>9</sup>, հարթակում

<sup>8</sup> Գորբաչովի կողմից Դեմիրճյանին պաշտօնազրկելու հիմնական պատճառը հենց այն էր, որ վերջինս չհամաձայնեց սեփական ժողովրդի դեմ ուժ կիրառելու Մոսկվայի պահանջին:

<sup>9</sup> Վազգեն Մանուկյանի՝ «Ղարաբաղ» կոմիտեի «կողողինացոր» լինելու պնդումը չի համապատասխանում իրականությանը, այդ մասին զրավոր վկայում են Կոմիտեի



հայտնվեցին Լեւոն Տեր-Պետրոսյանը, Վանո Սիրադեղյանը<sup>10</sup>: Մոսկվայում վերջնականապես կորցրեցին հույսերը, որ կարող են վերահսկել շարժումը: Այս ամենի պատասխանատու համարվեց Կարեն Դեմիրճյանը, որը մայիսին պաշտոնանկ արվեց Գորբաչովի ցուցումով:

Կարեն Սերոբիչի հեռացումով՝ Հայաստանի ժողովուրդը վերջնականապես կորցրեց հավատը Մոսկվայի, կոմկուսի հանդեպ: Հարթակից ավելի հաճախ էին հնչում հակախորհրդային, հակակոմունիստական ելույթներ: Անկախության պահանջն աստիճանաբար դառնում էր շարժման օրակարգի մաս, մանավանդ, որ 1988-ի մայիսի 28-ին երջանկահիշատակ Մովսես Գորգիսյանն Ազատության հրապարակում ծածանել էր նվիրական եռագույնը<sup>11</sup>:

### Ինչո՞ւ էինք հավատում Գորբաչովին

(10.12.2017)

Համազգային շարժումը սկսվեց «Միացում» եւ «Լենին, պարտիա, Գորբաչով» կարգախոսներով: Կարելի էր կարծել, որ մեր հասարակությունը հույսեր ուներ, թե պատմական արդարությունը հնարավոր է վերականգնել ԽՍՀՄ ղեկավարության, ավելի ստույգ՝ Միխայիլ Գորբաչովի միջոցով: Ասել, թե վերջինս երկրում ու մասնավորապես՝ Հայաստանում, մեծ հեղինակություն էր վայելում, ճիշտ չի լինի, մանավանդ, որ նրա իրականացրած բարեփոխումները միանշանակ ընկալում, նաեւ հետեւանքներ չունեին եւ հասցրել էին տնտեսական որոշակի խնդիրներ հարուցել:

*անդամներ Բարկեն Արարեցյանը (նրա հարցազրույցը տե՛ս Արթուր Բաղդասարյան, Լեւոն Տեր-Պետրոսյան, Դիմանկարի փորձ, Երևան, 1996, էջ 64-65) եւ Ալեքսան Հակոբյանը (Հակոբյան Ա., հարցազրույց, hombardzum.am կայքին, 11.09.2015թ.): Ճիշտ չէ նաեւ երկրորդ վերագրումը. Վազգեն Մանուկյանը ընդամենը եղել է 60-ականների ուսանողական հուզումների կազմակերպիչներից մեկը:*

<sup>10</sup> Վանո Սիրադեղյանը հարթակում եղել է հանրահավաքների առաջին օրից՝ 1988թ. փետրվարի 20-ից:

<sup>11</sup> [in.am/2259138.html](http://in.am/2259138.html). 09.12.2017թ.:

Մյուս կողմից՝ Գորբաչովը ակնհայտորեն բացել էր համակարգը, սրբագրում էր կուսակցական մոտեցումները, դրական իմաստով նպաստում էր հասարակության ապագադափարայնացմանը կամ ապարոյշեփկացմանն, ու մարդկանց մոտ հույսեր էին ծնվել, որ հնարավոր են արմատական փոփոխություններ:

Դրանք, իհարկե, չմոտիվացված հույսեր էին, որովհետեւ չկար որեւէ նախանշան, որ Գորբաչովը վերանայելու է կոմկուսի կայսերական քաղաքականությունը, առանց որի՝ հնարավոր չէր լինելու ազգային արդարացի քաղաքականության իրականացումը: ԽՍՀՄ-ը կայացել էր սահմանների կամայական գծագրման սկզբունքով, ինչը կայսրության քաղաքականության կարետոր սկզբունք էր: Գորբաչովն՝ անկախ իր կոսմոսիկ բարեփոխումներից, սկզբունքային որեւէ հարցում չէր հակադրվում ԽՍՀՄ կայսրության հիմքերին: Համազգային զարթոնքի առաջին ամիսներին մեր ժողովուրդը հազիվ թե նման խորքային անալիզի անհրաժեշտություն ունենար, մյուս կողմից՝ փետրվար-մարտ ամիսներին Ազատության հրապարակի հարթակում հիմնականում տոն էին տալիս մարդիկ, ովքեր հավատարիմ էին, այսպես կոչված, կուսակցական գծին:

Շարժման մեկնարկից արդեն մեկ շաբաթ հետո տեղի ունեցան Սումգայիթի ջարդերը եւ, անկախ այն հանգամանքից, որ խորհրդային պրոպագանդան տեղի ունեցածը մատուցում էր՝ որպես արդրեջանական խուժանի վայրենության դրսեւորում, մեր ժողովրդի համար ակնհայտ էր դառնում, որ Ադրբեջանում հայաշայտությունը խրախուսվում եւ ուղղորդվում է Մոսկվայի կողմից: Ազատության հրապարակում հաշված ամիսների ընթացքում տեղի էր ունենում հանրային կարծիքի բյուրեղացում, ինչը թույլ էր տալիս ձերբազատվել քաղաքական «ոռմանտիզմից» եւ իրականությանը նայել ավելի սթափ հայացքով: Արդեն մայիս ամսին շարժումն ամբողջովին դուրս էր եկել կուսակցական գաղափարական կարծրատիպերից ու պատահական չէ, որ հանրային տրամադրությունների էվոլյուցիան շարժման օրակարգ բերեց ինքնիշխանության պահանջը, իսկ հարթակ՝ նոր գործիչների,

ովքեր 1988-ի մայիսից ձեավորեցին համազգային շարժման կորիզը<sup>12</sup>:

1988-ի դեկտեմբերին՝ երկրաշարժից հետո, Գորբաչովն արդեն Հայաստան եկավ օկուպանտի կարգավիճակով ու թերես օրինաչափ էր, որ նա երեւանում հրահանգեց համազգային շարժման լիդերների ձերբակալությունը:

1988-ի վերջից շարժումն ավելի շատ ուղղված էր Մոսկվայի կայսերական քաղաքականության դեմ՝ այն գիտակցումով, որ Արցախի հարցի լուծման բանալին կայսրության քայքայումն է, կոմունիստական իշխանության տապալումը<sup>13</sup>:

### «Ղարաբաղ» կոմիտեն՝ Dream Team

(11.12.2017)

1988-ի մայիսին վերջնականապես ձեավորվեց «Ղարաբաղ» կոմիտեն, որի կազմակերպչական կառուցի հիման վրա հետո ձեավորվեց ՀՀԸ-ն:

«Ղարաբաղ» կոմիտեն հայ քաղաքական իրականության բացառիկ կառույց է, որը ոչ միայն ձեավորեց համազգային շարժման ինստիտուցիոնալ հիմքը, այլև դարձավ քաղաքական նոր հոսանքի ձեավորման ակունքը՝ իր պրագմատիզմով արմատապես տարբերվելով ՀՅԴ մաքսիմալիստական արկածախնդրությունից, Խորհրդային Հայաստանի ընդերքում այլընտրանք դառնալով կոմունիստական իշխանությանը:

Կոմիտեն կուռ քաղաքական թիմ էր՝ կոլեգիալ ղեկավարմամբ, սակայն Լեոն Տեր-Պետրոսյանի ու Վազգեն Մանուկյանի ընդգծված լիդերությամբ: Կոմիտեի 11 անդամները փոխլրացնում էին

<sup>12</sup> Դրա պաշտոնական անվանումն էր «Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտե», որում ընդգրկված էին 11 հոգի. Բարկեն Արարջյան, Համբարձում Գալստրյան, Սամվել Գետրոյան, Ալեքսան Հակոբյան, Ռաֆայել Ղազարյան, Սամսոն Ղազարյան, Վազգեն Մանուկյան, Աշոտ Մանուկյան, Վանո Սիրադեղյան, Դավիթ Վարդանյան, Լեոն Տեր-Պետրոսյան:

<sup>13</sup> [in.am/2259575.html](http://in.am/2259575.html), 10.12.2017թ.:

միմյանց՝ ամբողջացնելով համազգային պայքարի միասնականությունը: Աշոտ Մանուկյանի կրակոտ ելույթները փոխլրացվում էին Ռաֆայել Ղազարյանի ակադեմիականությամբ, Վանո Սիրադեղյանի կոլորիտը՝ Համբարձում Գալստյանի տեսական պատրաստությամբ...

«Ղարաբաղ» կոմիտեն 1988թ.-ի մայիս-նոյեմբեր ամիսներին ոչ միայն դարձավ կոմկուսի իրական այլընտրանքն, այլ նաև կարողացավ շարժման օրակարգը թելադրել կոմունիստական Գերագույն խորհրդին, որը հարկադրված էր վավերացնել Ազատության իրապարակում ընդունված որոշումները:

«Ղարաբաղ» կոմիտեն իրական այլընտրանք էր բոլոր առումներով: Ինստիտուցիոնալ հարթության վրա համազգային շարժման կառույցներն ավելի կենսունակ էին, քան կոմկուսի տարբեր կառույցներն ու ռայկոմները, որոնք կորցրել էին իրենց հեղինակությունն անգամ իշխանության միջին եւ ստորին օղակներում: Կոմիտեն ձեավորում էր դիրքորոշումներ, որոնք արտահայտում էին հասարակության տրամադրությունները, միեւնույն ժամանակ՝ համահունչ էին համաշխարհային համատեքստին: Առանց բարձրագույն հայտարարությունների՝ «Ղարաբաղ» կոմիտեն դարձել էր խորհրդային կայսրության հիմնական մարտահրավերներից մեկը:

1988-ի երկրաշարժի առիթն օգտագործելով՝ Մոսկվան հրահանգեց «Ղարաբաղ» կոմիտեի անդամների ձերբակալությունը: Շարժման տղաները տեղափոխվեցին մոսկովյան ամենախիստ բանտերը, սակայն համազգային շարժումը ոչ միայն չկասեցվեց, այլև նոր թափ ստացավ՝ շնորհիվ Դավիթ Շահնազարյանի, Ալբերտ Բաղդասարյանի, մյուսների, այսպես կոչված՝ «Ղարաբաղ» կոմիտե-2-ի<sup>14</sup>, որը համազգային համախմբման նոր այլք բարձրացրեց Հայաստանում: 1989-ի մայիսին կոմիտեի տղաները՝ համազգային ճնշման ներքո, ազատ արձակվեցին: Հենց այդ ժամանակ էլ Հայաստանում, ըստ էության, տեղի ունեցավ փաստացի հեղափոխու-

<sup>14</sup> Այդ կոմիտեի մյուս անդամներն էին՝ Երջանիկ Արզարյանը, Արշակ Սարգսյանը, Ավետիք Իշխանյանը, Վիտյա Այվազյանը, Սմբատ Հակոբյանը եւ Արեփան Ղազարբեկյանը (Մարգարյանը):



թյունն, որովհետեւ կոմիտեի տղաները ձերբակալվեցին՝ որպես շարժման առաջնորդներ, բանտից վերադարձան՝ որպես փաստացի իշխանություն:

Այդպես էր ոչ միայն հանրային ընկալման մեջ, միջազգային արձագանքներում, այլ նույնիսկ՝ մոսկովյան իշխանության տեսանկյունից, որովհետեւ շարժման գործիչների ձերբակալությունը Հայաստանում վերջնականապես բարոյագրկեց կոմունիստական իշխանությունը:

Հայաստանում հասունանում էր կոմունիստական իշխանության տապալման պատմական պահը: 1989թ.-ի նոյեմբերին ձեւավորվեց ՀՀԵՆ<sup>15</sup>, որը 1990թ.-ի Գերագույն խորհրդի ընտրություններում հաղթանակ տարավ: Ընդ որում՝ ՀՀԵՆ-ն կոմունիստներին հաղթեց սովետական օրենսդրությամբ ու ընտրակարգով՝ ձեւավորելով միանգամայն լեգիտիմ իշխանություն անգամ ԽՍՀՄ սահմանադրության տեսանկյունից:

Օգոստոս 4-ին Լեւոն Տեր-Պետրոսյանն ընտրվեց Գերագույն խորհրդի նախագահ. Հայաստանում կոմունիստական իշխանությունը տապալվեց<sup>16</sup>:

### Որսասեր պարտկոնը

(12.12.2017)

Ղարաբաղյան շարժումն Արցախում ղեկավարում էր «Կոունկ» կոմիտեն, որը կազմավորվել էր 1988 թվականի մարտին: Կոմիտեն «Կոունկ» անվանումը ստացել էր քանդակագործ Արմեն Հակոբյանի առաջարկությամբ: Ըստ պաշտոնական վարկածի՝ կոմիտեի ծրա-

<sup>15</sup> Շարժման քաղաքական կառույցը իրականում ձեւավորվել էր 1988թ. օգոստոսի 19-ին՝ «Ղարաբաղ» կոմիտեի կողմից ՀՀԵ ծրագրի հրապարակումից անմիջապես հետո (ինչպես ճիշտ էր նշում է հեղինակը իր 20.12.2017 թվակիր հոդվածում): 1989թ. հունիսի 25-ին, հանրապետության ճշման փակ ՀԽՍՀ ԳԽ-ը ճանաչել էր ՀՀԵՆ-ն որպես հասարակական կազմակերպություն: Նոյեմբերին պարզապես րեդի ունեցավ ՀՀԵ 1-ին համագումարը:

<sup>16</sup> [in.am/2259937.html](http://in.am/2259937.html). 11.12.2017թ.:

գիրն ու կանոնադրությունը մշակել է Ռոբերտ Քոչարյանը՝ թե՛ն այլ արջուրներ նշում են, որ «Կոունկի» իրական առաջնորդն ու ոգեշնչողը եղել է հանգուցյալ Արկադի Մանուչարովը: Անկախ այն հանգամանքից, որ «Կոունկն», ըստ էության, եղել է «Ղարաբաղ» կոմիտեի քույր կառույցը՝ երկու կազմակերպությունների ընդհանրությունները շատ քիչ են: «Կոունկը» քաղաքական եւ առավել եւս գաղափարական այլընտրանք ձեւավորելու հայտ չի ներկայացրել եւ նրա ձեւավորման հարցում ավելի շատ է տեղական կոմունիստական իշխանության միջամտությունը: Պատահական չէ, որ կոմիտեի հրապարակային դեմքերից մեկը՝ Ռոբերտ Քոչարյանը, «Մետաքսի» կոմբինատի պարտկոնն էր: Չուտ գործելաճի առումով էլ՝ «Կոունկն» իրեն ավելի քիչ էր սահմանափակել քաղաքական եւ գաղափարական տարրերով: Օրինակ՝ 1988թ.-ի մարտի 8-ին Ռոբերտ Քոչարյանի գլխավորությամբ 7 հոգուց բաղկացած պատվիրակությունը Մոսկվայում հանդիպել է Կոմկոսի ղեկավար գործիչներ Եգոր Լիզաչովի եւ Եվգենի Պրիմակովի հետ: Վերջին երկու գործիչները ԽՄԿԿ Բյուրոյի, այսպես կոչված, ռեակցիոն թեմի գործիչներ էին եւ երբեք հայամեն գիրքորոշումներով աչքի չեն ընկել: Սակայն Ռոբերտ Քոչարյանն, ըստ երեսույթին, շարժման հենց առաջին տարիներից կարեւորել էր ոչ այնքան հանդիպումների բովանդակությունը, որքան՝ դրանց ընձեռած կոնտակտները, ինքնադրսետրելու հնարավորությունը: Պատահական չէ, որ հենց Ռոբերտ Քոչարյանը դարձավ Արցախի այն ներկայացուցիչը, ով 1989թ.-ի նոյեմբերին ընտրվեց նորաստեղծ ՀՀԵ վարչության անդամ: Սա նրա կենսագրության շրջադարձային պահն էր, որովհետեւ Արցախում Քոչարյանն իշխանության է եկել Երեւանի բավականին բացահայտ եւ ցուցադրական ճնշման հետեանքով:

Եթե չլիներ Քոչարյանի կենսագրության այդ դրվագը, նա 1997-ին հազիվ թե ստանար Հայաստանի վարչապետ դառնալու առաջարկություն: Այստեղ եւս վճռորոշ դեր խաղաց Քոչարյանի բնավորության ամենաբնութագրական հատկանիշը, երբ նա ընդհանուր գործը, գաղափարը ստորադասում է սեփական անձին: Եթե ԼՂՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին հետաքրքրեր Արցախի սուբյեկ-

տուության հարցը, նա երբեք չէր համաձայնի ԼՂՀ նախագահի պաշտոնը փոխարինել Հայաստանի վարչապետի պաշտոնով՝ թեև ավելի ուշ պարզվեց, որ Քոչարյանի նպատակը եղել է Հայաստանի նախագահի պաշտոնը: Ասում են, որ 1997-ի վերջին-1998-ի սկզբին, երբ Հայաստանի Անվտանգության խորհրդում քննարկվել է ԼՂ հարցը, եւ ուժայինները բացահայտորեն հակադրվել են Լեւոն Տեր-Պետրոսյանի խաղաղության կոնցեպցիային, Ռոբերտ Քոչարյանը՝ Սամվել Բաբայանի ընկերակցությամբ, բացահայտ շանտաժ է արել Տեր-Պետրոսյանին՝ վերջինիս երեսին շարտելով, թե Արցախում են գտնվում մի քանի հազար հայաստանցի զինվոր<sup>17</sup>:

Հայաստանում Ռոբերտ Քոչարյանի նախագահության գինը դարձան բանակցային գործընթացից ԼՂՀ դուրսմղումը եւ Արցախից Հայաստան մի քանի տասնյակ ազդեցիկ ընտանիքների տեղափոխումն ու դարաբաղյան կլանի ստեղծումը: Ռոբերտ Քոչարյանի քաղաքականության հետեանքը դարձավ հայաստանցի-դարաբաղցի անջրպետի առաջացումն ու հայ ժողովրդի երկու հատվածների միջև լարվածության առաջացումն՝ առնվազն կենցաղային մակարդակում:

Ղարաբաղյան շարժումից անցել է արդեն երեսուն տարի, սակայն Արցախը դեռ չի հասել իր վերջնական նպատակին՝ Հայաստանի հետ միավորմանը կամ անկախության միջազգային ճանաչմանը, սակայն երեք տասնամյակն արմատապես փոխեց Քոչարյանի կյանքը: «Մետաքսի» կոմբինատի համեստ պարտկունը մի քանի վերնաշապիկով Հայաստան եկավ՝ իշխանությունից հեռանալով մի քանի միլիարդ դոլարով եւ Աֆրիկայի էկզոտիկ վայրերում որսի զնալու սովորությամբ<sup>18</sup>:

<sup>17</sup> Անվտանգության խորհրդի սույն նիստի մասնակիցների վկայությամբ՝ այս պնդումը նա չի համապարսփանեում իրականությանը:

<sup>18</sup> [in.am/2260476.html](http://in.am/2260476.html). 12.12.2017թ.:

## Միացումից՝ անկախություն, ԼՂՀ-ն՝ միջազգային ճանաչման շեմին (13.12.2017)

Համազգային շարժումը սկսվեց «Միացում» կարգախոսով: Պայքարի սկզբնամասում հասարակությունը ԼՂ հարցը դիտարկում էր պատմական արդարության համատեքստում՝ խնդիր դնելով հասնել Ռուսաստանի կոմունիստական կուսակցության Կովկասյան քյուրոյի 1921թ.-ի հուլիսի 5-ի կամայական որոշման վերանայմանը: ԽՍՀՄ գոյության պայմաններում Հայաստանին ԼՂԻՄ-ի վերամիավորման պահանջը սկզբունքորեն նույնիսկ տրամաբանական էր, որովհետեւ խնդիրն, ըստ էության, դիտարկվում էր միութենական երկու հանրապետությունների միջև տարածքային վեճի համատեքստում: Բացի այդ՝ տրամաբանական չէր լինի ԽՍՀՄ կազմում հայկական երկրորդ միութենական հանրապետություն ստեղծելու պահանջը:

«Միացում» կարգախոսն իր տրամաբանական հանգրվանին հասավ 1989թ.-ի դեկտեմբերի 1-ին, երբ ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը եւ ԼՂԻՄ Մարզային խորհուրդը<sup>19</sup> համատեղ որոշում ընդունեցին՝ Հայաստանին Արցախի վերամիավորման մասին: Խորհրդային իշխանությունը չճանաչեց այս որոշումը, բովանդակային հարթության վրա Հայաստանի հետ վերամիավորելու կուրսից հրաժարվեց նաեւ Արցախը՝ 1991թ.-ի սեպտեմբերին հռչակելով իր անկախությունը, սակայն 1989թ.-ի դեկտեմբերի 1-ի որոշումն իրավաբանորեն չի չեղարկվել մինչ օրս:

Վիճակն արմատապես փոխվեց ԽՍՀՄ փլուզումից հետո, երբ ԼՂ խնդիրն, ըստ էության, դարձրեց երկրի ներքին հարց լինելուց եւ վերածվեց տարածաշրջանային կոնֆլիկտի, որն արդեն գտնվում

<sup>19</sup> Պեզը է լինի՝ Ազգային խորհուրդը: ԼՂԻՄ Մարզային խորհրդի գործունեությունը 1989թ. հունվարի 12-ից ժամանակավորապես կասեցվել էր եւ նրա լիազորությունները փոխանցվել էին Հալոսկ կառավարման կոմիտեին: Իշխանության սահմանադրական մարմնի լիազորությունները վերականգնելու Մոսկվայի խոսքումը չկարարելուց հետո, Մարզի քննչությունը, դրան հակառակ, 1989թ. օգոստոսի 16-ին ստեղծել էր մարզային իշխանության նոր լիազոր մարմին՝ Ազգային խորհուրդ անունով:



էր միջազգային հեղինակավոր կազմակերպությունների ուշադրության կենտրոնում: «Միացում» կարգախոսի իներցիան դեռ շատ ուժեղ էր ու մեծ էր գայթակղությունը ԼՂ-ը հռչակել նորանկախ Հայաստանի մաս: Ինդիքը նույնիսկ միայն կարգախոսային կապվածությունը չէր, այլ նաեւ Սփյուռքի եւ հայկական ավանդական կուսակցությունների՝ հատկապես ՀՅԴ-ի գաղափարական ազդեցությունը, որոնք ԼՂ խնդիրը դիտարկում էին Հայ դատի ու պահանջատիրության համատեքստում: Բարեբախտաբար՝ համազգային շարժման առաջնորդներն, ովքեր ստանձնել էին Հայաստանի իշխանության դեկը, շրջահայաց գտնվեցին եւ ԼՂ խնդրի լուծումը ձեւակերպեցին համաշխարհային համատեքստին համահունչ: Այսպես ծնվեց Արցախի անկախության գաղափարը, որն իրականություն դարձավ խորհրդային օրենսդրությանը համահունչ:

1994-ին մայիսին հրադադարի պայմանագիրը եռակողմ էր, ինչը նշանակում էր ԼՂՀ անկախության փաստացի ճանաչում, մանավանդ, որ ԼՂՀ սուբյեկտությունը շուտով ստացավ միջազգային որոշակի լեգիտիմություն. մինչեւ 1998-ը ԼՂՀ-ն բանակցային գործընթացի լիարժեք մասնակից էր:

Ռոբերտ Քոչարյանի նախագահության շրջանում ԼՂ խնդիրը ենթարկվեց ձեռաչափային ու թուլանդակային վտանգավոր տրանսֆորմացիայի, ինչի հետեանքով պաշտոնական Ստեփանակերտը դուրս մղվեց բանակցային գործընթացից:

ԼՂՀ-ն այսօր էլ չի վերադարձել բանակցային գործընթաց, սակայն այդ հարցն այսօր կորցրել է ակտուալությունը՝ թեկուզեւ այն պատճառով, որ ԼՂ խնդրով թուլանդակային բանակցություններ, ըստ էության, չկան: Բացի այդ, մի շարք օբյեկտիվ եւ սուբյեկտիվ գործոններ վստահաբար թույլ են տալիս պնդել, որ համազգային շարժման 30-րդ տարեդարձը դիմավորում ենք ԼՂ խնդրի համար միանգամայն բարենպաստ միջազգային համատեքստով. Արցախը գտնվում է միջազգային ճանաչման ճանապարհի վրա<sup>20</sup>:

<sup>20</sup> [in.am/2261265.html](http://in.am/2261265.html), 13.12.2017թ.:

## Ինչո՞ւ անկախականները հայտնվեցին համազգային պայքարի լուսանցքում (13.12.2017)

ԽՍՀՄ-ի դիսիդենտական շարժման մեջ հայերն առանցքային դերակատարություն են ունեցել: Պարույր Հայրիկյանի, Ազատ Արշակյանի, Աշոտ Նավասարդյանի, Ստեփան Զատիկյանի, Ռաֆայել Պապայանի, Հայկազ Խաչատրյանի, մյուսների անունները հայտնի են նախկին խորհրդային դիսիդենտական շրջանակներում: 1968-ին ստեղծված Ազգային միացյալ կուսակցությունն ընդհատակյա ամենալուրջ կազմակերպություններից մեկն էր ԽՍՀՄ-ում, Հայրիկյանը 1973-ին շրջանառու է դարձրել մի ծրագիր, որը ենթադրում էր Հայաստանի անկախություն՝ ինքնորոշման ճանապարհով:

Համազգային պայքարի մեկնարկից օրեր անց՝ 1988-ի մարտի 12-ին, Պարույր Հայրիկյանը Մոսկվայում ձերբակալվեց, հունիսին արտաքսեց Եթովպիա, այնտեղից էլ տեղափոխվեց ԱՄՆ, որտեղից Հայաստան վերադարձավ միայն 1990-ի նոյեմբերին:

Սակայն եթե նույնիսկ Հայրիկյանը հայրենիքում լիներ, գրեթե բացառված է, որ նա ստանձներ համազգային շարժման առաջնորդությունը, որովհետեւ Հայաստանում մնացած նրա կողմնակիցները, որոնց թվում՝ լուսահոգի Մովսես Գորգիսյանը, ով վառ անհատականություն էր, շարժման հարթակում եղանակ չէին ստեղծում: Այլախոհական շարժումը, որ կենսունակ էր գտնվել կայսրության դեմ պայքարում, ըստ էության՝ անպատրաստ էր պշխատել հրապարակային դաշտում, հարյուր հազարավոր մարդկանց հետ:

Մյուս կողմից՝ չմոռանանք, որ 1988թ.-ի փետրվար-մարտ ամիսներին մենք գործ ունեինք սովետական Հայաստանի հասարակության հետ, որը քաղաքական իմացության իր մակարդակով, նույնիսկ հոգեբանորեն պատրաստ չէր անկախության գաղափարին: Շարժման առաջին ամիսներին անկախության գաղափարն օբյեկտիվորեն նույնիսկ կարող էր պառակտել մեր հասարակությանը, որովհետեւ կոմունիստական յոթանասունամյա տիրապետություն-

նից հետո համազգային շարժման կոնսոլիդացնող գաղափարը չէր կարող լինել անկախության պահանջը:

Մի հանգամանք էլ կա, որի մասին չենք կարող չխոսել: Բանն այն է, որ նույնիսկ այսօր մեր հասարակության զգալի հատվածը անկախության համար պայքարը նույնացնում է հակառուսականության հետ: Այդ առանցքով մեր հասարակությունը չի կարող կոնսոլիդացվել անգամ այսօր, առավել ես՝ չէր կարող կոնսոլիդացվել 1988-ին: Համազգային շարժումը զարգանում էր խորհրդային ժողովրդավարացման հոսանքի համատեքստում եւ ՀՀ-ի օրակարգում անկախության գաղափարը հաստատուն տեղ գտավ այն բանից հետո, երբ ելցինյան Ռուսաստանի ու գորբաչովյան ԽՍՀՄ-ի հակադրությունը հրապարակ էր բերել Ռուսաստանի սուբյեկտության ձեռքբերման անհրաժեշտությունը:

Այս օբյեկտիվ գործոններին գումարվում է նաեւ Պարոյր Հայրիկյանի գործուն, ում հակասական վարքագիծը ԱԽՄ-ի շուրջ ոչ թե կոնսոլիդացնում էր մարդկանց, այլ նրանց վանում էր անկախության դրոշակակիր կազմակերպությունից<sup>21</sup>:

### Ինչո՞ւ բաժանվեցին Տեր-Պետրոսյանի եւ Վազգեն Մանուկյանի ճանապարհները (16.12.2017)

Համազգային շարժման տարիներին «Ղարաբաղ» կոմիտեի միասնականությունը ֆեռմենալ դրսեւորում ուներ, որովհետեւ դրանում ընդգրկված էին համալսարանական եւ ակադեմիական շերտերը ներկայացնող մտավորականներ, որոնցից յուրաքանչյուրը անհատականություն էր՝ սեփական արժեքային համակարգով ու տեսակետով: Կոմիտեի ֆեռմենները՝ ներքին տոլերանտության բացառիկ դրսեւորումն էր եւ հարցերի տեսական քննարկումը՝ մինչեւ ձեւավորվեր կոնսենսուս:

Երբ 1989-ի նոյեմբերին ձեւավորվեց ՀՀ-ն, վարչության առաջին նախագահ ընտրվեց Վազգեն Մանուկյանը՝ թեեւ արդեն այդ ժամանակ ակնհայտ էր, որ հասարակական վստահության ավելի մեծ ռեսուրս ունի Լեւոն Տեր-Պետրոսյանը<sup>22</sup>: Հենց նա էլ՝ ՀՀ-ի կողմից 1990-ի օգոստոսին առաջադրվեց Գերագույն խորհրդի նախագահի պաշտոնի համար եւ օգոստոսի 4-ին ընտրվեց Հայաստանի ղեկավար՝ չորս լարված քվեարկության արդյունքում հարթելով ՀԿԿ առաջին քարտուղար Վլադիմիր Մովսիսյանին: Օգոստոսի 13-ին վարչապետի պաշտոնում ընտրվեց Վազգեն Մանուկյանը: Չլինե՞ր ՀՀ-ի միասնականությունը՝ հնարավոր չէր լինի լեզավ ճանապարհով իշխանությունից հեռացնել կոմունիստական վերնախավին:

Իշխանություն դարձած ՀՀ-ում առաջին հակասությունները ջրի երես դուրս եկան 1990-ի նոյեմբերին, երբ ԳԽ որոշումներով իշխանությունն, ըստ էության, կենտրոնացավ վարչապետ Վազգեն Մանուկյանի ձեռքերում, ինչը միանշանակ չէր ընդունվում խորհրդարանական մեծամասնության կողմից՝ հատկապես, որ Մանուկյանը կայացրել էր մի քանի վիճահարույց կադրային որոշումներ՝ կառավարության պատասխանատու պաշտոններում նշանակելով կասկածելի անցյալ ու վարք ունեցող մի քանի գործիչների: 1991-ի մայիսից՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ Վազգեն Մանուկյանի կողմնակիցների հակասություններն արդեն հրապարակային ընդթափանցում էին, որովհետեւ վերջիններս դեմ էին կառավարման նախագահական մոդելին անցմանը: Համենայն դեպս, դա էր հակասությունների տեսանելի դրսեւորումը՝ չնայած իրագրել մարդիկ այնպես, որ ՀՀ-ի ներսում Տեր-Պետրոսյան-Մանուկյան զույգի միջեւ պայքար էր սկսվել իշխանության համար: Վազգեն Մանուկյանը 1991-ի հոկտեմբերի 16-ի նախագահական ընտրություններին չմասնակցեց, սակայն անկախության հռչակումից օրեր անց՝ սեպտեմբերի 26-ին հեռացավ վարչապետի պաշտոնից: ՀՀ-ի պառակտման

<sup>21</sup> [in.am/2261796.html](http://in.am/2261796.html). 13.12.2017թ.:

<sup>22</sup> Վազգեն Մանուկյանը մեկ ամիս անց հրաժարվեց ՀՀ վարչության նախագահությունից, եւ այդ պաշտոնում միաձայն ընտրվեց Լեւոն Տեր-Պետրոսյանը:



հետեանքով ստեղծվեց շարժման, այսպես կոչված, երկրորդ մայր կուսակցությունը՝ ԱժՄ-ն:

Համազգային շարժումը՝ միասնական թիմով, իրականություն դարձրեց Հայաստանի ինքնիշխանության հռչակման ու կոմունիստական ռեժիմի տապալման պատմական առաքելությունը, սակայն, ըստ էության, չդիմացավ իշխանության փորձությանը:

Տեր-Պետրոսյան-Մանուկյան կամ ՀՀԵ-ԱժՄ դիմակայությունը, ավաղ, Հայաստանում հանգեցրեց իշխանություն-ընդդիմություն հարաբերությունների անտագոնիստական մոդելի ստեղծմանը, որի պիկը դարձան 1996-ի վիճահարույց նախագահական ընտրությունները եւ դրանց հաջորդած աղմկոտ իրադարձությունները, խորհրդարանի շենքի գրավումը, ձերբակալությունները:

1996-ին շարժման երկու առաջնորդները հասցրել էին քաղաքական տրանսֆորմացիայի ենթարկվել՝ դժբախտաբար, բացասական իմաստով: Լեւոն Տեր-Պետրոսյանը դաշինքի էր գնացել բյուրոկրատական նոմենկլատուրայի հետ՝ չեղարկելով քաղաքական եւ տնտեսական բարեփոխումները<sup>23</sup>, Վազգեն Մանուկյանի հարթակում հայտնվել էին նույնիսկ գործիչներ, ովքեր կողմ էին Հայաստանի միացմանը Ռուսաստան-Բելառուս միությանը:

Լեզենդար կոմիտեի առաջնորդները շատ վատ ծառայություն մատուցեցին Հայաստանի քաղաքական համակարգին՝ 1996-ին հարուցելով իշխանության ճգնաժամ, ինչը 1998-ին հանգեցրեց, ըստ էության, պալատական հեղաշրջման<sup>24</sup>: 1998-ից հետո Տեր-Պետրոսյանն ու Վազգեն Մանուկյանը մղվեցին քաղաքական կյանքի լուսանցք, որովհետեւ անտագոնիզմի ռետուսն, ըստ էության, մսխել էր նրանց թիմերի քաղաքական, կազմակերպչական ռետուսները:

<sup>23</sup> Իրականում բարեփոխումները նույն կերպ շարունակվում էին՝ պայմանավորված նաեւ մեկ փորձի առաջ ընդունված Սահմանադրության պահանջներով:

<sup>24</sup> «Պալատական հեղաշրջման» հետ 1996թ. ընտրությունները կապ չունեին, դա ներ-իշխանական խնդիր էր. հեղաշրջման հեղինակները Հայաստանի իշխանության մի քանի առանցքային պաշտոնյաներ էին եւ Լ.Ղ. ղեկավարությունը, իսկ պարտավորվել էր Ղարաբաղյան հակամարտության կարգավորման խնդիրն էր:

2008-ի վերադարձով Լեւոն Տեր-Պետրոսյանը համազգային շարժման նոր հայտ ներկայացրեց: «Ղարաբաղ» կոմիտեի լուսահոգի անդամ, ակադեմիկոս Ռաֆայել Ղազարյանը նույնիսկ փորձեց հաշտեցնել Լեւոն Տեր-Պետրոսյանին ու Վազգեն Մանուկյանին, իր տանը կազմակերպեց նրանց հանդիպումը<sup>25</sup>: Տեր-Պետրոսյան-Մանուկյան նոր դաշինքը զուցե հաղթանակի բանաձեւ դառնար: Բայց 88-ի շարժման առաջնորդների հաշտությունը տեղի չունեցավ: Դա, թերեւս, իրատեսական չէր՝ ինչպես այն, որ 2008-ին կարող է կրկնվել 88-ի էֆեկտը, երբ Ազատության հրապարակը լուծեց իշխանության հարց<sup>26</sup>:

### Շարժման «Գարունը». Վանոյի ու Վազգենի ֆենոմենը (17.12.2017)

Երեւանում 1967թ.-ից լույս ընծայվող «Գարուն» ամսագիրը հոր-իրդային Հայաստանում սիրվածներից մեկն էր ազատական հայացքներ, մտածողություն ունեցող մտավորականների կողմից: Ինչ-որ իմաստով «Գարունը» նոր խոսքի, նոր մտածողության ձեւավորման հարթակ էր, որտեղ տաղանդավոր գրիչները կարողանում էին ինքնադրսետրովել «իզմ»-երից ու գաղափարական կաղապարներից դուրս՝ Սովետական Հայաստանում ձեւավորելով քաղաքացիական հայացք:

«Գարունը» ավելի սիրված ու պոպուլյար դարձավ համազգային շարժման տարիներին՝ ոչ միայն այն պատճառով, որ 88-ի շունչը նոր թարմություն էր հաղորդել ամսագրին, այլ նաեւ այն հանգամանքով պայմանավորված, որ «Գարունի» երկու հեղինակներ, տաղանդավոր գրողներ Վանո Սիրադեղյանն ու Վազգեն Սարգսյանը

<sup>25</sup> Ռաֆայել Ղազարյանը չհասցրեց կազմակերպել Տեր-Պետրոսյանի եւ Վ. Մանուկյանի հանդիպումը: Այդ հանդիպումը տեղի է ունեցել Սամսոն Ղազարյանի փառը:

<sup>26</sup> [in.am/2263051.html](http://in.am/2263051.html), 16.12.2017թ.:

դարձան 88-ի շարժման ականավոր գործիչներ<sup>27</sup>, որոնց նվիրումը, խենթությունը, ինքնատիպ հայրենասիրությունը շատ դեպքերում բեկումնային դարձավ համազգային պայքարի, Երրորդ հանրապետության համար:

Նույն ակունքից շարժում եկած Վանոյի ու Վազգենի առաքելությունը տարբեր եղավ շարժման տարիներին: Վանո Սիրադեղյանը «Ղարաբաղ» կոմիտեի անդամներից մեկն էր, երեանյան խոսքով ու կոլորիտով օժտված գործիչ, որի խոսքը գերում էր Ազատության հրապարակում հավաքված հարյուր հազարավոր մարդկանց: Վազգեն Սարգսյանը հայկական ոգու նոր դրսեւորումն էր, ով 1989թ.-ի Երասխի ճակատամարտից սկսած՝ դարձավ մեր պատմության հերոսական էջերից մեկի խորհրդանիշը<sup>28</sup>:

Եթե չլիներ Վանոյի խենթությունը, 88-ի շարժումը զրկված կլիներ ոգեղեն, բարոյական շատ կարեւոր բաղադրիչից: Եթե չլիներ Վազգենի խենթությունը, երկրապահությունը չէր դառնա կազմակերպված բանակ:

«Գարունի» տաղանդավոր գրողները դարձան ղարաբաղյան հաղթական պատերազմի կարեւոր ճարտարապետները, որովհետեւ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը՝ զինակիցների հետ միասին, առաջնագծում կերտում էր հաղթանակը, իսկ դրա ապահով թիկունքն ապահովում էր Ներքին գործերի նախարար Վանո Սիրադեղյանը:

Վազգենն ու Վանոն կերպարով նման մարդիկ են. նրանց հանդեպ անտարբեր լինել հնարավոր չէ, նրանց սիրում են կամ ատում, գեղեցիկի ընկալում ունեցողը գնահատում է նրանց տաղանդավոր գրիչը, քաղքենին նրանց մեջ տեսնում է դեսպոտիզմ, անգամ՝ վայրենություն:

Հայաստանը գրեթե միաժամանակ կորցրեց Վազգեն Սարգսյանին ու Վանո Սիրադեղյանին: Հայաստանում հաստատվում էր

<sup>27</sup> Ի տարբերություն Վանո Սիրադեղյանի, ով 1988-ի փետրվարից Շարժման ղեկավար մարմնի մեջ էր, Վազգեն Սարգսյանը 1988-89 թվականներին միայն Շարժման առաջին զօր ակտիվիստներից էր:

<sup>28</sup> Երասխի դեպքերը սկսվել են 1990թ. հունվարի 18-ին եւ փետել մի քանի օր:

Ռոբերտ Քոչարյանի արյունոտ իշխանությունը, որը վերջնականապես հաստատվեց Հոկտեմբերի 27-ով՝ Վազգեն Սարգսյանի ու մյուսների դիակների, Երրորդ հանրապետության կործանման գնով: Հոկտեմբերի 27-ից հետո Վանոն հեռացավ Հայաստանից՝ Վազգենի կորստի ցավը չմարսած, Քոչարյանի իշխանության հերթական դավադիր գնդակի թիրախը դառնալու հեռանկարը կանխելով:

Լավագույն տղերքը հեռանում էին՝ ասպարեզը թողնելով 88-ի արժեքները հոշոտող ուժերին<sup>29</sup>...

### «Ղարաբաղ» կոմիտեի ու Սուրեն Հարությունյանի «պատմական» հանդիպումը (18.12.2017)

Համազգային շարժման խորհրդանշական բեկումնային իրադարձություններից մեկը տեղի ունեցավ 1988թ.-ի մայիսի 28-ին, երբ լուսահոգի Մովսես Գորգիսյանն Ազատության հրապարակում ծածանեց Եռագույնը: Սա իսկապես նշանային իրադարձություն էր, որովհետեւ վկայում էր հասարակական տրամադրությունների բեկումնային փոփոխության մասին<sup>30</sup>: «Միացում», «Լենին, պարտիա, Գորբաչով» կարգախոսներով սկսված համազգային շարժումը լուրջ տրանսֆորմացիա էր ապրել. չորս ամսվա մեջ հասարակությունը կորցրել էր հավատը Մոսկվայի, Հայաստանի կոմունիստական իշխանությունների հանդեպ:

Պատահական չէ, որ հենց մայիսին կոմիտեն ձեւավորվեց հենց այն կազմով, որը հետո դարձավ համազգային շարժման, Երրորդ հանրապետության առաջին իշխանության միջուկը: Նույն մայիս ամսին, բովանդակային առումով, հարստացավ նաեւ շարժման

<sup>29</sup> [in.am/2263438.html](http://in.am/2263438.html). 17.12.2017թ.:

<sup>30</sup> Գորգիսյանի քայլն իսկապես խորհրդանշական ակտ էր: Ինչ վերաբերում է Հասարակական ակտիվության հարցում հասարակական տրամադրությունների բեկումնային փոփոխությանը, ապա դա փետի ունեցավ շար ավելի ուշ, 1989թ. նոյեմբերին կայացած ՀՀ հիմնադիր համագումարից հետո:



օրակարգն՝ իր մեջ ներառելով Հայաստանի ինքնիշխանությանն ու դեմոկրատիզացիային վերաբերող հարցեր: Ազատության հրապարակը դարձել էր Հայաստանի այլընտրանքային իշխանության կենտրոնը: Արդեն ակնհայտ էր, որ Մոսկվան կորցնում էր վերահսկողությունը Հայաստանի, ՀԿԿ-ն՝ փողոցի նկատմամբ: Իշխանության ստորին եւ միջին օղակների հարյուրավոր աշխատողներ, նույնիսկ սովետական միլիցիայի ներկայացուցիչներ միանում էին համազգային շարժմանը:

Սովետական Հայաստանի կոմունիստական իշխանությունների եւ համազգային շարժման ղեկավարների առաջին հրապարակային առերեսումը տեղի ունեցավ 1988թ.-ի նոյեմբերի 7-ին՝ Հոկտեմբերյան հեղափոխության տարեդարձին նվիրված շքերթի ժամանակ: Հանրապետության, այն ժամանակվա՝ Լենինի հրապարակի պատվանդանում Հայաստանի կոմունիստական ռոմենկատուրան՝ առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանի, Գերագույն խորհրդի նախագահ Հրանտ Ոսկանյանի, Նախարարների խորհրդի նախագահ Ֆադեյ Սարգսյանի գլխավորությամբ, դիմավորում էր շարքերով անցնող աշխատավորական կոլեկտիվներին: Սակայն այդ օրը շքերթի դուրս եկած հազարավոր մարդիկ ոչ թե հեղափոխությունն ու Լենինի փառաբանող կարգախոսներ հնչեցրեցին, այլ հասնելով պատվանդանին սկսեցին վանկարկել համազգային պայքարի պահանջները՝ հրապարակ հրավիրելով «Ղարաբաղ» կոմիտեին: Սուրեն Հարությունյանը փորձեց խոսափողով դիմել ալեկոծված մարդկանց, սակայն դա հակառակ էֆեկտն ունեցավ:

Երբ Լեւոն Տեր-Պետրոսյանը ու Վազգեն Մանուկյանը մոտեցան պատվանդանի ներքեւում տեղադրված խոսափողին, մարդիկ նրանց դիմավորեցին ջերմ ծափահարություններով ու «Կոմիտե» վանկարկումներով:

Հարթակում կանգնած էր շվարած ու մոլորված կուսմոմենկատուրան, ներքեւում կոմիտեն էր՝ հասարակության հետ, հասարակության իշխանությամբ օժտված:

Սովետական Հայաստանում փաստացի երկիշխանություն էր: ՀԿԿ-ի իշխանության միակ աղբյուրը Մոսկվան էր, կոմիտեինը՝

հասարակությունը: Խորհրդային Հայաստանում սկսվել էր կոմունիստական իշխանության տապալման գործընթացը<sup>31</sup>:

## Նոյեմբերի 24-ի պատմական որոշումը

(19.12.2017)

Բացարձակապես հիմնազուրկ ու նույնիսկ հակագիտական է այն պնդումը, թե իբր Հայաստանն անկախությունը նվաճել է մեխանիկորեն՝ ԽՍՀՄ փլուզման հետեւանքով: 88-ի համազգային շարժումն ուներ նաեւ հստակ հակակայսերական բնույթ եւ «չարիքի կայսրությունը» կործանող կարեւոր գործոններից մեկն էր:

1988-ի մայիսից՝ շարժման օրակարգում Սովետական Հայաստանի սովերենության պահանջն առանցքային է եղել: Արդեն 1988-ի նոյեմբերի 24-ին, «Ղարաբաղ» կոմիտեի նախաձեռնությամբ եւ ժողովրդի հուժկու ճնշման ներքո, գումարվել է Հայաստանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան<sup>32</sup> եւ որոշվել, որ այսուհետ Հայաստանում կգործեն ԽՍՀՄ միայն այն օրենքները, որոնք կարժանանան հանրապետության ԳԽ հավանությանը: Մոսկվան հակասահմանադրական եւ ապօրինի է համարել այդ նստաշրջանի որոշումները: Նույն գիշերը երեւանում մտցվել է արտակարգ դրություն: Արգելվել են հանրահավաքները, ցույցերը եւ գործադուլները: Ձերբակալվել են Շարժման ղեկավարներից մի քանիսը: Համազգային շարժումը չի թուլացել անգամ 1988-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժից հետո, երբ ձերբակալվեցին «Ղարաբաղ» կոմիտեի անդամները:

1989-ի փետրվարին, ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների ընտրությունների ժամանակ, Հայաստանի բնակչության մեծ մասը միութենական խորհրդարանի պատգամավորների թեկնածու է

<sup>31</sup> [in.am/2263780.html](http://in.am/2263780.html).18.12.2017

<sup>32</sup> Ալվեյի ճշգրիտ՝ Շարժման կոչով, հակառակ իշխանության կամքի, պարզամակորները եկել էին Ազգության հրապարակ, եւ Օպերային թատրոնում հրավիրվել էր ԳԽ նիստը:

առաջադրել «Ղարաբաղ» կոմիտեի ձեռքակալված անդամներին, սակայն նրանցից ոչ մեկը չի գրանցվել: Ի պատասխան դրա, հանրապետության բնակչության մեծ մասը բոլկոտել է պարետային ժամի պայմաններում անցկացվող ընտրությունները եւ շարունակել իր պայքարը «Ղարաբաղ» կոմիտեի անդամների ազատման համար:

Կոմիտեի անդամներն ազատ արձակվեցին 1989թ.-ի ապրիլ-մայիս ամիսներին ու արդեն ակնհայտ էր, որ հաջորդ տարվա Գեղարգույն խորհրդի ընտրություններում ՀՀԸ-ի հաղթանակը գրեթե կանխորոշված է: Թերեւս դա էր պատճառը, որ Մոսկվան 1990-ի հունվարին երասխավանում սադրեց հայ-ադրբեջանական զինված բախում, որի ժամանակ զոհվեցին շարժման երեք նվիրյալներ, այդ թվում՝ ազգային հերոս Մովսես Գորգիսյանը:

Սակայն այս ամենը չկասեցրեց հուժկու համազգային շարժումը, ինչի արդյունքում 1990թ.-ի օգոստոսի 4-ին ԳԽ նախագահ ընտրվեց Լեւոն Տեր-Պետրոսյանը: Կոմունիստական իշխանության տապալումից օրեր անց՝ օգոստոսի 23-ին ընդունվեց Անկախության հռչակագիրը. տրվեց անկախության գործընթացի մեկնարկը:

Հայաստանի հետկոմունիստական իշխանությունն ընտրել էր ԽՍՀՄ կազմից դուրս գալու միանգամայն լեզալ ճանապարհ՝ լրիվ համահունչ միութենական օրենսդրությանը: 1991թ.-ի սեպտեմբերի 21-ի հանրաքվեն նշանակվեց տարվա սկզբին, երբ դեռ Գորբաչովը ԽՍՀՄ-ը նորացնելու փորձ էր կատարում, անկախության հանրաքվեն տեղի ունեցավ սեպտեմբերի 21-ին, երբ ԽՍՀՄ-ը դեռ գոյություն ուներ:

Հայ ժողովուրդն իր անկախությունը նվաճել է համազգային շարժման տարիներին, դարաբաղյան պատերազմում: Հավերժ փառք ու պատիվ ազատության մարտիկներին, վասն հայրենյաց նահատակվածներին<sup>33</sup>:

## Շարժման առաջին ծրագիրը (20.12.2017)

Հայոց Համազգային շարժման հիմնադիր համագումարը տեղի է ունեցել 1989թ. նոյեմբերին, սակայն ՀՀԸ-ն փաստացի ծեսավորվել է 1988թ. օգոստոսի 19-ին՝ Ազատության հրապարակում: ՀՀԸ-ի հիմնական գաղափարախոսներից մեկը՝ Վազգեն Մանուկյանը, Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի անունից այդ օրը Ազատության հրապարակում կայացած հանրահավաքում կարդացել է ՀՀԸ-ի ստեղծման մասին փաստաթուղթը: Վազգեն Մանուկյանի այդ պատմական ելույթում սահմանվում էր նորաստեղծ կուսակցության գաղափարական դիմագիծը՝ նրան արմատապես տարբերելով հայ ավանդական կուսակցություններից: «Հայ ժողովուրդն իր ազգային ծրագրերն իրագործելիս պետք է ապավինի իր ուժերին, հույս չդնի հովանավորության վրա: Ամեն մի հակառակ պնդում ժխտվում է պատմական փորձով եւ ծառայում է մեր ժողովրդին հոգեկան ստրկության մեջ պահելու գործին: Ստրկամտության արտահայտություն է նաեւ այն մտայնությունը, ըստ որի՝ ազգն ունի մշտական բարեկամ եւ մշտական թշնամի: Մենք մերժում ենք անբարոյական եւ մեր ազգի համար անպտուղ այն քաղաքականությունը, որը մի կողմից, իբրեւ «դիվանագիտություն», ենթադրում է հավատարմության անտեղի հավաստիացումներ եւ համաժողովրդական թծնանք այլ ժողովրդի նկատմամբ, մյուս կողմից՝ պահանջում է թշնամություն քարոզել մյուս ժողովուրդների կամ կրոնների դեմ», - պատմական ելույթում ասել է Վազգեն Մանուկյանը:

Այս ելույթը հնչել է մոտ երեսուն տարի առաջ, սակայն դրանում արտահայտված մտքերը, գաղափարները, «երրորդ ուժի բացառման» սկզբունքն արդիական են նաեւ այսօր: Երրորդ հանրապետության առաջին տարիներին Հայաստանի իշխանության արտաքին քաղաքականության հիմքում հենց այս սկզբունքներն էին, ինչի շնորհիվ հայ-ռուսական հարաբերությունները ձերբազատված էին «ավագ եղոր» բարդույթից եւ իրապես ծառայում էին Հայաստանի շահերին: Ավելին՝ հենց այս սկզբունքներն էին ընկած Լեւոն Տեր-Պետրոսյանի «Պատերազմ, թե՛ խաղաղություն. լրջանալու պահը»

<sup>33</sup> [in.am/2264324.html](http://in.am/2264324.html). 19.12.2017թ.:



ծրագրային հողվածի հիմքում, որտեղ ԼՂ խնդրի լուծումը ներկայացվում էր Հայաստանի զարգացման համատեքստում: Սակայն Հայաստանի արտաքին քաղաքականության պրագմատիզմն աստիճանաբար նահանջեց՝ երկրում դեմոկրատական եւ ընտրական ինստիտուտների հետընթացին զուգահեռ:

Ռոբերտ Քոչարյանի իշխանության տարիներին Հայաստանի արտաքին քաղաքականությունն արմատապես շեղվեց Շարժման առաջին ծրագրի փոխտիպայությունից, «Երրորդ ուժի բացառման» սկզբունքից, ինչի հետեւանքով հայ-ռուսական հարաբերությունները ձեռք բերեցին ակնհայտ վասալային բնույթ:

Սերժ Սարգսյանի նախագահության տարիներին իրավիճակն արմատապես չի փոխվել՝ թեեւ Հայաստանի արտաքին քաղաքականությունն ավելի բազմավեկտոր ու դիվերսիֆիկացված է դարձել: 1988թ.-ի օգոստոսի 19-ի ՀՀՀ առաջին ծրագիրը՝ որոշակի ժամանակագրական խմբագրումներով, հայ իրականության ամենաիրատեսական քաղաքական ուղերձն է նաեւ այսօր, մանավանդ, որ համազգային շարժման 30-րդ տարեդարձին ընդառաջ Հայաստանը դարձյալ կանգնած է ապագաղութացման անհրաժեշտության առաջ<sup>34</sup>:

### «Շեփոր Աշոտի» լեգենդը

(21.12.2017)

Ով կպատկերացնե՞ր, որ հին թվացող շեփորից արձակած հնչյունները կարող են միավորել մարդկանց, նրանց մեջ արթնացնել հույզեր: Ղարաբաղյան շարժման հանրահավաքները չէին մեկնարկում առանց Աշոտ Միրզոյանի շեփորի հնչյունների: Նրան բոլորը հենց այդպես էլ անվանում էին՝ «Շեփոր Աշոտ»:

Աշոտ Միրզոյանը համազգային շարժմանը մասնակցել է մեր հարյուր հազարավոր հայրենակիցների նման՝ ինքնաբերաբար: Աշոտը կայքերին տված հարցազրույցներում պատմել է, թե ինչպես 1988թ.-ի

<sup>34</sup> [in.am/2265079.html](http://in.am/2265079.html). 20.12.2017թ.:

փետրվարի 21-ի հանրահավաքում առաջին անգամ հնչեց պատմական շեփորը: Այդ օրը մարդիկ սպասման մեջ էին, որովհետեւ Մոսկվայից եկել էին բարձրաստիճան կուսակցական գործիչներ ու ժողովրդին թվում էր՝ նրանք շատ կարեւոր ասելիք ունեն: Դեռեւս մարդիկ հավատում, սպասում էին Մոսկվայի խոսքին: «Ձգում էի, որ մարդկանց համբերությունը սպառվում է, իրավիճակը թեժանում էր: Կանգնած էի Օպերայի բակի ցայտաղբյուրի մոտ, առաջ շարժվելն անհնար էր: Ճակատագիր էր, թե պատահականություն, բայց շեփորն այդ օրն ինձ հետ էր: Կողքիս կանգնած երեխան նկատեց այն եւ խնդրեց, որ տամ իրեն: Տվեցի եւ նա փորձեց մի քանի հնչյուն արձակել: Դա նրա մոտ հաջող չստացվեց, ինչն առաջացրեց հավաքվածների դժգոհությունը: Իսկ ես գիտեի այդ շեփորի գորությունը, նրա հետ երկար ճանապարհ էինք անցել: Նկատելով ժողովրդի լարվածության աստիճանը եւ ցանկանալով ցրել այդ մթնոլորտը՝ վերցրի շեփորը երեխայի ձեռքից: Առաջին նոտան արձակեցի եւ կարծես զուգահեռ դրան մարդիկ, առանց որեւէ կոչի, բոռնցքները վեր բարձրացրին: Ես նվագում էի, իսկ ամբողջը, մեկ զանգված դառնալով, շարժվեց դեպի Բաղրամյան փողոց՝ Կենտկոմի շենքի մոտ»,- հուզմունքով հիշել է Աշոտը:

Շեփորը դարձավ մեր շարժման խորհրդանիշը, մեր միասնության խտացումը, հաղթանակների ազդարարը, վասն հայրենյաց նահատակներին անմահություն տանող մեղեդին: Շեփորը մեր հոգու կանչն էր, ձգտումների խտացումը:

Շարժումը մեկ այլ խորհրդանիշ էլ ուներ՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթները եզրափակող «Պայքար, պայքար մինչեւ վերջ» կարգախոսը, որը, կարծես, մարմնավորում էր շեփորի հնչյունների հավիտենականությունը՝ միախառնված մեր ժողովրդի նվիրական երազանքների հետ<sup>35</sup>:

<sup>35</sup> [in.am/2265785.html](http://in.am/2265785.html). 21.12.2017թ.:

## Արթուր Մկրտչյանի սպանության առեղծվածը

(21.12.2017)

88-ի համազգային շարժման պաշտոնական մեկնարկ համարվում է փետրվարի 20-ը, սակայն քսերը գիտեն, որ առաջին հանրահավաքը տեղի է ունեցել փետրվարի 12-ին: Ամեն ինչ մեկնարկեց Հաղրութի հանրահավաքից, որի մասնակիցները պահանջեցին Հայաստանի հետ Արցախի վերամիավորումը: Հանրահավաքի կազմակերպիչը Հաղրութի երկրագիտական թանգարանի տնօրեն, իսկ ավելի ուշ ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին նախագահ Արթուր Մկրտչյանն էր:

Թերեա աթե կանգ առնել այս նվիրյալ հայորդու կերպարի վրա, մանավանդ, որ նրա քստմնեյի սպանությունը ցնցեց, առանց չափազանցության, ամբողջ հայությանը:

Արցախյան շարժումն սկսվելուց Արթուր Մկրտչյանը դարձավ նրա ակտիվ մասնակիցը՝ 9 հոգու թվում ստորագրելով առաջին նամակը ԽՄԿԿ Կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար Միխայիլ Գորբաչովին: 1988 թվականի փետրվարի 12-ի Հաղրութի հանրահավաքից մինչև Գերագույն խորհրդի նախագահ ընտրվելը, Արթուր Մկրտչյանի ուղին եղել է սրընթաց: 1992 թվականի հունվարին ԼՂՀ իշխանության ղեկին կանգնեց մի երիտասարդ գործիչ, ով մարմնավորում էր համազգային շարժման ոգին:

Արթուր Մկրտչյանն ընդամենը 32 տարեկան էր, երբ ընտրվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի առաջին նախագահ եւ պաշտոնավարեց ընդամենը 97 օր, երբ քունքին արձակված կրակոցը վերջ դրեց նրա կյանքին:

Արթուր Մկրտչյանի սպանությունն այդպես էլ, ըստ էության, ջրացահայտվեց՝ մնալով առեղծվածային: Արթուր Մկրտչյանը ՀՅԴ-անդամ էր եւ դաշնակցական շրջանակներում տեսակետ է արմատավորվել, որ այս սպանության թիկունքում կանգնած է ՀՀԵ-ն, որը փորձում էր Արցախում եւս իշխանության բերել իր մարդուն: Խոսքը՝ Ռոբերտ Քոչարյանի մասին է, ով իսկապես շուտով ԼՂՀ-ում դարձավ իշխանության տերը՝ սկզբում Պաշտպանության պետական կոմիտեի ղեկավարի, այնուհետեւ՝ նախագահի պաշտոնում:

ՀՅԴ-ն փաստորեն մեղադրում էր Ռոբերտ Քոչարյանին՝ Արթուր Մկրտչյանի դիակի վրայով իշխանության գալու համար: Իհարկե, այս հանգամանքը չիանգարեց, որ ընդամենը վեց տարի հետո ՀՅԴ-ն դառնա Քոչարյանի հայաստանյան արյունոտ իշխանության հիմնական հենարաններից մեկը:

Դժվար է ասել, թե Ռոբերտ Քոչարյանը ինչքանով է առցացվում որեւէ կուսակցության հետ, սակայն փաստ է, որ նրա իշխանությունը թե Հայաստանում եւ թե Արցախում հաստատվել է արյունոտ ահաբեկչությունների հետեանքով: Արցախում՝ դա Արթուր Մկրտչյանի սպանությունն էր, Հայաստանում՝ Հոկտեմբերի 27-ի ոճրագործությունը<sup>36</sup>:

## Համազգային շարժման էկոլոգիական սկիզբը

(23.12.2017)

Մինչև Դարաբաղյան շարժման ծավալվելը Երեւանում տեղի են ունեցել մի քանի քնապահպանական ցույցեր ու հանրահավաքներ: Ըստ էության, մարդիկ առաջին անգամ համակարգի դեմ դուրս են եկել հենց էկոլոգիական պահանջներով ու կարգախոսներով: Ու չնայած այդ հավաքներում չէին հնչում քաղաքական ելույթներ՝ ԽՍՀՄ-ում այդ ակցիաները նույնպես համարվում էին այլախոսության դրսեւորում: Բարձրածայնվող խնդիրները հիմնականում կապված էին «Նաիրիտ» գործարանի, Մեծամորի ատոմակայանի, Արարատյան դաշտավայրում կառուցվելիք ռադիոակտիվ թափոնների գերեզմանոցի հետ:

Դեռ 1985թ. վերջում ստեղծվել էր «Գոյապահպանություն» կազմակերպությունը, հետագայում դրա հիմքի վրա ծեւավորվեց «Կանաչների միությունը»:

«Չորս հոգով էինք՝ Կարինե Դանիելյանը, Խաչիկ Ստամբոցյանը, Կարեն Սիմոնյանը եւ ես», - իր հիշողություններով կիսվել է Հակոբ Սանասարյանը: Շարժման ակտիվիստները նամակներ էին

<sup>36</sup> [in.am/2266552.html](http://in.am/2266552.html). 21.12.2017թ.:



ուղարկում ոչ միայն ՀԽՍՀ ղեկավարությանը, այլ նաև Մոսկվա՝ պահանջելով պահպանել օրենքները, նորմատիվները, բարելավել էկոլոգիական վիճակը:

«Մեր կազմակերպած առաջին ցույցը տեղի ունեցավ 1987թ. սեպտեմբերի 1-ին: Մոտ 300 հոգով հավաքվել էինք «Նաիրիտի» առջև: 10 հոգու ներս հրավիրեցին, զրուցեցինք գործարանի տնօրենի հետ: Կարծես թե ընդհանուր հայտարարի եկանք, հաջորդ օրը քննարկումները պետք է շարունակվեն, սակայն հանդիպումը տեղի չունեցավ, մեզ խաբեցին: Հետագայում ստորագրահավաք կազմակերպեցինք՝ պահանջելով «Նաիրիտի» փակումը: Շուրջ 3 հազար ստորագրություն էինք հավաքել, սակայն որոշ մարդիկ միտումնավոր «կորցրեցին» այդ թղթերը»,- իր հարցազրույցներում պատմել է Հակոբ Սանասարյանը:

1987 թվականին «Երեանին՝ մաքուր օդ» կարգախոսով քայլեր թ է կազմակերպվել, որը մեկնարկել է Մանկավարժական ինստիտուտի մոտից եւ ավարտվել է Ազատության հրապարակի հանրահավաքում, որտեղ ելույթներ են ունեցել նաև բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը, ակադեմիկոս Ռաֆայել Ղազարյանը, սակայն քաղաքական ելույթներ չեն հնչել:

Կարինե Դանիելյանը հարցազրույցներից մեկում պատմել է, որ 1988թ. փետրվարին արժվանցիները ոտքով եկել են Երեան: Ցուցարարները բողոքել են Արժվանում ամինաթթուների արտադրության գործարանի կառուցման դեմ: Սա, ըստ էության, բնապահպանական վերջին ցույցն էր, որովհետև 88-ի փետրվարին մեկնարկեց Ղարաբաղյան շարժումը՝ իր մեջ ներառելով նաև էկոլոգիական պահանջները<sup>37</sup>:

<sup>37</sup> [in.am/2267401.html](http://in.am/2267401.html). 23.12.2017թ.:

## Թե ինչպես Մոսկվան արյուն թափեց Երեանում (23.12.2017)

1990թ.-ի մայիսի 20-ին տեղի ունեցավ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրությունների առաջին փուլը: Սովետական ընտրական օրենսդրությունը ենթադրում էր միայն մեծամասնական ընտրություններ՝ չնայած 1990-ի ընտրություններում արտացոլվեց փաստացի երկիշխանության ամբողջ պատկերը. բոլոր ընտրատարածքներում ՀԿԿ-ի թեկնածուների դեմ առաջադրվել էին ՀՀԸ թեկնածուներ: Ընտրությունների առաջին փուլից հետո ակնհայտ էր, որ համազգային շարժման թեկնածուները համոզիչ հաղթանակ են տանում: Կանխատեսելի էր, որ ընտրությունների երկրորդ փուլից առաջ Մոսկվան դիմելու է սադրանքի՝ ՀՀԸ հաղթանակը կանխելու համար:

Այդ օրերի մամուլի, մասնավորապես՝ «Հայք» շաբաթաթերթի օգնությամբ վերականգնել ենք Մոսկվայի արյունոտ սադրանքի ժամանակագրությունը:

Մայիսի 22-23-ին Հայաստանի բոլոր ղեկավարները՝ ՀԿԿ Կենտրոնի առաջին քարտուղար Վլադիմիր Մովսիսյանը, Գերագույն խորհրդի նախագահ Հրանտ Ոսկանյանը եւ նախարարների խորհրդի նախագահ Վլադիմիր Մարգարյանը կանչվում են Մոսկվա: Մայիսի 23-ի երեկոյան Ստեփանակերտում չպարզված հանգամանքներում սպանվում է 17-ամյա մի հայ պատանի: Մայիսի 24-ի առավոտյան Բաքվից Ստեփանակերտ ժամանած մի հանձնաժողով անօրինական ստուգումներ է կատարում քաղաքի բնակացրանկում, առիթ տալով բնակիչների զայրույթին եւ ներքին զորքերի ստորաբաժանումների ու քաղաքացիների բախմանը: Նույն օրը երեկոյան եւ հաջորդ օրվա լույս գիշերը ներքին զորքերի ստորաբաժանումները զրահամեքենաներով եւ ավտոմատային հրաձգությամբ լայնածավալ ահաբեկչական գործողություն են ձեռնարկում Ստեփանակերտի փողոցներում, որի հետեանջով զոհվում է մեկ եւ վիրավորվում 9 մարդ: Պատասխան կրակից սպանվում է նաև մեկ եւ վիրավորվում 4 զինվոր:

Մայիսի 26-ի երեկոյան խորհրդային պրոպագանդայի հրետանին՝ «ժամանակ» հեռուստատեսային ծրագիրը տարածում է սադրիչ հաղորդագրություններ, թե իբր նախորդ օրվա Երեանի հանրահավաքում հնչել են հակասահմանադրական գործողությունների դիմելու կոչեր, որոնց հետեանըրով Հայաստանում սպասվում են լուրջ իրադարձություններ: Փորձված ձեռագրով Մոսկվան նախապատրաստում էր իր սադրանքի ինֆորմացիոն հիմքերը:

Մայիսի 27-ի առավոտյան Երեանի երկաթուղային կայարանում լուրջ բախում է տեղի ունենում երկաթուղու զինվորական պահակախմբի եւ աշխարհագրային ջոկատի միջեւ, որի հետեանըրով զոհվում է վեց քաղաքացի եւ վիրավորվում տաս զինվոր: Կայարանն անմիջապես շրջապատվում է զրահապատ մեքենաներով եւ ներքին զորքերի հոծ շղթայով: Աշխարհագրի եւ հասարակական-քաղաքական կազմակերպությունների ակտիվիստների միջամտության շնորհիվ միջադեպը հաջողվում է տեղայնացնել եւ զսպել կրքերը: Կայարանամերձ հրապարակից հեռանալուց հետո զինվորականները, ստեղծելով լարվածության նոր օջախ, շրջապատում են Էրեբունի թաղամասի հիվանդանոցի դիահերձարանը, ուր տեղափոխվել էին զոհվածների մարմինները: Ձորքերի համալրումը խոչընդոտելու նպատակով զինված երիտասարդների մի խումբ փորձում է փակել Նուբարաշեն-Երեան խճուղին: Ջրահապատ մեքենաները ճեղքում են շրջափակումը եւ, թափանցելով Էրեբունի թաղամաս, անկանոն կրակ են բացում քնակելի շենքերի վրա, որի հետեանըրով զոհվում է 17 եւ վիրավորվում շուրջ 40 քաղաքացի: Բախման ընթացքում զոհվում է նաեւ մեկ սպա: Էրեբունի թաղամասում տեղի ունեցող արյունայի միջադեպի ընթացքում եւ դրանից հետո էլ երկու զրահապատ մեքենա ակնհայտորեն սադրիչ նպատակով սուրում են Երեանի կենտրոնական փողոցներում՝ հավանաբար պատրվակ փնտրելով ընդարձակելու միջադեպի սահմանները: Միայն համազգային շարժման առաջնորդների խոհեմության շնորհիվ հնարավոր եղավ կանխել ավելի մեծամասշտաբ արյունահեղությունը:

1990թ.-ի մայիսի 23-28-ին, Մոսկվայի կոմունիստական իշխանությունը՝ Երեանի իր դրածոների լուռ համաձայնությամբ, հայ ժողովրդի դեմ կատարել է հրեշավոր ոճրագործություն, որին զոհ է գնացել 27 եւ վիրավորվել շուրջ 60 մարդ:

Սակայն Մոսկվայի սադրանքը<sup>38</sup> չազդեց հայ ժողովրդի վճռականության վրա եւ հունիսի 4-ին՝ Գերագույն խորհրդի ընտրությունների երկրորդ փուլում, ՀՀԵ-ի հաղթանակն ավելի ամրապնդվեց: Երկու ամիս անց՝ օգոստոսի 4-ին, կոմունիստական իշխանությունը Հայաստանում տապալված էր<sup>39</sup>

### Սերոբիչը նեղացավ, Սուրեն Հարությունյանին չընդունեցին, Մովսիսյանը պարտվեց (24.12.2017)

ԽՍՀՄ մի շարք հանրապետություններում՝ կայսրության քայքայմանը զուգահեռ, տեղական կուսակցական էլիտաները տրանսֆորմացվեցին ազգային էլիտաների՝ դառնալով միութենական հանրապետությունների անկախության շահառուներ: Հայաստանում կուսնոմենկլատուրայի նման տրանսֆորմացիա գործնականում հնարավոր չէր կամ, եթե նույնիսկ տեսական նման հեռանկար կար, այն չեղարկվեց 1988-ի մայիսին, երբ Կարեն Դեմիրճյանը լքեց ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնը:

Կոմունիստական նոմենկլատուրան ընդունակ չէր կառավարել հարյուր հազարավոր մարդկանց վարքագիծը, երբ նրանք հաղթահարել էին սովետական բարդույթը եւ Ազատության հրապարակում կայանում էին՝ որպես քաղաքացիներ, ովքեր վերագտել են իրենց ազատությունն ու արժանապատվությունը: Իհարկե, Կարեն Դեմիրճյանը պրոպոպար ղեկավար էր, սակայն նա՝ մի կողմից, անհաղթահարելի հակասություններ ուներ Միխայիլ Գորբաչովի հետ,

<sup>38</sup> Այդ իրադարձությունների մասին ավելի մանրամասն տե՛ս Լ. Տեր-Պետրոսյանի «Մոսկվայի ոճրագործ սադրանքը» հոդվածը (Ընտրանի, Երեան, 2006, էջ 93-96):

<sup>39</sup> [in.am/2267829.html](http://in.am/2267829.html), 23.12.2017թ.:



մյուս կողմից՝ չկարողացավ հաղթահարել կուսակցական առաջնորդի բարդույթը եւ կանգնել համաժողովրդական շարժման կողքին:

Դեռեւս 1986թ.-ից ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահի առաջին տեղակալ էր նշանակվել 1978-ից ԽՄԿԿ կենտկոմի ապարատում տարբեր պաշտոններ զբաղեցրած Սուրեն Հարությունյանը: Կուսակցական էլիտայում տարածված վարկածի համաձայն՝ նա Մոսկվայից գործուղվել էր՝ Սերոբիչին փոխարինելու համար:

Այդպես էլ եղավ. Սուրեն Հարությունյանը 1988-ի մայիսին դարձավ Կենտկոմի առաջին քարտուղար: Նա ի սկզբանե չընդունվեց ժողովրդի կողմից: Հասարակությունը սիրում էր Դեմիրճյանի արժանապատիվ կերպարը, իսկ Սուրեն Հարությունյանն ուներ Մոսկվայի «փոխանորդի» իմիջ: Հետո՝ Հայաստանում արդեն հաստատվել էր երկիշխանություն, եւ ժողովուրդը կառավարվում էր ոչ թե Մոսկվայի ու նրա տեղական դրածոների, այլ՝ «Ղարաբաղ» կոմիտեի կողմից:

1990թ.-ի ապրիլին՝ Գերագույն խորհրդի ընտրություններից մեկ ամիս առաջ, Սուրեն Հարությունյանը հրաժեշտ տվեց իր պաշտոնին՝ դիվանագիտական ծառայության անցնելու պատրվակով:

Գորբաչովի շրջապատը, մեծ իմաստով, կորցրել էր աղետկատությունը, սակայն ոչ այն աստիճանի, որ չգիտակցեր Հայաստանում իշխանությունը կորցնելու անխուսափելիությունը: 1990-ի ապրիլին ՀՀԿ առաջին քարտուղար դարձավ Վլադիմիր Մովսիսյանը: Վերջինս գորշ բյուրոկրատ էր, պոտենցիալ պարտվող: Այդպես էլ եղավ՝ Հայաստանում ՀԿԿ-ն իշխանությունը կորցրեց նրա «գեներալության» շրջանում<sup>40</sup>:

<sup>40</sup> [in.am/2268291.html](http://in.am/2268291.html), 24.12.2017թ.:

## Ո՞վ պատվիրեց Համբարձում Գալստյանի պանությունը

(26.12.2017)

Գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու Համբարձում Գալստյանը համազգային շարժման առանցքային դեմքերից մեկն էր: Նա «Ղարաբաղ» կոմիտեի այն անդամներից մեկն էր, ով համեմատաբար քիչ էր խոսում հանրահավաքի հարթակից, սակայն կոմիտեում ահռելի աշխատանք էր տանում՝ հատկապես արտաքին հարաբերությունների ուղղությամբ: Համբարձում Գալստյանի այս շրջանի կենսագրությունը հար եւ նման էր «Ղարաբաղ» կոմիտեի մյուս անդամների կենսագրությանը. նա նույնպես 1988-ի դեկտեմբերից մինչեւ 1989-ի մայիսն անցկացրեց Մոսկվայի Բուտիրյան բանտում, որտեղ գրել է իր առաջին ժողովածուն՝ «Չուղարկված նամակները»:

ՀՀԸ-ի հաղթանակից հետո՝ 1990-ի դեկտեմբերին, Համբարձում Գալստյանը ղեկավարեց Երեւանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեն: Քաղխորհրդի նախագահի պաշտոնում նրա պաշտոնավարումը հակասական էր՝ հեղափոխության շունչը զուգակցվում էր կոռուպցիոն դրսեւորումների հետ: Շուտով Գալստյանի դեմ քաղաքային խորհրդում լուրջ ընդդիմություն ձեւավորվեց, նաեւ՝ ՀՀԸ անդամների շրջանակից: 1992-ի սկզբին Համբարձում Գալստյանը հրաժարական տվեց, ասում են՝ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հորդորով<sup>41</sup>: Այնպիսի տպավորություն էր, որ Գալստյանը հեռացել է նեղացած, որովհետեւ նա այլեւս չէր ասոցացվում ՀՀԸ-ի եւ իշխանության հետ եւ զբաղված էր բիզնեսով՝ հիմնադրելով «Տիեզերք» ՍՊԸ-ն:

1994թ.-ի դեկտեմբերի 17-ին դավադիր կրակոցները խլեցին Համբարձում Գալստյանի կյանքը: Նա «Ղարաբաղ» կոմիտեի 11 անդամներից առաջինն էր, որ հրաժեշտ տվեց երկրային կյանքին: Ոմանք

<sup>41</sup> Համբարձում Գալստյանը հրաժարական չի տվել, այլ պաշտոնից ազատվել է Երեւանի քաղխորհրդի եւ ՀՀ Գերագույն խորհրդի նախագահության օրինական ընթացակարգով:

պնդում էին, որ Համբարձում Գալստյանի սպանության պատճառը եղել է նրա բիզնես գործունեությունը, որը խանգարել է իշխանության վերնախավին: Իշխանությունները սպանության հետքերը տանում էին ՀՅԴ-ի ուղղությամբ:

Համբարձում Գալստյանի սպանությունը խորհրդանշական այն իրադարձությունն էր, որը ազդարարեց «Ղարաբաղ» կոմիտեի բարոյական անկումը: Համբարձում Գալստյանը սպանվեց Լեւոն Տեր-Պետրոսյանի և Վազգեն Մանուկյանի կողմնակիցների փոխադարձ անհանդուրժողականության ֆոնին: Համբարձումի մահն ավելի խորացրեց անջրպետը նախկին զինակիցների միջև:

Հայաստանում սկսվել էր անշրջելի նահանջը 88-ի արժեքների<sup>42</sup>:

### «ՀՀ-ի առաջին «ուրացումը»

(27.12.2017)

Մինչ մերձբայության երկրները գնում էին լյուստրացիայի ճանապարհով՝ նոր իշխանությունները հեռու պահելով սովետական նոմենկլատուրայի քաղաքական և կադրային ժառանգությունից, 1990-ի օգոստոսի 4-ին Գերագույն խորհրդի նախագահի ընտրություններում Լեւոն Տեր-Պետրոսյանը ՀԿԿ թեկնածու Վլադիմիր Մովսիսյանի հանդեպ հաղթանակ տարավ միայն չորրորդ քվեարկության արդյունքում, ընդ որում՝ կոմկուսի գծից շեղված մի քանի պատգամավորների աջակցությամբ: Այդ աջակցության դիմաց՝ ՀԿԿ Կենտկոմի անդամ Գագիկ Հարությունյանը դարձավ Գերագույն խորհրդի նախագահի տեղակալ<sup>43</sup>: Այս փաստը շատերը համարում են ՀՀ-ի «ուրացման» առաջին ակտը, որովհետև իրականում Լեւոն Տեր-Պետրոսյանի հաղթանակը պայմանավորված էր փողոցի

աննախադեպ աջակցությամբ, սակայն նոր իշխանությունը կոմպրոմիսի գնաց կուսնոմենկլատուրայի մի հատվածի հետ:

Ժամանակը ցույց տվեց, որ կոմֆորմիզմը Լեւոն Տեր-Պետրոսյանի իշխանության հիմնական հատկանիշներից մեկն է: 1995-ին Տեր-Պետրոսյանի քաղաքական թիմը կոմպրոմիսի գնաց նոմենկլատուրայի հետ՝ Սահմանադրությունն ընդունելու նպատակով: Հենց այդ ժամանակ էլ՝ քաղաքական, տնտեսական բարեփոխումներն իրենց տեղը զիջեցին պետական կապիտալիզմին: Նույն քաղաքական կոմֆորմիզմը հանգեցրեց 1996-ի նախագահական ընտրություններին հաջորդած իշխանության ճգնաժամին, ինչը հանգեցրեց 1998-ի պալատական հեղաշրջմանը, որի հետեանքով տեղի ունեցավ ոչ միայն հրաժարում 88-ին արժեքներից, այլ նաեւ՝ օտարում Երրորդ հանրապետությունից:

Սակայն վերադառնանք 1990թ.-ի հայտնի օրերը, երբ Տեր-Պետրոսյանի թիմն այլևսի գնաց կուսնոմենկլատուրայից վերջին պահին պոկված բեկորի հետ: Լեւոն Տեր-Պետրոսյանի մտածված կամ սխտուստիվ քայլի հետեանքով Գագիկ Հարությունյանը դարձավ Երրորդ հանրապետության ամենատանջքային գործիչը՝ խորհրդանշելով համազգային շարժման իդեալների ուրացման փաստը: Գագիկ Հարությունյանի ֆենոմենը բացահայտում է, որ Տեր-Պետրոսյանի իշխանության արդեն արշալույսին Հայաստանի քաղաքական կյանքում երկրորդ պլան մղվեցին գաղափարներն ու իդեալները: Անցած երեսուն տարիներին Գագիկ Հարությունյանի համակարգային կենսունակությունը բացահայտում է 88-ի շարժման արժեքների ինստիտուցիոնալ չկայացվածությունը:

Շարժման տղերքը նոմենկլատուրայի հետ դաշինք կազմեցին իրենց իշխանության հենց առաջին օրերին՝ խլացնելով փողոցից տակավին լավոր «Պայքար, պայքար մինչև վերջ»-ը<sup>44</sup>:

<sup>42</sup> [in.am/2268946.html](http://in.am/2268946.html), 26.12.2017թ.:

<sup>43</sup> Անճշտություն է. Գ. Հարությունյանը չի եղել Տեր-Պետրոսյանի ընտրությանն աջակցություն ցուցաբերած կոմունիստ պատգամավորների շարքում:

<sup>44</sup> [in.am/2269712.html](http://in.am/2269712.html), 27.12.2017թ.:



## **Հայաստանի եւ Արցախի վերամիավորման ամերիկյան հետքը** (28.12.2017)

1989թ.-ի դեկտեմբերի 1-ին Հայաստանի ԽՍՀ Գերագույն խորհուրդը եւ Արցախի Ազգային խորհուրդը համատեղ նիստում Հայաստանի եւ ԼՂԻՄ-ի վերամիավորման որոշում են ընդունում: Իհարկե, վերամիավորման պահանջը համազգային շարժման հիմնական կարգախոսն էր եւ 1988-ի փետրվարից ընթացող գործընթացի տրամաբանական հանգրվանը: Այս իմաստով 1989թ.-ի դեկտեմբերի 1-ի Հայաստանի ԽՍՀ Գերագույն խորհրդի եւ Արցախի Ազգային խորհրդի համատեղ որոշման հիմնական շահառուն հայ ժողովուրդն է: Մյուս կողմից՝ համազգային շարժման ուժը կայանում էր հենց նրանում, որ նա ձեւավորում էր օրակարգ՝ համաշխարհային համատեքստին ու զարգացումներին ներդաշնակ:

Դեկտեմբերի 1-ի պատմական որոշմանը նախորդած իրադարձությունների կարճ ժամանակագրությունը հուշում է, որ Հայաստանի ու Արցախի վերամիավորման ակտիւն մեծապես նպաստել է ԱՄՆ Սենատում կայացված կարեւոր մի որոշում: 1989թ. նոյեմբերի 19-ին ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովն ընդունում է բանաձեւ, որում ԽՍՀՄ ղեկավարությանը կոչ էր արվում հակամարտությանը տալ այնպիսի լուծում, որը կարտահայտեր մարզի հայ մեծամասնության կամքը:

Իհարկե, Մոսկվան կոշտ արձագանքեց Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի որոշմանը՝ այն համարելով ամերիկյան միջամտություն ԽՍՀՄ ներքին գործերին: Սակայն սա բարենպաստ միջազգային համատեքստ էր, որպեսզի համազգային շարժման պահանջով 1989թ.-ի դեկտեմբերի 1-ին Հայաստանի ԽՍՀ Գերագույն խորհուրդը եւ Արցախի Ազգային խորհուրդը վերամիավորման որոշում ընդունեցին<sup>45</sup>:

<sup>45</sup> Դեկտեմբերի 1-ի վերամիավորման որոշումը նախապարտադրվում էր անկախ դրանից: Նման որոշման գաղափարը րվել էր Լեւոն Տեր-Պետրոսյանը 1989թ.

Դեկտեմբերի 1-ի որոշումն այդ պահի պատմական լուծումն էր, որը ներդաշնակ էր մեր ժողովրդի ցանկություններին եւ համաշխարհային համատեքստին: ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանի եւ Արցախի վերամիավորման որոշումը կորցրեց իր ակտուալությունը, որովհետեւ Արցախը, օգտվելով կայսրության փլուզումից, հռչակեց իր անկախությունը՝ ԽՍՀՄ օրենսդրությանը համահունչ: Չնայած այն հանգամանքին, որ Արցախն անկախ պետություն է, սակայն դեկտեմբերի 1-ի որոշումը չի չեղարկվել՝ թերեւս այն պատճառով, որ ԼՂՀ պետականության կայացումը չի հակադրվում պատմական որոշման տրամաբանությանը<sup>46</sup>:

## **Շանթի հացադուլ** (29.12.2017)

Համազգային շարժման ոչ բոլոր փուլերն են հարթ ու սահուն անցել: Փետրվարյան հուժկու հանրահավաքներից հետո շարժման հարթակում ակնհայտ ճգնաժամ էր, անգամ հակասություններ էին առաջացել շարժման առաջին փուլի ղեկավարներ Վաչե Սարովյանյանի եւ Իգոր Մուրադյանի միջեւ: Մինչեւ մայիս ամիսը՝ «Լարաբադ» կոմիտեի համալրումը, Ազատության հրապարակում որոշակի բովանդակային վակուում էր, որը ուսանողական տարբեր կիմբեր լցնում էին նստացույցերով՝ ամենատարբեր պահանջներով:

ՀԽՍՀ Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանը, որտեղ պետք է քննարկվեր ԼՂԻՄ վերամիավորման հարցը<sup>47</sup>, նշանակված էր հունիսի 15-ին: Դրան ընդառաջ տեղի ունեցավ համազգային

նոյեմբերի 13-ի հանրահավաքային ելույթում (որպես թոուցիկ փարածված՝ «Արցախյան խնդրի լուծման ուղին» վերնագրով, - Ընկրտակ, էջ 33-36):

<sup>46</sup> [in.am/2270330.html](http://in.am/2270330.html) 28.12.2017թ.:

<sup>47</sup> Ալեյի ճշգրիտ՝ պարասխանելու ԼՂԻՄ մարզխորհրդի՝ փետրվարի 20-ի որոշմամբ ՀԽՍՀ Գերագույն խորհրդին ուղղված դիմումին: Գերագույն խորհրդի նախապես հայտարարված նպաշրջանի օրակարգում այդ հարցը չկար: Այն օրակարգ մտավ Շարժման նախաձեռնությանը 121 պարզամավորներից հավաքած համապարասխան միջնորդագրերի պահանջով:

շարժման առաջին հացադուլը՝ Շանթ Հարությունյանի նախաձեռնությամբ եւ եւս հինգ ընկերների մասնակցությամբ: Շանթին այցելում էին եւ հացադուլը դադարեցնելու հորդոր էին անում միանգամից երեք ազդեցիկ խմբեր՝ համազգային շարժման ղեկավարությունը, մտավորականները, կուսակցական ղեկավարությունը:

«Ղարաբաղ» կոմիտեի անդամ Ռաֆայել Ղազարյանը հանրապետության անունից Շանթին կոչ արեց՝ դադարեցնել հացադուլը: Իրապարակում հավաքված բազմությունը պաշտպանեց կոմիտեի առաջարկը, սակայն Շանթը բարձրացավ հարթակ եւ ելույթով քննադատեց շարժման ղեկավարների պահվածքը, մասնավորապես հայտարարեց, որ ստալինյան վախի հոգեբանությամբ անձինք իրավունք չունեն առաջնորդելու շարժումը: Հունիսի 4-ից մտավորականներից բաղկացած խմբեր սկսեցին այցելել հացադուլավորներին:

Միեր Մկրտչյանը, Սարգիս Մուրադյանը, Սոս Սարգսյանը, Սիլվա Կապուտիկյանը, Վահագն Դավթյանը, Համո Սահյանը, Վիկտոր Համբարձումյանը այցելեցին Ազատության իրապարակ, բայց անկարող եղան համոզել Շանթ Հարությունյանին եւ մյուս հացադուլավորներին: Այդ օրերին են ծնվել Վահագն Դավթյանի բանաստեղծական տողերը նվիրված Շանթ Հարությունյանին. «Որտեղից եկար, որտեղից ելար, դու Շանթ անունով մի շանթ պատանի, թող քո աչքերի փայլը խելագար անարդարության դատաստանն անի...»:

Հունիսի 12-ին Շանթ Հարությունյանը եւ մյուսները դադարեցրեցին հացադուլը՝ հունիսի 15-ի նստաշրջանի ընթացքի վերաբերյալ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանի հավաստիացումներից հետո: Շանթ Հարությունյանը հացադուլը դադարեցնելու մասին հայտարարեց հարթակից, որտեղից առաջին անգամ խոսվեց Նժդեհյան ցեղակրոնության եւ այն մասին, որ շարժումը ոչ թե դարաբաղյան է, այլ ազգային-ազատագրական:

Դատելով հետագա տարիների իրադարձություններից՝ կարելի է արձանագրել, որ իր կենսագրության տարբեր փուլերում Շանթ Հարությունյանն՝ ունենալով մինիմալ ռեսուրսներ, արձանագրել է առավելագույն արդյունքներ: Վերջին չորս տարիների ընթացքում իշխանության տապալման մեղադրանքով ձերբակալված հինգ խմբերից

Շանթ Հարությունյանի խումբը միակն էր, որ 2013-ի նոյեմբերին դուրս էր եկել իրապարակային քաղաքական պայքարի՝ հստակ պահանջներով ու գաղափարներով: Մեծ հաշվով՝ 2013-ի նոյեմբերին Շանթն ու նրա ընկերները հայտնվեցին կազմակերպված սադրանքի թակարդում, սակայն դատավարությունն արդյունավետ օգտագործեցին՝ իրենց գաղափարները տարածելու նպատակով<sup>48</sup>:

### **Թե ինչպես «բարեփոխական» Գորբաչովը դարձավ հայ ժողովրդի աչքի «գրողը»** (29.12.2017)

1988թ.-ի փետրվարի 20-ին ԼՂԻՄ ժողպատգամավորների մարզխորհուրդն արտակարգ նստաշրջանում միահամուտ ընդունել է հետեյալ որոշումը. «Ընդառաջելով ԼՂԻՄ-ի աշխատավորների ցանկություններին՝ խնդրել Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին ու Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդին՝ խորն ըմբռնման զգացում դրսևորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերի նկատմամբ եւ լուծել ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ կազմ հանձնելու հարցը, միաժամանակ միջնորդել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առջեւ՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ կազմ հանձնելու հարցի դրական լուծման համար»: Շարժման մեկնարկին նույնիսկ Հայաստանի եւ Արցախի հասարակությունները պատրանքներ են ունեցել, որ Վերակառուցման ճարտարապետ Միխայիլ Գորբաչովը կընդառաջի հայ ժողովրդի խնդրանքին, մանավանդ, որ ազգերի ինքնորոշման սկզբունքը գերակա էր համարվում ԽՍՀՄ Սահմանադրության մեջ: Սակայն 1988-ի փետրվարի 26-ին Հայաստանի եւ Ադրբեջանի ժողովուրդներին դիմել է ԽՄԿԿ ԿԿ գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովը՝ անդամ մի կոչով, որը փաստորեն ազդակ հանդիսացավ, որ փետրվարի 27-29-ին Սումգայիթում կազմակերպվի հայերի ջարդ, որի զոհ են դարձել բազմաթիվ մարդիկ: Առաջին անգամ մեր

<sup>48</sup> [tin.am/2270931.html](http://tin.am/2270931.html). 29.12.2017թ.:



հասարակության մոտ փշրվեցին պատրանքները խորհրդային ղեկավարության արդարամտության վերաբերյալ:

ԽՍՀՄ ղեկավարությունը՝ Գորբաչովի գլխավորությամբ, միտումնավոր ծեսախեղում էր Արցախյան խնդրի թովանդակությունը՝ տպավորություն ստեղծելով, որ հուզումները սոցիալ-տնտեսական պրոբլեմների հետեանք են: 1988-ի մարտի 24-ին ԽՄԿԿ ԿԿ եւ ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը համատեղ որոշում ընդունեցին ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական զարգացման արագացման վերաբերյալ: Նախատեսվում էր 1988–95-ի ընթացքում իրագործել մի շարք միջոցառումներ մարզի արդյունաբերության, սպասարկման ոլորտի, ժողկրթության եւ այլ բնագավառների հետագա զարգացումն ապահովելու համար: Միության ղեկավարությունը, այսպիսով հիմնական ուշադրությունը բեռնելով սոցիալ-տնտեսական խնդիրների վրա, փորձում էր շրջանցել խնդրի քաղաքական լուծման անհրաժեշտությունը: Գորբաչովը միտումնավոր էր ԼՂ խնդիրը ներկայացնում տնտեսական համատեքստում, որովհետեւ գիտակցում էր, որ դրա զարգացումը կարող է հանգեցնել ԽՍՀՄ փլուզմանը:

Հայաստանի ժողովուրդն այնքա հակված չէր հանդուրժել Կենտրոնի երկդիմի եւ ցինիկ քաղաքականությունը: Համաժողովրդական շարժման ճնշման տակ 1988-ի հունիսի 15-ին ՀԽՍՀ ԳԽ նստաշրջանը որոշում է ընդունել, որով իր համաձայնությունն է հայտնել ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ կազմի մեջ ընդունելու վերաբերյալ: Նման որոշման համար հիմք է ընդունվել ազգերի ինքնորոշման իրավունքը, որը մշտապես ճանաչվել է որպես խորհրդային պետության ազգային քաղաքականության հիմնադրույթային սկզբունք: 1988-ի հունիսին ԼՂԻՄ մարզխորհրդի դիմումը քննարկվել է նաեւ Արդեջանական ԽՍՀՄ ԳԽ-ում եւ մերժվել, որով հարցը մտել է փակուղի:

1988-ի հուլիսի 18-ին ԽՍՀՄ ԳԽ Նախագահությունը ԼՂԻՄ-ի, ՀԽՍՀ-ի եւ Արդեջանական ԽՍՀ ղեկավարությունների մասնակցությամբ քննարկել է ԼՂԻՄ-ի եւ նրա շուրջը ստեղծված իրադրությունը եւ որոշում ընդունել, որով անհնար է համարել ՀԽՍՀ եւ Արդեջանական ԽՍՀ սահմանների ու սահմանադրությամբ հաստատված ազգային տարածքի փոփոխությունը:

Մտկվան փաստորեն ակնհայտ աղորեջանամտ դիրքորոշում է որդեգրել, ինչի հետեանքով Հայաստանում առաջին պլան է եկել սովետներիության պահանջը՝ դառնալով առաջնայինը համազգային շարժման օրակարգում:

1988թ.-ի նոյեմբերի 24-ին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը, համազգային շարժման ճնշման տակ, պատմական որոշում ընդունեց, որի համաձայն՝ Հայաստանում գործում են ԽՍՀՄ միայն այն օրենքները, որոնք արժանանում են ՀԽՍՀ Գերագույն խորհրդի հավանությանը: Սա առաջին նշանակալից քայլն էր Հայաստանի անկախության ճանապարհին:

«Բարեփոխական» Գորբաչովն ամիսների ընթացքում դարձավ հայ ժողովրդի աչքի «գրողը»<sup>49</sup>:

## 88-ը բացառիկ է, բայց միֆ չէ

(31.12.2017)

1988-ի համազգային շարժումը բացառիկ դեր, առաքելություն ունի մեր ժողովրդի պատմության մեջ: Այն պակասվեց հաջողությամբ՝ ստեղծվեց Երրորդ հանրապետությունը, հայ ժողովուրդը պատմական հաղթանակ տարավ արցախյան պատերազմում՝ ղնելով հայկական երկրորդ պետության հիմքերը:

Արդեն անկախության տարիներին ընդդիմադիր շատ գործիչներ իրենց պայքարը փորձել են նույնացնել 88-ի շարժման հետ, սակայն նույնիսկ ֆորմալ նմանություն չի եղել:

1996-ի նախագահական ընտրություններում ընդդիմության թեկնածու Վազգեն Մանուկյանը հասարակությանը համոզում էր, որ ինքն է 88-ի արժեքների իրական կրողը: Սակայն 1988-ի եւ 1996-ի միակ ընդհանրությունն այն էր, որ հարթակում լիդերությունը պատկանում էր Վազգեն Մանուկյանին: Արդյունքում՝ 1996-ը միայն խրաքցեց 88-ի շարժման էլիտայի երկփեղկումը:

<sup>49</sup> [tin.am/2271348.html](http://tin.am/2271348.html), 29.12.2017թ.:

2003-ին Ստեփան Դեմիրճյանի ղեկավարած շարժումը նույնպես համաժողովրդական էր, սակայն չունեւ ձեւավորված հարթակ ու օրակարգ, ինչի հետեւանքով պայքարն ավարտվեց ՀԺԿ առաջնորդի թեյախմութեամբ:

88-ի շարժումը ռեստավրացնելու վերջին փորձն արեց դրա առաջնորդներից մեկը՝ Լեւոն Տեր-Պետրոսյանը, քսան տարի անց: Ազատության հրապարակում տիրում էր 88-ի ոգին, շարժումը նպատակային էր, սակայն Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ համաշխարհային համատեքստին ներդաշնակ օրակարգ ձեւակերպելու փոխարեն, արդարություն փնտրեց Մոսկվաներում<sup>50</sup> եւ համակարգի տարբեր սեզմենտների հետ համագործակցության մեջ:

88-ը բացառիկ է, բայց միջ չէ: Շարժումը հաջողեց, որովհետեւ այն վայելում էր հայ ժողովրդի բացարձակ վստահությունը, ուներ միջազգային համապարփակ աջակցություն՝ համաշխարհային համատեքստին ներդաշնակ իր օրակարգի շնորհիվ եւ, որ ամենակարեւորն է՝ Ազատության հրապարակի հարթակում ձեւավորվել էր այլընտրանքային իշխանություն:

Մեր պետությունն ու հասարակությունը կենսականորեն նոր 88-ի անհրաժեշտություն ունեն<sup>51</sup>:

### Վանոյի կարոտած խոսքերը

(02.01.2018)

Վանո Սիրադեղյանի թերեւս միակ չափածո ստեղծագործությունը՝ «Երկիր: Տ'պահանջ...»-ը գրվել է 23 տարի առաջ՝ 1989թ.-ին, ենթադրաբար՝ Ամանորի օրերին: Այն ժամանակ Սիրադեղյանը ձերբակալված էր եւ «Լարաբաղ» կոմիտեի մի քանի անդամների հետ գտնվում էր Մոսկվայի «Բոստիկա» բանտում:

<sup>50</sup> Հեղինակն այս պնդումը հաստատող փաստ չի եղում՝ ակնհայտորեն ոչ պարզա-հարաբ, որովհետեւ այդպիսի փաստ գոյություն չունի:

<sup>51</sup> [in.am/2271833.html](http://in.am/2271833.html). 31.12.2017թ.:

«Երկիր: Տ'պահանջ...»-ը տաղանդավոր գրողի հույզերի, Հայաստանի ու սիրած կնոջ հանդեպ ներդաշնակ ու գեղեցիկ կարոտի դրսեւորում է: Հնարավոր չէ կարդալ այդ տողերը ու չհուզվել, չսիրել Հայաստանը, Վանոյին, նրա ռոմանտիկ ու խենթ սերը:

Վանո Սիրադեղյանի տաղանդավոր գրիչը այնքան պատկերավոր ու գեղեցիկ է ներկայացնում շարժման բարոյական ուժը, էներգետիկան. «...Մի տարվա ազատ կյանքի դիմաց

Մի լրիվ կյանքի գին են ուզում,

Ուզում են ընդմիշտ վերացած տեսնել

Մահապարտ ոգին Ավարայրի,

ո՞նց կուզենային տասը տիկ հանել

դնել դեմը Մայր Հայաստանի,

չլիներ ահը հազար ինն հարյուր ութսունութ թվի Երեւանի:

Ի՞նչ սրընթաց տարին բոլորեց,

Ձյան քանի՞ շերտի տակ է փետրվարի

ապստամբ ոգին,

ձնհալի հետ կմաքրվեն հրապարակները

ժանգ ու մետաղից,

ծիրանինները կծաղկեն, արդյոք, այս գարնանը

քրտնախաշ օդում զորանոցային Երեւանի»:

Վազգեն Սարգսյանը Վանո Սիրադեղյանին անվանում էր շարժման ասպետ ու թերեւս՝ ոչ պատահաբար: Վանոն բանտում գրած գեղեցիկ գործում ասպետաբար փառաբանում է սերը, իր սիրած կնոջը.

«Ո՞նց ես ապրում երեւանում՝ առանց Վանոյի,

ո՞վ է եփածդ սուրճով հիանում,

ո՞վ է մոտենում հեռախոսին,

որ մի ժամանակ հանգչում էր գոգիդ,

շնչում էր սիրով, խոսում սրտիդ հետ...

Հաշտվիր հետը.

շաբաթ կանցնի, ամիս կանցնի, կանցնի տարի,

առօրյա մի զանգ հանկարծ սիրող,

պտղի առաջին զարկի նման, թունը կհանի,—



եթե ականջդ ծայնի պահես,  
 եթե սիրտդ սառած չլինի,  
 եթե սլացիկ, արագ ոտքերդ քեզ ինձանից տարած չլինեն:  
 Բայց դու սրտիդ հետ մենակ մնա,  
 եթե բարակ է՝ կկտրվի,  
 կտրվեց՝ շունչն էր, ուրեմն, կարճ, արյունը՝ սակավ,  
 սակավի համար չեն ափսոսում,  
 ես իմն ապրեցի, դու քունը ապրիր,  
 ցավդ տանեմ:  
 Երեկ նայեցի հայելու խորքը,  
 Տեսա՝ դեպի վերջն եմ գնում  
 եւ տեսա քեզ ծնեոային գորշ Երեանում  
 մենակ ու սիրուն.  
 օձիքը՝ թաց,  
 գլուխդ՝ բարձր,  
 շուրթերդ՝ սեղմած, որ լաց չլինես...  
 Արցունքներիդ ճանապարհ տուր,  
 որ սիրտդ բացվի,  
 ժպտա՝ քաղաքի դեմքը ծաղկի,  
 թաց ու լույսի մեջ ջահել սերդ  
 թող Հայաստանի ցավոտ երկնքին  
 ծիածան կապի,  
 Հարսնություն արա Երեանին,  
 ցավդ տանեմ,  
 քանզի օրերից աննման մի օր  
 ես քեզ գտա երջանկության մատուցներում  
 եւ ընդունեցի՝ ճակատիս գիր,  
 կարգեցի՝ մերձավորիս քույր,  
 հոչակեցի օպերայի հարս:  
 «Երկիր: Ց'պահանջ...»-ում Վանո Սիրադեղյանն այնքան  
 գեղեցիկ է միախառնել, միասնական դարձրել Հայրենիքի ու կնոջ,  
 որդու հանդեպ սերը. «...Բայց ես մոռանալ չեմ կարողանում  
 քեզ, որդուս, Հայաստանը.

քեզ՝ լացակումած,  
 որդուս՝ մուրը,  
 Հայաստանը՝ ավերակ դարձած:  
 Ես ո՞նց մոռանամ,  
 ես ծեզ ո՞ւմ պահ տամ, սիրելիներս,  
 երբ աստված, այսպես, մեր մեջքը ջարդեց  
 մեր ձգված պահին...  
 Տեսնես ի՞նչ կա Լենինականում,  
 Սպիտակում ի՞նչ են անում,  
 փրկվածները ո՞նց են ապրում  
 գնացածները տեսնես ո՞ր հասան,  
 ո՞վ էր տեսել դասարաններով երկինք  
 համբառնան.  
 հրեշտակների այսչափ երամներ  
 ո՞ր երկնքում կան  
 բացի նզովյալ Հայաստանից...  
 ...Ձմեռվա կեսին Մոսկվա քաղաքում  
 կեսգիշերին անձրեւ է գալիս.  
 եղանակները ելել են հունից,  
 աղետաբեր են ժամանակները,-  
 մենք ու մեր ոխերիմ աստված,  
 ուշքի եկեք, աղետյալներս,  
 թոթափվեք թաղից գարնանը հառնող  
 վագի նման,  
 խչմարեք իրար ու ապավինեք, ձեր  
 ցավը տանեմ,  
 Դու,  
 որդիս,  
 Հայաստանը»:

1989-ի Ամանորը մեր ժողովուրդը դիմավորեց անասելի ծանր  
 ապրումներով՝ երկրաշարժի զոհերի ցավը սրտում, «Ղարաբաղ»  
 կոմիտեի կալանավորված անդամների կարոտը խեղդելով...

Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ, տա Աստված, որ այսուհետ բոլոր ամանորները միայն խաղաղություն ու բարգավաճում բերեն մեր երկրին, երջանկություն բոլորիս<sup>52</sup>...

### Համազգային Ամանոր, որին հաջորդեց վառողի հոտը...

(02.01.2018)

1990-ի Ամանորն անմոռանալի էր. Ազատության հրապարակում համազգային շարժման ղեկավարությունը կազմակերպել էր տոնական միջոցառումներ, որոնց մասնակցում էր ամբողջ ժողովուրդը՝ ահել, ջահել, տնով-տեղով, ընտանիքներով: Տոնականության մեջ հաղթանակի տրամադրություն կար, բայց նաեւ տագնապ, որովհետեւ Մոսկվան չէր համակերպվում ՀՀՀ-ի հաղթանակի հեռանկարի հետ, իսկ Ադրբեջանում կոմունիստական իշխանությունն իջել էր խուժանի մակարդակին:

Հունվարի 13-ին Ադրբեջանի ԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Ա. Վեզիրովը, հանդիպելով ԱժԺ<sup>53</sup> ակտիվի հետ, ասել է. «...Մեր թշնամիներին մենք մեր ճանապարհից պիտի սրբենք, ինչպես Լեռնային Ղարաբաղի մարզկոմը սրբեցինք, ԼՂԻՄ-ի կառավարման հատուկ կոմիտեն եւ շատ ուրիշների...»: Դրան հաջորդել է հայերին աշխատանքից ազատելը, ահաբեկելը, ծեծն ու ջարդը: 1990 թվականի հունվարի 13-ին բազմահազարանոց հանրահավաքից հետո ամբոխը խմբերի բաժանված, նախանշված հասցեներով ներխուժել է հայերի բնակարանները եւ սկսել ծեծ ու բռնարարքներ, մարդկանց դուրս նետել պատուհաններից, սպանել երկաթե ծողերով ու դանակներով, բռնաբարել կանանց, շատերին ողջակիզել: Այնուհետեւ հայտնվել են ԱժԺ-ի ներկայացուցիչները՝ «կյանքը փրկելու» համար անմիջապես նավահանգիստ մեկնելու առաջարկությամբ: Հայ բնակչությունից խլել են դրամը, արժեքավոր իրերը, խնայքանկի

<sup>52</sup> [in.am/2272602.html](http://in.am/2272602.html) 02.01.2018թ.:

<sup>53</sup> ԱժԺ – Ադրբեջանի ժողովրդական ճակատ:

գրոցյկները, բնակարանների փաստաթղթերը: Նավահանգստում ԱժԺ-ի ուղեկալներում խուզարկել են տեղահանվածներին, կողոպտել են հաճախ ու Կասպից ծովով լաստանավերով ուղարկել Թուրքմենստան: Նույնը կատարել են նաեւ օդանավակայանում: Ջարդերին աջակցել են իրավապահ մարմինները, պետական գրեթե ողջ համակարգը, անգամ՝ շտապօգնության բժիշկները, ովքեր հայերի մահը վերագրել են սրտային խանգարումների: Ջարդերը շարունակվել են 6 օր:

Կարգուկանոնը «վերականգնելու» պատրվակով, միայն հունվարի 19-ին, երբ վտանգվել է խորհրդային իշխանությունը Բաքվում, Մ. Գորբաչովը հրամանագիր է ստորագրել Բաքվում արտակարգ դրություն մտցնելու մասին: Չինված դիմադրության ժամանակ սպանվել են մեկ տասնյակից ավելի զրոհայիններ, շատերը ձերբակալվել են: 1990 թվականի հունվարի 13–19-ի ջարդերից հետո հայաթափվել է Բաքուն (շուրջ 250 հազար հայ), տեղահանվել եւ անհայտ կորել են հազարավոր հայեր: Կասկած չկա, որ Բաքվի ջարդերը կազմակերպվել էին Մոսկվայի հրահանգով՝ Ադրբեջանի կոմունիստական իշխանությունների համակարգմամբ եւ ժողճակատի ակտիվիստների մասնակցությամբ: Սակայն ինչպես սովորաբար պատահում է հոգեվարքի մեջ գտնվող կայսրությունների պարագայում, իրադարձությունները մեկ շաբաթ հետո դուրս եկան Մոսկվայի վերահսկողությունից եւ սովետական զորքերը միայն այդ ժամանակ մտան Բաքու: Բնականաբար՝ ոչ թե հայերին, այլ սովետական իշխանությունը պաշտպանելու նպատակով:

1990-ի հունվարի 17-ին Եւրախորհրդարանը բանաձեւ է ընդունել, ով կոչ է արել Արտաքին գործերի նախարարների կոմիտեին եւ Եւրախորհրդին՝ պաշտպանել հայերին խորհրդային կառավարության հակաօրինական գործողություններից եւ պահանջել անհապաղ օգնություն ցուցաբերել Հայաստանին եւ Լեռնային Ղարաբաղին: Հունվարի 18-ին ԱՄՆ-ի մի խումբ սենատորներ համատեղ նամակ են հղել Միխայիլ Գորբաչովին, որում անհանգստություն են արտահայտել Բաքվում հայերի ջարդերի կապակցությամբ եւ կոչ արել Լեռնային Ղարաբաղը միացնել Հայաստանին:



Սակայն խորհրդային ղեկավարությունը հետետղականորեն մոնացության էր մատնում Բաքվի ջանքերը՝ Ազատության հրապարակում հավաքված հարյուր հազարավոր մարդկանց փակցնելով «ծայրահեղականի», իսկ միջազգային հորդորներին՝ «իմպերիալիզմի» պիտակ:

1990-ի հունվարին Մոսկվան ռազմական բախում սադրեց հայադրբեջանական սահմանին՝ Երասխավանի ուղղությամբ: Հերոսի մահով նահատակվեցին Մովսես Գորգիսյանը, Երվանդ Սաղումյանը, 15-ամյա ազատամարտիկ Վարդան Պապիկյանն այդպես էլ չվերադարձավ Երասխավանից:

Երասխավանի մարտը դարաբաղյան առաջին պատերազմի ազդանշաններից մեկն էր<sup>54</sup>:

### Շարժման ոգին՝ Վազգեն Սարգսյանը

(04.01.2018)

Երասխի մարտից հետո Վազգեն Սարգսյանն անվիճելի հեղինակություն դարձավ ինքնապաշտպանական ջոկատների համար՝ դառնալով նրանց ընդհանուր հրամանատարն ու ոգեշնչողը: Վազգեն Սարգսյանը Վանո Սիրադեղյանին համարում էր շարժման ասպետ, իրեն՝ Վազգենին, առանց վարանելու կարելի է համարել շարժման ոգին: Բոլորն են հիշում Վազգեն Սարգսյանի քոցավառ մի քանի ելույթներն Ազատության հրապարակում եւ խորհրդարանում, սակայն Սպարապետ պատվաւորները ստացած գործիչն ավելի շատ գործի մարդ էր՝ հրամանատարի ջիղով, առաջնագծում: 1989 եւ 1990 թվականներին Սարգսյանը դարձավ հայկական կամավորական ջոկատների հրամանատարը Երասխի մոտ<sup>55</sup>:

<sup>54</sup> [tin.am/2272825.html](http://tin.am/2272825.html). 02.01.2018թ.:

<sup>55</sup> Ավելի ճիշտ, 1990թ. հունվարին Վազգեն Սարգսյանը «Ղարաբաղ» կոմիտեի կողմից կարգվեց Երասխի ճակատամարտում կոկորդ հայկական կամավորական խմբերի հրամանավոր: Այդ որոշումը Երասխում կուրսակված հսկայական բազմության առջեւ հրապարակեց ՀՀ վարչության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը:

Նրա նախաձեռնությամբ հիմնադրվել են «Երկրապահ» կամավորականների ջոկատները<sup>56</sup>: 26 ջոկատից բաղկացած 2.300 անձնակազմով այն առաջին պաշտոնական հայկական զինվորական ստորաբաժանումն էր, որը գործում էր Մոսկվայից անկախ եւ դարձավ ազգային բանակի հիմքը ու ֆորմավիզացվեց պատերազմի ավարտից հետո՝ վերածվելով Երկրապահ կամավորականների միության: Քանի որ Վազգեն Սարգսյանը մեծ համբավ ուներ հայ կամավորական ջոկատներում եւ բանակի սպայական կազմում, նշանակվեց անկախ Հայաստանի առաջին Պաշտպանության նախարար 1991 թվականի դեկտեմբերին: 1992 թվականի հունվարի 28-ին Հայաստանի կառավարությունը պատմական որոշում ընդունեց, որով պաշտոնապես ստեղծվեցին Հայաստանի զինված ուժերը:

Արցախում ռազմական գործողությունների աճի հետ 1992 թվականի մարտին Սարգսյանը հայտարարեց, որ Հայաստանին անհրաժեշտ է 30000 զինվոր ունեցող հզոր բանակ, որպեսզի ապահովվի երկրի անվտանգությունը: 1992 թվականի մայիսի 9-ին գրանցվեց առաջին լուրջ հաջողությունը Արցախում՝ Շուշիի ազատագրմամբ: Այդ պատմական ու շրջադարձային հաղթանակից օրեր անց Հայաստանի խորհրդարանը երկար ու բուռն ծափահարություններով դիմավորեց Վազգեն Սարգսյանին: 1992 թվականի ամռանը իրավիճակը օրհասական էր հայկական զինված ուժերի համար, երբ Ադրբեջանը ձեռնարկեց Գորանբյու գործողությունը, ինչի հետեանքով օկուպացվեց Արցախի հյուսիսային հատվածը: 1992 թվականի օգոստոսի 15-ին Վազգեն Սարգսյանը հանդես եկավ Մահապարտների հայտնի կոչով:

Նա հեռուստատեսային իր ելույթում ասաց. «Յուրաքանչյուր շրջանից 10-15-ական հոգի, հին տղաներից, փորձառուներից, մահապարտներից, որոնք գնալու են, կովելու են ամենադժվարին հատվածում, որտեղ, նորից են ասում, մեռնելու եւ կենդանի մնալու հավա-

<sup>56</sup> Կամավորական ջոկատների կազմավորման պաշտոնական մեկնարկը կարելի է համարել 1990թ. հունվարի 14-ը, երբ առաջին անգամ Կոմիտեի անունից ենան հրապարակային կոչ ինչեց հանրահավաքում, ինչին եւ հաջորդեց ՀՀ վարչության՝ նույն խնդրին առնչվող պաշտոնական հայտարարությունը:

նականությունը կես-կեսի է: Եթե մենք վաղը չէ մյուս օրը հավաքվեցինք, եւ եթե մենք կարողացանք 500 հոգանոց մահապարտների այդ գումարտակն ստեղծել, ուրեմն մենք դեռ կանք, մենք դեռ կովելու եւ հաղթելու ենք: Եթե չհաղթեցինք, այն ժամանակ ես կհամարեմ, որ իսկապես իմ հրաժարական տալու ժամանակը եկել է: Շնորհակալ եմ»: Վազգեն Սարգսյանն ու մահապարտները հաղթեցին՝ վերջնականապես բեկելով դարաբաղյան պատերազմի ընթացքը:

...Վազգեն Սարգսյանը թշնամու ահ ու սարսափն էր, նա հերոսացավ արցախյան պատերազմում, սակայն դավադիր գնդակից զոհվեց Հայաստանի խորհրդարանում: 88-ի շարժման ոգին մեռավ, կտրվեց Երրորդ հանրապետության վերջին թելը<sup>57</sup>...

#### **Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատմական այցն Արցախ (05.01.2018)**

Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը (ռումինահայ, աշխարհիկ անունն է՝ Լեւոն Կարապետ Աբրահամի Պալմյան) գահակալել է 1955–94 թթ.-ին: 88-ի համազգային շարժումը մեկ օրում չի ծնվել. Արցախի խնդիրը խորհրդային իշխանությունների առջեւ բարձրացվել է բազմիցս, այդ թվում՝ Ամենայն Հայոց 130-րդ կաթողիկոսի կողմից: Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի «Էջմիածին» ամսագրի 1956 թվականի մայիսյան համարում «Պաշտոնական ընդունելություններ» խորագրի ներքո հրապարակված է այսպիսի մի հաղորդագրություն. «1956 թվականի մայիսի 12-ին ՍՍՌՄ Մինիստրների Սովետի նախագահ Ն. Ա. Բուլգանինը ընդունեց Ամենայն Հայոց Ծայրագույն պատրիարք եւ կաթողիկոս Նորին Ս. Օծոբյան Ս.Տ. Վազգեն Ա-ին: Ընդունելությանը ներկա էին ՍՍՌՄ Մինիստրների Սովետին կից Կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի նախագահ Ի.Վ. Պոլյանսկին, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ եկեղեցում գործերի խորհրդի նախագահ Հ.Գ. Գրիգորյանը

եւ ՍՍՌՄ Մինիստրների Սովետի նախագահի Արձանագրության պետ Ե.Ա. Տարաբրինը»:

Ժլառ պաշտոնական տեղեկատվությունը լուրմ է, բայց այս հանդիպման ընթացքում Վեհափառը քննարկել է նաեւ ԼՂ հարցը: Հայտնի է, որ 1955-ի վերջերին, դեռեւս Նորած Վազգեն Ա Վեհափառը նամակ է հղել ԽՍՀՄ կառավարության ղեկավար Նիկոլայ Բուլգանինին: Ի թիվս եկեղեցական զանազան հարցերի Վեհափառ Հայրապետը խնդրում էր Էջմիածնի ենթակայությանը փոխանցել մի շարք եկեղեցիներ, որոնց թվում՝ Գանձասարի վանքը: 1956թ.-ին արդեն, իր արտասահման կատարած առաջին հովվապետական ուղեւորության ավարտին, Մոսկվայում, հանդիպելով Բուլգանինի հետ, Վազգեն Ա-ն նրան է փոխանցում նաեւ մի երկրորդ նամակ, որտեղ արժարժվում են արդեն Խորհրդային Հայաստանի տարածքային հարցեր: Իբրեւ հիմնավորում այդ պահանջների ներկայացվում է Մայր հայրենիք վերադառնալ ցանկացող սփյուռքահայությանը հայրենի տարածքներում բնակեցնելու փաստարկը: Մայր Աթոռի արխիվում պահվող մեքենագիր մի փաստաթղթում Վազգեն Վեհափառը իր այդ հանդիպումների մասին պատմում է. «1956-ին իմ առաջին ուղեւորության վերադարձից հետո Մոսկվա 12 մայիս 1956-ին ունկնդրություն ունեցա Կրեմլում, Մինիստրների Սովետի նախագահ Մարշալ Բուլգանինի մոտ: Մարշալին ներկայացրեցի մի դիմումնագիր բաղկացած յոթը կետերից եկեղեցական հարցերի վերաբերյալ, ինչպես օրինակ, նոր Վեհարանի շենքի վերադարձը, տպարանի հիմնումը եւ այլն: Այդ բոլոր հարցերին մարշալը դրական լուծում տվեց: Այս առթիվ ես ներկայացրեցի նաեւ մի դիմում Լեոնային Ղարաբաղի վերաբերյալ, առաջադրանքով, որ արդար կլինի եւ օրինական Ղարաբաղի մարզի միացումը Սովետական Հայաստանին: Մի ամիս հետո երեւանում ինձ հայտնի դարձավ, որ Ղարաբաղյան հարցի վերաբերյալ իմ դիմումին ընթացք է տրվել եւ այն ուղարկվել Սովետական Միության բոլոր հանրապետություններին ի քննարկում: Իսկ երկու ամիս անց, Հայաստանի Մինիստրների Սովետի նախագահ Անտոն Քոչինյանը ինձ հրավիրեց իր մոտ եւ հայտնեց,

<sup>57</sup> [lin.am/2273144.html](http://lin.am/2273144.html), 04.01.2018թ.:



որ Ղարաբաղի վերաբերյալ իմ առաջադրած հարցը պետք է նկատել փակված»:

Վեհափառի բոլոր այս ջանքերն անօգուտ էին, Վազգեն Ա-ն չի կարողանում արժանանալ անգամ ԽՄԿԿ ԿԿ գլխավոր քարտուղար Նիկոլայ Խրուշչովի ընդունելությանը: Միակ բանը, որը այդ տարիներին քիչ թե շատ կարող էր բավարարել Վազգեն կաթողիկոսին, 1957թ.-ին Բաքու եւ Ղարաբաղ կատարած այցն էր: Այն եղավ Վեհափառի առաջին եւ վերջին այցը Արցախ: Բաքվի եկեղեցուն արտասանած իր քարոզում Վազգեն կաթողիկոսը, անդրադառնալով նախորդ տարի արտասահման կատարած իր ուղեւորությանը, հատկապես ընդգծում է, որ արտասահմանի հայությունը հետաքրքրված է Ադրբեջանի, մասնավորապես, Բաքվի եւ Լեռնային Ղարաբաղի հայերով: Կիրովաբաղի հայկական եկեղեցուն եւս Վեհափառ Հայրապետին ճոխ ընդունելություն է ցուցաբերվում: Սեպտեմբերի 25-ին կաթողիկոսն իր շքախմբով հասում է Ղարաբաղի սահմանը: Վեհափառ Հայրապետը հանգրվանում է Ստեփանակերտում, այցելում է Շուշի, Գանձասար եւ Ամարաս: Առանձնապես տխուր էր պատկերը Շուշիում:

«Մենք դառն կսկիծով ականատես եղանք աննկարագրելի մի տեսարանի: Բացի փլված գմբեթից, եկեղեցու բոլոր դռներն ու պատուհանները հանված էին, երբեմնի այս աղոթավայրը ուղղակի վեր էր անվել անասունների ախոռի: Մենք եւ մեր ուղեկիցները ականատես եղանք, թե ինչպես երկու կովեր նիրհում էին եկեղեցու սեղանի վրա, իսկ եկեղեցու ամբողջ հատակը լեցուն էր անասնաբորով», - մեկ տարի անց Հայ եկեղեցու գործերի նախագահին հղած իր բողոքագրում նշում է Վեհափառ Հայրապետը:

Դեռ Ստեփանակերտում կաթողիկոսը աղոթեցանական իշխանություններին ներկայացնում է հայկական եկեղեցիների մի ցանկ՝ ակնկալելով դրանց վերաբացումը: Վեհափառ Հայրապետը խնդրում էր Հայ եկեղեցու տնօրինմանը վերադարձնել Գանձասարը, Ամարասը, Ստեփանակերտի աղոթատունը, Կիրովաբաղի շրջանում գտնվող Չոլյակ կոչվող ուխտավայրը, Նուխի, Զաքաթալա, Նախիջեան քաղաքի եկեղեցիները: Վեհափառը խնդրում է

նաեւ «տեղական իշխանությունների օգնությամբ Շուշիի հայկական մայր եկեղեցին մաքրել աղբից, դռներ ու լուսամուտներ պատրաստել՝ այնտեղ նախիրի մուտքը արգելելու համար»: Վեհափառի այս խնդրանքը եւս անտեսվում է: Միայն 1989-ին, ղարաբաղյան շարժումից հետո, Վազգեն Ա Կաթողիկոսին բախտ է վիճակվում հայրապետական կոնդակով վերահաստատել Արցախի թեմը: 88-ի շարժման օրերին Վեհափառը ժողովրդի հետ էր՝ իր մտքերով ու աղոթքներով: Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը փորձում էր իր հայրապետական հորդորներով հայ ժողովրդին հետ պահել փորձություններից:

Հայաստանում կոմունիստական իշխանության տապալման հաջորդ օրը՝ օգոստոսի 5-ին Գերագույն խորհրդի նորընտիր նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը այցելեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ իր հարգանքի տուրքը մատուցելու եւ ստանալու Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնությունը: Վազգեն Առաջինը շնորհավորեց Տեր-Պետրոսյանին: Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհավորանքի մեջ ասվում էր. «Սուրբ Էջմիածնից հղում ենք մեր աղոթքը եւ մեր օրհնությունը վերածնվող մեր հայրենի հարազատ պետության, անձամբ Ձեզ եւ Ձեր բոլոր ազնիվ գործակիցներին: Ողջ լերուք զորացյալ սուրբ հոգիով, զի Աստված ընդ մեզ է, ամեն»<sup>58</sup>:

### Լեւոն Տեր-Պետրոսյանը փորձեց, սակայն չկարողացավ միավորել եկեղեցին (06.01.2018)

1920թ. խորհրդային բանակի ներխուժումը Հայաստան նոր փորձությունների սկիզբ դարձավ Հայոց եկեղեցու համար, ինչը ձգվեց ավելի քան 70 տարի: Համայնավար վարչակարգը, պաշտոնապես հռչակելով անաստվածությունը որպես գաղափարախոսություն, սկսեց հալածել կրոնն ու եկեղեցին: Ավելի ուշ առգրավվեց եկեղեցական ողջ ունեցվածքը՝ ծիսական սպասքը, թանգարանային

<sup>58</sup> [in.am/2273560.html](http://in.am/2273560.html). 05.01.2018թ.:

նմուշները, ձեռագրական հարստությունը, հողակտորները, քանդվեցին կամ պահեստների ու ախոռների վերածվեցին հարյուրավոր եկեղեցիներ (մնացել էր ընդամենը 4 եկեղեցի, իսկ 800-ը փակվել հիմնականում վարչական եղանակով), ստեղծվեցին եկեղեցու ոչնչացմանը միտված մի քանի կազմակերպություններ: Նման ծանր պայմաններում անգամ Գետրգ Ե Կաթողիկոսը հաջողեցրեց փոփոխել եկեղեցական տոմարը, հիմնել Գերագույն Հոգեւոր Խորհուրդը, հաստատել ազգային-եկեղեցական ժողովի կանոնադրությունը:

Ի թիվս 30-ական թվականներին մահվան դատապարտված եւ արքայազն Բազմաթիվ հոգեւորականների (ավելի քան 200 հոգի), խորհրդային ռեպրեսիաների զոհը դարձավ նաեւ Բորիս և Մուրադբեկյան կաթողիկոսը (1932–1938 թթ.), ով սպանվեց իր առանձնասենյակում խորհրդային գործակալների ձեռքով: 1941թ. սկիզբ առած Հայրենական Մեծ պատերազմի տարիներին Հայոց եկեղեցին իր փոքր հնարավորություններով հանդերձ կանգնեց պետության կողքին՝ Գետրգ արքեպիսկոպոս Չորեքչյանի նախաձեռնությամբ հանգանակություններ եւ ռազմական ուժ («Սասունցի Դավիթ» եւ «Գեներալ Բաղդամյան» տանկային շարասյուններ) ուղարկելով ռազմաճակատ: Այս փաստը փոքր-ինչ փոխեց խորհրդային կառավարության մոտեցումը Հայոց եկեղեցու նկատմամբ, ինչի արդյունքում 1945-ին թույլատրվեց Կաթողիկոսական ընտրություններ անցկացնել (ընտրվեց Գետրգ Զ Չորեքչյանը, 1945–1954 թթ.), հրատարակել «Էջմիածին» պաշտոնական ամսագիրը, բացվեց Հոգեւոր Ճեմարանը: Գետրգ կաթողիկոսով սկսվեց վերագաղթոնքի նոր փուլ, որը շարունակվեց նաեւ Վազգեն և Պաճյան (1955–1994 թթ.) հայրապետի օրոք:

88-ի համազգային շարժումը, ԼՂ խնդիրը երբեք կրոնական աստառ չեն ունեցել, սակայն շարժման օրակարգում մշտապես եղել են Հայ Առաքելական եկեղեցու պատմական առաքելության վերաբերմունքը, խղճի ազատությանը վերաբերող հարցեր: Այսինքն, կրոնական ազատությունների թեման եղել է երկրի դեմոկրատիզացիայի գործընթացի համատեքստում: Մյուս կողմից՝ Երրորդ հանրապետությունը, նույնիսկ օրենսդրորեն, չկարողացավ ձեռքազատ-

վել պետության եւ եկեղեցու սերտաճման գայթակղությունից<sup>59</sup>, ինչը մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների խախտում է:

Մյուս կարեւորագույն առաքելությունը, որը կարող էր կատարել համազգային շարժումը, Հայ Առաքելական եկեղեցու երկատվածության վերացումն էր: 1995-ին, երբ Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը նպաստեց Հայ Առաքելական եկեղեցու Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Առաջինի ընտրությանը Ամենայն Հայոց կաթողիկոսի պաշտոնում, նրա հետահար նպատակը երկու աթոռների միավորումն էր՝ որպես համազգային միասնության ակտ, պատմական արդարության վերականգնման գործընթաց: Սակայն Տեր-Պետրոսյանի ջանքերը հանդիպեցին ՀՅԴ համառ դիմադրությանը, որը շարունակում է Կիլիկիայի աթոռը օգտագործել իր քաղաքական նպատակների, գաղթօջախներում ազդեցությունը պահպանելու համար: Հուսանք, որ մի օր իրականություն կդառնա մեր եկեղեցու միավորումը: Շնորհավոր Սուրբ Ծնունդ: Քրիստոս ծնավ եւ հայտնեցավ. մեզ եւ ձեզ մեծ Ավետիս: Օրինյալ է հայտնությունը Քրիստոսի: Ամեն<sup>60</sup>:

## Երկրապահությունը

(07.01.2018)

1988-ի համազգային շարժումը երկու բաղադրիչ ուներ՝ քաղաքական եւ ռազմական: Իհարկե, շարժման առաջին ամիսներին քչերի մտքով կանցներ, որ հայ ժողովրդի խաղաղ պայքարը հանդիպելու է Մոսկվայի եւ Բաքվի դիմադրությանն, ազդեցիվ քաղաքականությանն, ինչն ի վերջո 1989-ի վերջից հայ-արդրեջանական սահմանին հանգեցնելու է լուրջ մարտերի՝ 1992-ին վերածվելով լայնածավալ պատերազմի:

<sup>59</sup> Այս դիվորությունն արդարացի է 2005թ. Սահմանադրությունից հետո սրբեզված իրավիճակի համար: 1995թ. Սահմանադրությամբ պետության եւ եկեղեցու անջատման հարցը լուծված էր հարակրոն:

<sup>60</sup> [in.am/2273956.html](http://in.am/2273956.html). 06.01.2018թ.:



ինքնապաշտպանության ջոկատներն առաջանում էին ինքնաբերական հենց Ազատության հրապարակում, իրավիճակի թելադրանքից ելնելով: Հատկապես 1990-ի հունվարից 19-ի Երասխի մարտից հետո ինքնապաշտպանության ջոկատները դրվեցին ինստիտուցիոնալ կառավարման ներքո: Բաղրամյան փողոցի սկզբնամասում տեղակայված ՀՀԾ գրասենյակում Վազգեն Սարգսյանի ղեկավարությամբ գործում էր շտաբ, որը կորդինացնում էր ինքնապաշտպանական ջոկատների գործունեությունը<sup>61</sup>:

Հաղթական պատերազմի ավարտից հետո՝ 1994-ին, այդ ջոկատների բազայի վրա ձևավորվեց ԵԿՄ-ն: Երկրապահությունը շատ մեծ դեր է խաղացել 88-ի շարժման, Երրորդ հանրապետության պատմության մեջ: Չլինե՞ր Ազատության հրապարակի հզոր էներգետիկան՝ թերեւս ականատես չլինեինք այն սխրագործություններին, խիզախության հայրուրավոր, հազարավոր դրվագներին, որոնցով այնքան հարուստ է արցախյան գոյամարտը: Մյուս կողմից՝ հենց այդուհասիրտ քաջերն ամուր պահեցին շարժման առաջնագիծը, հնարավոր դարձրեցին Երրորդ հանրապետության ստեղծումը, Արցախի ազատագրումը: Ընդ որում, երկրապահությունը հաղթեց անհավասար պատերազմում, որովհետեւ աղբյուրանական գրոհայինների թիկունքում շատ հաճախ սովետական, հետո՝ ռուսական կանոնավոր բանակն էր:

Հայաստանի կանոնավոր բանակը ձևավորվեց երկրապահության ոգու եւ պրոֆեսիոնալ զինվորականության մասնագիտական ներուժի ներդաշնակության շնորհիվ: Հազարավոր հայորդիներ նահատակվեցին վասն հայրենյաց, հանուն Հայաստանի ու Արցախի ազատության: Հազարավոր մայրեր ու ջահել հարսներ դարձան սեւազգեստ, բյուրավոր մանուկներ միայն նկարներով ճանաչեցին իրենց հերոս հայրերին: Քանի-քանի գարուններ զոհաբերվեցին հայրենյաց ազատության զոհասեղանին, քանի աղջիկներ այդպես էլ կարոտ մնացածին Մոսկվի լանջերին նահատակված իրենց սիրելիների առաջին համբույրներին:

<sup>61</sup> Տե՛ս ծանոթ. 56:

...Այսօր մենելոց է, հազարավոր մարդիկ սրտի կսկիծով, բայց արժանապատիվ երթով կզնան գերեզմաններ՝ հարգանքի տուրք մատուցելու քաջերի հիշատակին, որոնք Եռաբլուրի բարձունքում խորհրդանշում են Հայաստանի անկախությունը, փարոսի պես լուսավորելով մեր անսասան երթը: Խոնարհում նրանց պայծառ հիշատակի առջե՛ս<sup>62</sup>:

### «Ազգային» ՀՅԴ-ն եւ «ապազգային» ՀՀԾ-ն (08.01.2018)

88-ի համազգային շարժումն ականայից մարտահրավեր դարձավ հայ ավանդական քաղաքական մտքի՝ հատկապես ՀՅԴ-ի համար: ՀՅԴ-ն՝ 1918-ին ստանձնելով Առաջին հանրապետության ղեկը, իր չմտածված եւ մաքսիմալիստական արտաքին քաղաքականության հետեանքով ավելի խոցելի դարձրեց ցեղասպանությունից մազապուրծ մեր ժողովրդի անվտանգությունը: Դաշնակցության կառավարման տարիներին տեղի ունեցավ պատմության մեջ միակ հայ-վրացական պատերազմը:

Դաշնակցական կառավարությունը «Ազատ, անկախ, միացյալ Հայաստանի» լոզունգի ներքո ի վերջո կապիտուլացվեց բոլշեվիկների առջեւ՝ նրանց հետ կնքելով նվաստացուցիչ պայմանագիր եւ պարզ չէ՛ անգամ, թե ինչպիսին կլինե՞ր Չանգեզուրի ճակատագիրը, եթե չլինեին արդեն այդ ժամանակ ՀՅԴ-ից, ըստ էության, օտարված Գարեգին Նժդեհի ջանքերը:

Առաջին հանրապետության կործանումից հետո ՀՅԴ-ն «մենաշնորհեց» Հայ դատն ու Տեղասպանության խնդիրը՝ գաղթօջախներում իր ազդեցությունն ուժեղացնելու, կուսակցական դրամապանակը միշտ առատ պահելու համար: Համազգային շարժման հիմնական տարբերությունը ՀՅԴ-ից նրա հայաստանակենտրոնությունն էր: Եթե ՀՅԴ-ն հայությանը փորձում էր միավորել հակա-

<sup>62</sup> [in.am/2274321.html](http://in.am/2274321.html), 07.01.2018թ.:

թրքականության իռացիոնալ հիմքով, ապա 88-ի համազգային շարժման ծրագրային նպատակը պետության ստեղծումն էր:

«Ազատ, անկախ, միացյալ Հայաստանի» կարգախոսը միայն արտաքուստ է գրավիչ, իսկ իրականում ենթադրում է մաքսիմալիստական արտաքին քաղաքականություն, անխոսափելի կոնֆլիկտ գրեթե բոլոր հարեանների հետ եւ Հայաստանի վերածում տարածաշրջանային չուլանի կամ ռուսական ֆորպոստի: Սրան համազգային շարժումը հակադրեց հարեան երկրների հետ բնակա-նոն հարաբերությունների հաստատման սկզբունքը՝ ԼՂ հարցը դուրս դնելով Հայ դատի համատեքստից եւ ներկայացնելով ինքն-որոշման սկզբունքի գերակայության հիմքով:

ՀՅԴ օրակարգը նրա գործունեության որեւէ փուլում ներդաշնակ չի եղել համաշխարհային զարգացման համատեքստին, իսկ ՀՀԵ-ն ու Երրորդ Հանրապետությունը դարաբաղյան շարժման եւ պատերազմի տարիներին վայելել են համապարփակ միջազգային աջակցություն՝ քաղաքակիրթ աշխարհի հետ ինտեգրում ենթադրող իրենց օրակարգերով: Պատմությունը խիստ դատավոր է ու «եթե»-ներ չի հանդուրժում եւ պատահական չէ, որ ՀՅԴ արկածախնդրությունն ավարտվեց Առաջին հանրապետության փլատակների վրա, իսկ ՀՀԵ-ի իրապաշտությունը հայկական պետական վերահսկողությունն ու ինքնիշխանությունը տարածեցին 42000 կմ քառակուսու վրա՝ 29,8-ի փոխարեն<sup>63</sup>:

### Լեւոն Տեր-Պետրոսյանի ֆենոմենը

(08.01.2018)

Պատմական գիտությունների դոկտոր, Մատենադարանի ավագ գիտաշխատող Լեւոն Տեր-Պետրոսյանի անունը լայն հասարակությանը հայտնի դարձավ 1988-ի փետրվարին, երբ նա դարձավ «Ղարաբաղ» կոմիտեի անդամ՝ թեւեւ Հայաստանի ապագա նախագահը

<sup>63</sup> [in.am/2274582.htm](http://in.am/2274582.htm). 08.01.2018թ.:

դեռ 1965–68 թթ.-ին մասնակցել է ռասնոդական այլախոսական շարժումներին, իսկ 1966թ.-ին տաս օրով կալանավորվել է<sup>64</sup>:

1988-ի մայիսից Տեր-Պետրոսյանը ելույթ է ունեցել համազգային շարժման բոլոր հանրահավաքներում. նա հանդես էր գալիս ամփոփիչ ու ծրագրային ելույթներով:

1988թ. դեկտեմբերի 10-ին չորս ընկերների՝ Վազգեն Մանուկյանի, Բաբկեն Արարքցյանի, Սամվել Գետրոյանի եւ Ալեքսան Հակոբյանի հետ ձերբակալվել է գեներալ Մակաշովի կողմից Հայաստանում գտնվող Միխայիլ Գորբաչովի հրամանով: Դրան նախորդել էր Ղարաբաղի «Կոունկ» կազմակերպության անդամ Արկադի Մանուչարովի ձերբակալությունը: 1988թ. դեկտեմբերի 10-ից մինչեւ 1989-ի հունվարի 9-ը ընկած ժամանակամիջոցում ձերբակալվել են «Ղարաբաղ» կոմիտեի մյուս անդամներ Վանո Սիրադեղյանը, Սամսոն Ղազարյանը, Ռաֆայել Ղազարյանը, Աշոտ Մանուչարյանը, Համբարձում Գալստյանը, Դավիթ Վարդանյանը, ինչպես նաեւ Ղարաբաղյան շարժման անդամ Իգոր Մուրադյանը եւ «Գթություն» բարեգործական հիմնադրամի նախագահ Խաչիկ Ստամբոլցյանը: 1989թ. հունվարի 9-10-ին բոլոր ձերբակալվածները տեղափոխվել են Մոսկվա եւ նախնական կալանքի տակ պահվել «Մատրոսկայա տիշինա» եւ «Բուտիրյան» բանտերում:

Տեր-Պետրոսյանն ու նրա ընկերներն ազատ արձակվեցին 1989թ.-ի մայիսին՝ արժանանալով հասարակության ջերմ ընդունելությանը:

«Ղարաբաղ» կոմիտեն ուներ 11 անդամ եւ ղեկավարվում էր կոլեգիալ սկզբունքով, սակայն Լեւոն Տեր-Պետրոսյանն առանձնանում էր մյուսներից իր հոետորական ձիրքով, ռազմավարական մտածողությամբ, ճկուն մտածելակերպով: Պատահական չէ, որ Տեր-Պետրոսյանը 1989-ի դեկտեմբերին ընտրվեց ՀՀԵ, 1990-ի օգոստոսի 4-ին՝ Հայաստանի Գերագույն խորհրդի, իսկ 1991-ի հոկտեմբերի 16-ին՝ Հայաստանի նախագահ:

<sup>64</sup> Սույն պարբերության մեջ երկու անճշտություն կա. Լեւոն Տեր-Պետրոսյանը բա-նափրական գիտությունների դոկտորի կոչում ունի, իսկ «Ղարաբաղ» կոմիտեի ան-դամ է դարձել 1988թ. մայիսին:



Լեւոն Տեր-Պետրոսյանը քսաներորդ հարյուրամյակի հայ ամենականավոր պետական-քաղաքական գործիչներից մեկն է. նրա պաշտոնավարման շրջանում հռչակվել է Հայաստանի ինքնիշխանությունը, հաղթանակ է տարվել Ղարաբաղյան պատերազմում, դրվել են երրորդ հանրապետության քաղաքական, տնտեսական, ինստիտուցիոնալ, սահմանադրական հիմքերը: Տեր-Պետրոսյանը քաղաքական իրապաշտության վրա հիմնված քաղաքական նոր հոսանքի առաջնորդներից մեկն է:

Մյուս կողմից՝ Տեր-Պետրոսյանը չդիմացավ իշխանության գայթակղությանը, 90-ականների կեսերին քաղաքական եւ տնտեսական ռեֆորմները կանգ առան, 1996-ի վիճահարույց ընտրությունները հանգեցրեցին իշխանության լուրջ ճգնաժամի, ինչի, նաեւ՝ ԼՂ խնդրի շուրջ իշխանության վերնախավում տեղ գտած հակասությունների հետեանքով Տեր-Պետրոսյանը հրաժարական տվեց՝ Հայաստանին թողնելով քաղաքական տխուր ժառանգություն՝ հատկապես կադրային իմաստով: Հայաստանի հասարակությունը Տեր-Պետրոսյանին չի ներում Ռոբերտ Քոչարյանի, Սերժ Սարգսյանի համար:

Լեւոն Տեր-Պետրոսյանի ֆենոմենը կայանում է նրանում, որ 88-ի շարժումից քսան տարի հետո՝ 2008-ի նախագահական ընտրություններում, Լեւոն Տեր-Պետրոսյանը դարձավ համազգային երկրորդ շարժման առաջնորդը: Հայաստանում հիմք դրվեց նոր մտածողության, հրապարակ եկան նոր գործիչներ, սակայն Տեր-Պետրոսյանը դարձյալ համաժողովրդական վստահության մեծ ռեսուրսը փոխարինեց համակարգի տարբեր սեգմենտների հետ պայմանավորվածություններով, ինչի հետեանքը դարձավ նրա ղեկավարած ՀԱԿ-ի ֆիասկոն խորհրդարանական վերջին ընտրություններում:

Հունվարի 9-ին Լեւոն Տեր-Պետրոսյանը դառնում է 73 տարեկան: Շնորհավորում ենք առաջին նախագահին՝ առաջին հերթին նրան մաղթելով քաջառողջություն<sup>65</sup>:

<sup>65</sup> [lin.am/2275058.html](http://lin.am/2275058.html), 08.01.2018թ.:

## Շարժման հիմնական դասը, որը կարող է սրբել ցանկացած իշխանություն

(10.01.2018)

«Առաջին լրատվական»-ին տված հարցազրույցում «Ղարաբաղ» կոմիտեի անդամ Աշոտ Մանուչարյանն ուշագրավ միտք է արտահայտել: Նա ասել է, որ 88-ի ամենամեծ ուժը ժողովրդի իշխանությունն էր: Մանուչարյանը միանգամայն ճիշտ է, որովհետեւ Հայաստանի ու Արցախի վերաբերյալ բոլոր սկզբունքային որոշումները կայացվում էին Ազատության հրապարակում, հետո դրանք պարտադրվում էին Գերագույն խորհրդին, որտեղ կոմունիստ պատգամավորները քվեարկում էին ոչ թե հարազատ կուսակցության որոշմամբ, այլ՝ հասարակության ճնշման տակ: Իհարկե, սա դեմոկրատիայի, այսպես կոչված, ուղիղ դրսեւորումն է, որը մշտական լինելի չի կարող, որովհետեւ փողոցը մշտապես չի կարող «եռալ»:

1990-ին իշխանության եկած ՀՀԸ-ի հիմնական առաքելությունը պետք է լիներ ժողովրդի իշխանության ֆորմավացումը, այսինքն՝ ընտրական եւ քաղաքական ինստիտուտների ստեղծումը, ինչը թույլ կտար իշխանության ձեւավորում բացառապես ընտրությունների միջոցով: Սակայն 1995-96 թթ.-ի ընտրությունների որակը բացահայտեց, որ իշխանությունները մտադիր չէն ինստիտուցիոնալիզացնել շարժման հիմնադրման ձեռքբերումը:

Պետության դեմոկրատական լինելու հիմնական հատկանիշն այն է, որ իշխանությունը լինի ժողովրդի խոսնակը կամ՝ ինչպես Մանուչարյանն է ասում, փոստատարը, որը հասարակության խոսքը պետք է հասցնի համաշխարհային հանրությանը: Եթե այս բանաձեւը չի գործում, ապա իշխանությունը դառնում է օտարի մահակը սեփական ժողովրդի գլխին:

Լեւոն Տեր-Պետրոսյանի իշխանությունը պետության առաջին տարիներին հաջողեց, հաղթանակ տարավ Ղարաբաղյան պատերազմում, որովհետեւ ժողովրդի, հասարակության խոսնակն էր: Այսօր Հայաստանը ծախողվում է, որովհետեւ Սերժ Սարգսյանի

իշխանությունը, մեծ հաշվով, ռուսական մահակ է մեր հասարակության գլխին:

Խնդիրը բազմաշերտ է ու ավելի խորքային, քան առաջին հասցրից թվում է: Եթե իշխանության եւ հասարակության միջեւ ներդաշնակություն չկա, ապա երկրի ներսում կառուցվում են քարիկադներ՝ մսխելով պետության պոտենցիալը, բովանդակությունը:

Ժամանակակից դեմոկրատական պետությունները բարիկադների կարիք չեն ունենում՝ երկրի ներսում կամ դրանից դուրս:

88-ի շարժումը հենց ժամանակակից պետության ակունք էր, որը սակայն պղտորվեց ասիական «ոաբիսով»:

88-ի շարժման 30-րդ տարեդարձը պետք է դառնա հասարակության սուբյեկտության մեծացման ազդակ: Եթե հասարակությունը գործոն լինի, Սերժ Սարգսյան-Կարեն Կարապետյան երկընտրանքը կեղծ օրակարգ կդառնա, որովհետեւ այդ պարագայում նույնիսկ երկրորդական է, թե նրանցից ով կզբաղեցնի վարչապետի պաշտոնը: Ավելի շուտ՝ ժողովրդի իշխանության ինստիտուցիոնալիզացիան կբացադի նրանցից որեւէ մեկի վարչապետությունը<sup>66</sup>:

### «Ղարաբաղ» կոմիտե-2 (11.01.2018)

1988թ. սեպտեմբերին «Ղարաբաղ» կոմիտեն, նկատի ունենալով ձեռքակալվելու հավանականությունը, պայքարն ընդհատակում շարունակելու համար, ստեղծեց մի զուգահեռ գաղտնի կոմիտե հետեւյալ կազմով՝ Երջանիկ Աբգարյան, Դավիթ Շահնազարյան, Ավետիք Իշխանյան, Արշակ Սաղոյան, Ալբերտ Բաղդասարյան, որոնց հաջորդ տարվա մարտին միացան նաեւ Կիտյա Այվազյանը, Սմբատ Հակոբյանը եւ Ստեփան Ղարազեբակյանը (Մարգարյան):

«Ղարաբաղ» կոմիտեի մտահոգություններն անտեղի չէին: Արդեն երեք ամիս անց, դեկտեմբերի 7-ի երկրաշարժի առիթով

<sup>66</sup> [tin.am/2275663.html](http://tin.am/2275663.html), 10.01.2018թ.:

օգտագործելով, ԽՍՀՄ ղեկավար Միխայիլ Գորբաչովը կարգադրեց «Ղարաբաղ» կոմիտեի անդամների ձեռքակալությունը:

Հոգեվարքի մեջ գտնվող կայսրության վերնախավը գերագնահատել էր իր հնարավորությունները կամ ավելի շուտ՝ թերագնահատել էր Հայաստանում ծավալվող համազգային շարժման քաղաքական, կադրային պոտենցիալը: Այսպես կոչված՝ զուգահեռ կոմիտեն կամ «Ղարաբաղ» կոմիտե-2-ը ոչ միայն հետամուտ եղավ համազգային շարժման առաջնորդների ազատությանը, այլ նաեւ հետեւողականորեն հետապնդեց շարժման օրակարգը:

Երկրաշարժը խոր վիշտ ու ցավ էր ձգել հայ ժողովրդի սրտում, սակայն շնորհիվ շարժման երկրորդ այլքի առաջնորդների՝ հասարակությունը ոչ միայն կոնսոլիդացվեց, այլ նաեւ նոր թափ հաղորդեց պայքարին: Շուտով Մոսկվայում հասկացան, որ կոնկրետ առաջնորդների ձեռքակալություններով հնարավոր չէ կասեցնել համազգային շարժման ընթացքը: Այնքան հզոր էր շարժման էներգետիկան ու հարուստ կադրային բազան, որ, ըստ անհրաժեշտության, կարող էր ձեռավորվել մի քանի կոմիտե: Այս առթիվ գեղեցիկ ու պատկերավոր արտահայտվել է Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ մոսկովյան բանտարկությունից Երեւան վերադառնալուն պես, Մատենադարանի տարածքում հրավիրված բազմամարդ հանրահավաքում: Դիմելով հավաքված տասնյակ հազարավոր մարդկանց՝ Տեր-Պետրոսյանը նշեց, թե կոմիտեն ողջ հայ ժողովուրդն է:

1989-ի մայիսին՝ «Ղարաբաղ» կոմիտեի անդամների ազատության մեջ հայտնվելուց հետո, կոմիտե-2-ը, ըստ էության, չդադարեցրեց գործունեությունը, մանավանդ, որ շուտով տեղի ունեցավ Հայոց Համազգային Շարժման առաջին համագումարը, որի ընթացքում վարչության անդամ ընտրվեցին զուգահեռ կոմիտեի բոլոր անդամները՝ ըստ էության, ամբողջացնելով շարժման հարթակը<sup>67</sup>:

<sup>67</sup> [tin.am/2276218.html](http://tin.am/2276218.html), 11.01.2018թ.:



## Համազգային շարժման առաջին երեւանցի զոհը եւ «բարի Սովետի» լեգենդի փլուզումը

(12.01.2018)

1988-ի հուլիսի 5-ին տեղի էին ունենում դրամատիկ իրադարձություններ: Խորհրդային զորքերը մտցվել էին Երեւան, եւ փորձ էր արվում ուժային մեթոդներով ճնշել Համազգային շարժումը: Խորհրդային իշխանությունը որոշել էր վերահսկողության տակ վերցնել «Չվարթնոց» օդանավակայանը: «Չվարթնոցի» աշխատակիցները դիմադրում էին, որովհետեւ հասկանում էին, որ դրանով Հայաստանը կգրկվի կարեւոր արտաքին հաղորդակցությունից: Այս վիճակում Համազգային շարժումը երթով շարժվեց դեպի «Չվարթնոց» օդանավակայան՝ վերջինիս փակումը թույլ չտալու համար<sup>68</sup>: Երթի ընթացքում, դեպի օդանավակայան տանող Փարաքարի հայտնի խաչմերուկում սովետական սպայի կրակոցից զոհվեց 22-ամյա լուսանկարիչ Խաչիկ Զաքարյանը, որը համարվում է Ղարաբաղյան շարժման առաջին երեւանցի զոհը:

Այդ օրերի դրամատիկ իրադարձությունները պատկերավոր նկարագրել է լրագրող Լիզա Ճաղարյանը. «Ինքնաբուխ համազգային սո՛ւգ. դա հենց Խաչիկին վերջին հրաժեշտն էր: Ողջ մայրաքաղաքը փողոց էր դուրս եկել: Ազատության հրապարակից մինչեւ քաղաքի ծայրամասերից մեկի գերեզմանատունը՝ մայթերին ոտք դնելու տեղ չկար: Արտասվում էին բոլոր արտասվել կարողացողները, լուռ մղկտում էին բոլոր լուռ մղկտալ կարողացողները, ցավեցնելու աստիճան ատամները սեղմում էին բոլոր ատամ ունեցողները: Խաչիկն ակամա դարձել էր սովետական տարիների «դարավոր բարեկամի» մասին հեքիաթը հօսք ցնդեցնողը, Խաչիկի սպանությունն այն սառը ջուրն էր, որ թափվեց բոլորիս գլխին ու սթափեցրեց. «Սրանք ամեն ինչի ընդունակ են, սրանք մեզ տանկերով էլ կտորոբեն-կանցնեն»: Թե ինչու էինք այդքան ուշ ու

<sup>68</sup> Այդ երթը կազմակերպել էր ոչ թե Համազգային շարժումը, այլ սարդիսների մի խումբ (մանրամասն տե՛ս Աշոտ Սարգսյան, Ղարաբաղյան շարժման պարմություն 1988-1989, Երեւան, Անկարես, 2018, էջ 134-142):

դժվարությամբ հասկացել պարզ ճշմարտությունը, եւ հիմա՛ ինչու են շատերը մոռացել այս պարզ ճշմարտությունը՝ սրա մասին շատ է խոսվել, դեռ էլի շատ ու շատ կխոսվի, եւ հույսս չեմ կտրում, որ մի օր տեղ կհասնի»<sup>69</sup>:

Խաչիկ Զաքարյանի մահն իսկապես խորհրդանշական իրադարձությունն էր, այն թանկ գինը, որը հայ ժողովուրդը վճարեց ԽՍՀՄ նկատմամբ ունեցած պատրանքները թողափելու համար: Հայաստանի ժողովուրդը գիտակցեց, որ ԽՍՀՄ-ը դասական կայսրություն է, որն առաջնորդվում է ոչ թե հումանիզմի գաղափարներով, այլ իր մեծապետական շահերով՝ անտեսելով հատկապես փոքր ժողովուրդների շահերը: Թվում էր՝ 88-ի համազգային շարժման հիմնական ձեռքբերումներից մեկը «օրինված սիաթի» պրիմիտիվ կարծրատիպը փշրելն էր: Համենայնդեպս, այդպես էր Հանրապետության առաջին տարիներին, ու թերեւս դրա շնորհիվ նորանկախ Հայաստանը կարողացավ պատվով հաղթանակ տանել Ադրբեջանի ու ԽՍՀՄ-ի, հետո՝ Ռուսաստանի հետ անհավասար պատերազմում:

Ինչքան իշխանությունները նահանջեցին 88-ի արժեքներից, այնքան Հայաստանում Ռուսաստանը վերականգնեց իր ազդեցությունը, մեր երկիրը դարձավ չձեռակերպված կայսրության մասը: Նույնիսկ 2016-ի Ապրիլյան պատերազմը, որի ժամանակ հարյուրից ավելի հայրողիներ նահատակվեցին Ադրբեջանին մատակարարված ռուսական սպառազինությունից, Հայաստանի քաղաքական օրակարգ չբերեց ապագադրությամբ պահանջը: 88-ի համազգային շարժման 30-րդ տարեդարձը դիմավորում ենք ռուսական ֆորպոստի կարգավիճակով՝ մեր հասարակության նոր պոռթկումը դարձնելով անհրաժեշտություն<sup>70</sup>:

<sup>69</sup> Լիզա Ճաղարյանի՝ հոդվածը տե՛ս <http://hambardzum.am/hy/xosq/tiza-khachik.html>:

<sup>70</sup> [in.am/2276860.html](http://in.am/2276860.html). 12.01.2018թ.:

## Զինագործ հերոսը նահատակվեց իր նախագծած նռնակի փորձարկումից (13.01.2018)

Էդիկ Տոռոզյան՝ 88-ի համազգային շարժման լուսավոր կերպարներից մեկը: Նա արցախյան պատերազմի առաջին զոհն է: 35 տարեկան էր: Չամուսնացած: Նոր Հաճնի «Սապֆիր» գործարանում աշխատում էր որպես կոնստրուկտոր-ինժեներ: Էդիկին ճանաչում էին միայն նրա հարազատ քաղաքում՝ Նոր Հաճնում, մերձավոր ընկերական շրջապատում, ԱԻՄ-ում. նա երդվյալ անկախական էր, չէր հավատում կայսրությանը, Սովետի հումանիզմին ու ԼՂ խնդրի արդարացի լուծմանը: Նա մարդկային այն տեսակն էր, որ լուռ, նվիրումով՝ առանց բարձրագույն ելույթների, ծառայում էր հայրենիքին՝ մարտիրոսության ճանապարհին կերտելով հայրենիքի նվիրյալի կերպարը:

Սումգայիթի հայկական ջարդերը, Արցախում հաճախակիացող սադրանքները մտահոգիչ էին: Սկսում է առարկայանալ «Սապֆիր» ԱՄ արտադրական բազայի հիման վրա գեներալ արտադրություն կազմակերպելու գաղափարը: Էդիկ Տոռոզյանը 1988-ին նախագծում, ապա զինագործ ընկերների մասնակցությամբ գործարկում է պատրույգային նռնակների ընդհատակյա արտադրությունը, որի թողարկած առաջին խմբաքանակն ուղարկվում է Նախիջեանի Ջնաբերդ գյուղի ինքնապաշտպանության կազմակերպիչներին: Նռնակների արտադրությանը զուգընթաց շարունակվում են նաեւ այլ զինատեսակների ձեռքբերման, տեղի բազայի հիման վրա նախագծման, արտադրության եւ փորձարկման աշխատանքները:

Էդիկ Տոռոզյանը զոհվում է «կապսուլային» նռնակի հերթական փորձարկման ժամանակ:

Էդիկ Տոռոզյանը նահատակվեց 1989թ.-ի օգոստոսի 8-ին: Հուղարկավորության օրը հայրենի Նոր Հաճնը դարձել էր արժանապատվության ու վշտի, հաղթանակի ու ցամախ յուրօրինակ ներդաշնակություն:

Փառանձեմ մայրիկը՝ հերոսի մայրը, տարիներ առաջ հիշել է մի դրվագ որդու հուղարկավորության արարողությունից. «Բալայիս մարմինն արդեն «տանում էին», «Շողակն»-ի տնօրենը ներս մտավ, ասացի՝ Աշոտ Նիկիտիչ, չե՛մ ամոսում, Ղարաբաղին մատաղ եմ արել իմ բալայիս, մենակ խնդրում եմ, բայիս գործերը շարունակեք, Ղարաբաղը փրկեք: Հիմա, Աստված մի արասցե, եթե մի բան լինի, էլի պետք կգամ, ուրիշ բան որ չէ, համով ճաշեր եմ եփում... կովեն, նորից հաղթեն»:

Նոր Հաճնի կենտրոնական փողոցը այսօր կրում է Էդիկ Տոռոզյանի անունը, սակայն արդեն 29 տարի քաղաքից բացակայում է միայն Էդիկին քնորոշ ոգին, այն կրակը, որ ծնվեց հայրուրավոր հայրորդիների հոգիներում՝ դառնալով համազգային շարժում, երրորդ հանրապետություն, հաղթանակ արցախյան պատերազմում: Հազար փառք, վասն հայրենյաց նահատակվածների<sup>71</sup>...

## Ո՞վ էր կանգնած ՀԱԲ-ի թիկունքում (14.01.2018)

1988–89 թթ.-ին հայ-ադրբեջանական սահմանին եւ Արցախում լարվածության մեծացմանը զուգահեռ ձեւավորվեցին ինքնապաշտպանության ջոկատներ, որոնց մեծ մասը գործում էր ՀՀԵ-ի հովվանու ներքո՝ ենթարկվելով միասնական հրամանատարության: Աշոտ Նավասարդյանի հիմնադրած «Անկախության բանակը»՝ թեեւ ինքնուրույն կազմակերպչական կառույց էր, սակայն սերտ համագործակցության մեջ էր ՀՀԵ-ի ջոկատների եւ նրանց հրամանատար Վազգեն Սարգսյանի հետ: Շարժման քաղաքական եւ կազմակերպչական տրամաբանությանը հակառակ էր գործում միայն «Հայրց ազգային բանակ» (ՀԱԲ) ռազմական խմբավորումը, որն ավելի շատ աչքի էր ընկնում ոչ թե առաջնագծում, այլ՝ Երեւանում, որտեղ ՀԱԲ-ի ջոկատները հակադրվում էին ՀՀԵ-ին, շատ դեպքերում գրաված էին ռեկետով:

<sup>71</sup> [lin.am/2277505.html](http://lin.am/2277505.html), 13.01.2018թ.:



Իրագրի վասիլյանի ղեկավարած ՀԱԲ-ում կային նվիրյալներ, սակայն ղեկավարության մեջ գերակշռում էին արկածախնդիր ու կրիմինալ հակումներ ունեցող մարդիկ: ՀԱԲ-ի մասին հանրային տրամադրությունները բեռնացված էին: հասարակության մի մասը նրանց համարում էր հայրենիքի նվիրյալներ, մյուսները պնդում էին, որ ՀԱԲ-ը ձեռավորվել է Մոսկվայի ցուցումով՝ համազգային շարժումը պատակտելու համար:

Փաստն այն է, որ ՀԱԲ-ը հրաժարվեց զինաթափվել անգամ 1990-ի օգոստոսին, երբ իշխանության եկավ ՀՀԸ-ն, որը քայլեր էր ձեռնարկում ազգային զինված ուժեր ստեղծելու ուղղությամբ: Այդ օրերի վարչապետ Վազգեն Մանուկյանը մի հարցազրույցում ասել է. «Իմ պաշտոնավարման տարիներին բավականին մեծ պայքար գնաց ջոկատները կարգավորելու համար: Ջոկատները զինված էին, եւ ոստիկանությունը ոչինչ էր նրանց դիմաց. ոչնչից չէին վախենում: Եւ, որպեսզի երկիրը կառավարելի դառնար, մեծ ջանքեր էին պահանջվում կառավարությունից: Առաջին ընդհարումն այդ ժամանակ ՀԱԲ-ի հետ տեղի ունեցավ, որը զինված էր եւ շատ անկառավարելի: ՀԱԲ-ը չէր ենթարկվում իշխանություններին՝ հայտարարելով, որ իրենք ավելի հայրենասեր են, իրենք պետք է որոշեն ռազմական վիճակն ու սեփական պատերազմներ պիտի մղեն: Երբ մի դեպքից հետո ինձ դիմեցին Վանո Սիրադեղյանը եւ Վազգեն Սարգսյանը, ես՝ որպես վարչապետ, ՀԱԲ-ի շտաբը գրավելու համաձայնություն տվեցի, եւ գիշերը գրավման ժամանակ զոհեր եղան: Բայց դա անիրաժեշտ քայլ էր Հայաստանում խուճապությունը վերացնելու եւ կարգ ու կանոն հաստատելու համար»:

Ըստ պաշտոնական վարկածի՝ «Օգոստոսի 28-ի լույս 29-ի գիշերը ՀԱԲ-ի զինված ջոկատներն անցել են բացահայտ ահաբեկչական գործողությունների: Վրաերթի է ենթարկվել եւ ծանր մարմնական վնասվածքներով հիվանդանոց է տեղափոխվել պատգամավոր Ռաֆայել Իշխանյանը: Գնդակոծվել է Երեւան քաղաքի 26 կոմիտաների շրջանի բենզակայանը պաշտպանող հասարակական կարգի պահպանության ջոկատը, որի հետեւանքով վիրավորվել է 3 մարդ: Միջադեպը պարզաբանելու նպատակով ՀԱԲ-ի շտաբ

ժամանած պատվիրակությունը մեքենայից իջնելու պահին գնդակոծել են ՀԱԲ-ի մարտիկները: Դրա հետեւանքով վիրավորվել են հասարակական կարգի պահպանության ջոկատի անդամ Գեղազնիկ Միքայելյանը եւ պատգամավոր Վիտյա Այվազյանը, որոնք մի քանի ժամ հետո մահացել են»:

ՀԱԲ-ի ղեկավարությունը ձերբակալվեց, սակայն մինչեւ վերջ շարունակում էր պնդել, որ իր դեմ քաղաքական հաշվեհարդար է տեղի ունեցել, որովհետեւ իբրեւ թե ՀԱԲ-ը ՀՀԸ-ի միակ այլընտրանքն էր: Իրականում՝ ՀԱԲ-ը չէր վայելում հասարակության զանգվածային աջակցությունը, ավելին՝ ինքնակոչ բանակի թեզը քննադատության չի դիմանում, որովհետեւ ոչ մի իշխանություն չի հանդուրժելու ոչ պետական զինված խմբերի առկայությունը<sup>72</sup>:

### Երկու Ռաֆայելները կամ համազգային շարժման մտավորական դեմքը

(14.01.2018)

Մեր ժամանակներում սեփական տեսակետ ունեցող, արժեքային համակարգի կրող մտավորականներին կարելի է հաշվել մատերի վրա: Հասարակության դեգրադացիայի պատճառներից մեկը հենց, այսպես կոչված, էլիտայի բացակայությունն է, որն իր արժեքներով ու վարքով ուղենիշ պետք է դառնա ժողովրդի համար: 88-ի համազգային շարժման բարոյական ուժը նաեւ անվանի մտավորականների ակտիվ մասնակցությունն էր պայքարին:

«Ղարաբաղ» կոմիտեն հնարավոր չէր պատկերացնել առանց հայտնի ռադիոֆիզիկոս, ակադեմիկոս Ռաֆայել Ղազարյանի: Չնայած պատկառելի տարիքին եւ գիտական անուրանալի մեծ վաստակին՝ 1989թ. հունվարին Ռաֆայել Ղազարյանը, «Ղարաբաղ» կոմիտեի մյուս անդամների հետ միասին, ձերբակալվել եւ մինչեւ հունիս պահվել է Մոսկվայի Բուստրյան բանտում:

<sup>72</sup> in.am/2277957.html, 14.01.2018թ.:

Չնայած փորձություններին ու հիասթափություններին՝ Ռաֆայել Ղազարյանը մինչև կյանքի վերջը հավատարիմ մնաց համազգային շարժման արժեքներին, մտավորականի կոչմանը, քաղաքացիական կեցվածքին: Կյանքի վերջին օրերին Ղազարյանն իր տանը կազմակերպեց իր ընկերների՝ Երրորդ հանրապետության առաջին նախագահ Լեոն Տեր-Պետրոսյանի և առաջին վարչապետ Վազգեն Մանուկյանի հանդիպումը<sup>73</sup>:

Ակադեմիկոսը փափագում էր հաշտեցնել իր երկու կրտսեր ընկերներին, որպեսզի նրանք միասնական հանդես գան 2008-ի նախագահական ընտրություններում՝ կրկնելով 88-ի շարժման էֆեկտը: Ավաղ, այդ հանդիպումից օրեր անց Ռաֆայել Ղազարյանը հրաժեշտ տվեց երկրային կյանքին՝ չհասցնելով իրականություն դարձնել իր ծրագիրը:

88-ի համազգային շարժման կարետր ուղղություններից մեկը հայապահպանությանը, ազգային դպրոցին և լեզվին վերաբերող հարցերն էին: Այս ուղղությամբ աշխատանքները համակարգում էր հայտնի լեզվաբան, քանասեր, պատմաբան Ռաֆայել Իշխանյանը: Նա հրապարակայնորեն անողորմ պայքար էր մղում ռուսական դպրոցների, ազգային նկարագիրը խեղող օտարաձին դրսևորումների և քաղքենիական տրամադրությունների դեմ: Ռաֆայել Իշխանյանը նաև 88-ի շարժման գաղափարախոսներից մեկն էր. նրա գրչին է պատկանում «Երրորդ ուժի բացառման օրենքը» հոդվածաշարը, որը նոր խոսք էր քաղաքական նոր մտքի ձեռավորման գործում:

Ռաֆայել Իշխանյանը 1991 թվականից մինչև կյանքի վերջը՝ 1995թ-ը, Հայաստանի ազգային գրադարանի տնօրենն էր ու անխոնջ ծառայում էր հայապահպանությանը, ազգային կրթությանը՝ հետևողականորեն պահանջելով անցում կատարել միասնական ուղղագրությանը<sup>74</sup>:

<sup>73</sup> Տե՛ս նաև Թ. 25:

<sup>74</sup> [in.am/2278274.html](http://in.am/2278274.html), 14.01.2018թ.:

## Ուսանողական լուսավոր շարժումը, որի ընդերքից ծնվեց ռճրագործը

(16.01.2018)

Համազգային շարժման ծավալմանը զուգահեռ թափ էր հավաքում ուսանողական շարժումը, որի առաջնորդների շարքում եղել է նաև Հոկտեմբերի 27-ի ռճրագործ խմբի ղեկավար Նաիրի Հունանյանը: Այդ թվերի ուսանողական շարժման մասին հակասական կարծիքներ կան: Ոմանք ասում են, թե այն ավտոնոմ շարժում է եղել, սակայն ավելի արժանահավատ է թվում այն վարկածը, որ գործ ունենք համազգային պայքարի ուսանողական դրսևորման հետ: Ասում են՝ «Ղարաբաղ» կոմիտեի և ուսանողական շարժման կապը հաստատել է Վանո Սիրադեղյանը, ով այդ շրջանում հաճախակի էր այցելում ԵՊՀ բանֆակ:

1988թ. մայիսին հայաստանյան բուհերի ուսանողները Օպերայի և բալետի ազգային-ակադեմիական թատրոնի աստիճանահարթակին կազմակերպեցին նստացույց՝ պահանջելով Գերագույն Խորհրդի նստաշրջան հրավիրել և քննարկել ԼՂԻՄ ներկայացուցիչների դիմումը Հայաստանի հետ վերամիավորվելու մասին:

Հայտնի լրագրող Աննա Իսրայելյանը եղել է պատմական նստացույցի մասնակիցներից մեկը և երանությամբ հիշում է այդ օրերը. «Պետք է անհամեստորեն նշեմ, որ 1988-ի մայիսի նստացույցը այն քիչ ակցիաներից մեկն էր, որն արձանագրեց պատմական արդյունք: Օպերայի աստիճանների վրա նստացույց նախածենուեց բանասիրականի ֆակուլտետը, որը ուսանողական շարժման առանցքն էր, հետո մեզ միացան այլ բուհերի ուսանողներ: Նստացույցը սկսվեց մայիսի 27-ին և ավարտվեց հունիսի կեսերին, երբ անվերապահորեն բավարարեցին մեր բոլոր պահանջները: Այդ օրերին Գերագույն Խորհուրդը բանակցությունների գնացած ցուցարարների ընդունեց Վլադիմիր Մովսիսյանը: Մենք վճռականորեն հայտարարեցինք, որ չենք հեռանալու Օպերայի հրապարակից, մինչև չկատարեն մեր պահանջները: Նա էլ հուճկոմով ասաց, որ մինչև չհեռանանք հրապարակից, ինքը Սուրեն



Հարությունյանին չի զեկուցի մեր պահանջների մասին: Նստացուցի ժամանակ բոլորը մեզ աջակցում էին: Ամբողջ գիշեր մեզ համար նվազում եւ երգում էին Ռուբեն Հախվերդյանը եւ Արթուր Մեսչյանը: Հենց առաջին գիշերը հարակից շենքերի բնակիչները սկսեցին ծածկոցներ բերել մեզ համար: Մարդիկ խմորեղեններ էին պատրաստում, մատաղ էին անում եւ բերում էին մեզ»:

Չարմանալ կարելի է, թե նման լուսավոր միջավայրից ինչպես կարող էր ծնվել ոճրագործ, որը դարձավ Հայաստանի պատմության ամենասեւեռ էջերից մեկի հեղինակը: Նաիրի Հունանյանին մոտիկից ճանաչողները պատմում են, որ դեռ շարժման տարիներին նա եղել է ինքնասիրահարված, ամբիցիոզ եւ բարոյաթավորված երիտասարդ: Հունանյանը հատկապես չէր կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ այդպես էլ օտարված մնաց քաղաքական, պետական կյանքից: Համազգային շարժումից հետո, տեսական մի շրջան, ապագա ոճրագործը բացակայել է Հայաստանից:

Դարձյալ մեջբերենք Աննա Իսրայելյանին. «Նաիրիի կապը ինչոր պահ կտրվեց Հայաստանի հետ: Երբ նա վերադարձավ Ղրիմից, պարզվեց, որ իր մասին բոլորը մոռացել են: Նա մի հանդիպում նախաձեռնեց բանասիրական ֆակուլտետի 220 լսարանում, որտեղից ժամանակին նստացուցերն էին սկիզբ առնում: Նրան թվում էր, որ այդ հանդիպումն իր վերադարձն է հայկական իրականություն, սակայն դա մի սովորական միջոցառում էր եւ մեծ աղմուկ չբարձրացրեց: Ի դեպ, հրավիրել էր նաեւ Վազգեն Սարգսյանին: Նա ուզում էր վերադառնալ որպես հերոս, նրան առաջնորդում էին անձնական նկրտումները: Չգիտեմ՝ որքանով այդ ամենը ազդեցություն ունեցավ իր հետագա քայլերի վրա...»:

Նաիրի Հունանյանին հանգիստ չէր տալիս Հերոսդատտոսի «փառքը». նա դարձյալ դարձավ հանրահայտ՝ նույնանալով մեր պետության եւ ժողովրդի արյունարբու, ոխերիմ թշնամիների հետ<sup>75</sup>:

## «Ղարաբաղ» կոմիտեի պառակտումները (16.01.2018)

«Ղարաբաղ» կոմիտեն համազգային շարժման միասնականության խորհրդանիշն է, սակայն հանրահավաքի հարթակը հենց շարժման առաջին ամիսներին ենթարկվել է փոփոխությունների: Փետրվարի առաջին հանրահավաքներում առաջին պլանում էին Իգոր Մուրադյանը, Վաչե Սարուխանյանը, մտավորականության ներկայացուցիչներ:

Իգոր Մուրադյանը «Ղարաբաղ» կոմիտեից հեռացավ մայիսին: Հասարակությունը գուցե անտեղյակ է այն բուն քննարկումներից, որոնք մինչեւ մայիս կոմիտեի ավելի ընդլայնված կազմով տեղի են ունեցել Վազգեն Մանուկյանի եւ Բարկեն Արարեցյանի բնակարաններում: Իգոր Մուրադյանը մասնավորապես եղել է այն տեսակետի կրող, որ Մոսկվայի հետ բանակցությունները պետք է շարունակել՝ լարվածությունից խուսափելու նպատակով:

Կոմիտեի հիմնական կազմը հակադրվել է այդ տեսակետին՝ Մոսկվայի հետ բանակցությունները համարելով ժամավաճառություն: Քննարկումները տրամաբանական ավարտին հասան մայիսի 21-ին, երբ հանրահավաքի հարթակից հրապարակվեց 11 գործիչների անուններ (ցուցակում չկար Իգոր Մուրադյանի անունը), որը հենց «Ղարաբաղ» կոմիտեի հիմնական միջուկն էր, եւ որը հետո դարձավ ՀՀԻ-ի եւ Երրորդ հանրապետության առաջին իշխանության հիմքը: 1988-ի մայիսից «Ղարաբաղ» կոմիտեի կազմը մնաց անփոփոխ եւ հենց այդ ղեկավար կազմով էլ համազգային շարժումը ձեւավորեց նորանկախ Հայաստանի առաջին իշխանությունը:

Կոմիտեն միասնական էր կայսրության դեմ պայքարում եւ շարժումային տրամաբանության մեջ, սակայն կոմունիստական իշխանության տապալումից հետո օբյեկտիվորեն երեսան եկան քաղաքական եւ գաղափարական հակասությունները: Կոմիտեի բաժանման պատճառներից մեկը դարձավ 1991թ. Անկախության հանրաձայն օրվա նշանակումը:

Լեւոն Տեր-Պետրոսյանի կողմնակիցները մտածում էին, որ անկախացումը պետք է տեղի ունենա օրինական ճանապարհով՝

<sup>75</sup> [in.am/2278911.html](http://in.am/2278911.html), 16.01.2018թ.:

խորհրդային Միությունից հանրապետությունների դուրս գալու մասին մոսկովյան նոր օրենքով: Վարչապետ Վազգեն Մանուկյանը եւ նրա կողմնակիցները պնդում էին, որ վեց ամիսը երկար ժամանակ է եւ պնդում էին հանրաքվեն անցկացնել ոչ սեպտեմբերին, այլ՝ մայիսին: Լեւոն Տեր-Պետրոսյանի գիծը հաղթանակ տարավ:

Այնհայտ էր, որ ՀՀ-ում առաջացել են թեւեր, ինչի հետեւանքով Վազգեն Մանուկյանի կողմնակիցները հայտնվել էին փոքրամասնության մեջ: Այն բանից հետո, երբ Գերագույն խորհուրդը որոշում կայացրեց նախագահական ինստիտուտ ներդնելու մասին<sup>76</sup>, Վազգեն Մանուկյանն ու նրա կողմնակիցները հեռացան ՀՀ-ից՝ ձեռավորելով ԱԺԲ-ն:

Լեւոն Տեր-Պետրոսյանը 1991-ի նախագահական առաջին ընտրություններում համոզիչ հաղթանակ տարավ: Սակայն սա արդեն ոչ թե համազգային շարժման միասնական թեկնածուի, այլ կուսակցության վերածված ՀՀ-ի ազդեցիկ ու խարիզմատիկ առաջնորդի հաղթանակն էր<sup>77</sup>:

### Համազգային գթությունից՝ համազգային անեծք

(18.01.2018)

Երբ մեկնարկեց 1988-ի համազգային շարժումը, հաչիկ Ստամբուլյանն աշխատում էր ՀՀ ԳԱԱ փորձարարական կենսաբանության ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող: Նրա գործընկերները պատմում են, որ Ստամբուլյանի ակտիվության հետագիծը տանում է մինչեւ 90-ականների կեսեր, երբ նա նախաձեռնում էր կիսաընդհատակյա հանդիպումներ, ժողովներ բնապահպանական թեմաներով:

<sup>76</sup> *Նախագահական ինստիտուտ ներդնելու մասին որոշումը կայացվել էր դեռեւս խորհրդային Հայաստանի Գերագույն խորհրդի կողմից, 1990թ. մայիսի 3-ին (տրես ՀԽՍՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր, 1990, 9, հոդվ. 112):*

<sup>77</sup> *tin.am/2279676.html. 16.01.2018թ.:*

Քննարկումների հիմնական թեմաներն էին «Նաիրիտը», Մեծամորի ԱԷԿ-ը: Այս թեմաները Ստամբուլյանի ու մյուս «կանաչների» հետ եկան համազգային շարժման օրակարգ: Հետագայում ժողովուրդը «Նաիրիտի», Մեծամորի ԱԷԿ-ի փակումը կապեց հիմնականում հաչիկ Ստամբուլյանի անվան հետ՝ նրան մեղադրելով Հայաստանի տնտեսությանը հասցված վնասի համար: Արդարությունը, սակայն, ստիպում է արձանագրել, որ արդյունաբերական եւ էներգետիկ հսկաների դիսկայնության վերաբերյալ կասկածներ առաջացան նաեւ Մոսկվայի եւ Երեւանի կոմունիստական իշխանությունների մոտ, երբ 1988-ի դեկտեմբերի 7-ին տեղի ունեցավ Սպիտակի ավերիչ երկրաշարժը:

Շարժման տարիներին Ստամբուլյանը հիմնադրել ու ղեկավարել է «Գթություն» կազմակերպությունը, որը կոչված էր բարեգործական ծրագրեր իրականացնել հանրապետությունում: Կոմունիստական իշխանության նկատմամբ հասարակության տոտալ անվստահության պայմաններում այդ կազմակերպությունը դարձել էր համազգային գթության խորհրդանիշը: 88-90 թթ.-ին հաչիկ Ստամբուլյանն ուներ այնքան հեղինակություն, որքան՝ «Նարաբաղ» կոմիտեի անդամները:

Պատահական չէ, որ երկրաշարժին հաջորդած օրերին նա, կոմիտեի անդամների հետ միասին, ձերբակալվեց: Ի դեպ, հաչիկ Ստամբուլյանը, շարժման մի քանի գործիչների հետ միասին, կոմունիստական իշխանության տարիներին ընտրվեց ՀԽՍՀ 11-րդ գումարման Գերագույն խորհրդի պատգամավոր: Կոմունիստական իշխանության տապալումից հետո հանրության վերաբերմունքը հաչիկ Ստամբուլյանի հանդեպ արմատապես փոխվեց: ՀՀ-ի իշխանության առաջին տարիներին նա Գերագույն խորհրդում ղեկավարում էր աղետի գոտու խնդիրներով զբաղվող մշտական հանձնաժողովը:

Մարդիկ հաչիկ Ստամբուլյանին մեղադրում էին, որ որպես «Գթություն» կազմակերպության ղեկավար՝ իր ձեռքն է կենտրոնացրել Սպիտակի երկրաշարժի հետեւանքով աղետի գոտու կարգավիճակ ստացած բնակավայրերին հասցեագրված ամբողջ



օգնությունը, եւ այդ օգնությունը տնօրինել ըստ իր անձնական ցանկության ու հիմնականում ոչ միշտ իր նպատակին ծառայեցնելով: Դժվար է ասել՝ ինչքանով են հիմնավոր այդ մեղադրանքները, բայց փաստն այն է, որ 1994-ից սկսած՝ Խաչիկ Ստամբուլցյանին իրենից օտարեց ոչ միայն կառավարող ՀՀԵ-ն, այլ նաեւ՝ ընդհանրությունը: Շարժման տարիներին Խաչիկ Ստամբուլցյանը համազգային գաթիայան խորհրդանիշ էր, հետո դարձավ համազգային անեծքի թիրախ<sup>78</sup>:

### 1990-ի հունվարին արդեն պատերազմ էր

(19.01.2018)

1990-ի հունվարը նշանավորվեց ոչ միայն Բաքվի ջարդերով, այլեւ, ըստ էության, առաջին լուրջ պատերազմական գործողություններով: Ղարաբաղյան առաջին պատերազմի պաշտոնական մեկնարկ համարվում է 1992թ-ը, սակայն 1990-ի հունվարին արդեն իսկական պատերազմ էր, ընդ որում՝ հայկական ինքնապաշտպանական ուժերը ստիպված էին կռվել ոչ միայն ադրբեջանական հրոսակների, այլ նաեւ՝ խորհրդային զորքերի դեմ:

Հունվարի 2-ից սկսվեցին փոխիրաձգությունները ԼՂԻՄ-ի տարածք ներխուժած ադրբեջանցի զինյալների հետ: Հունվարի 9-ին ադրբեջանական զինված ջոկատներն անցան լայնածավալ գրոհի ԼՂԻՄ-ի սահմանամերձ գոտում, ինչպես նաեւ Գետաշենի ենթաշրջանի հայկական գյուղերի վրա, սակայն անհաջողություն կրեցին՝ հանդիպելով ինքնապաշտպանական ուժերի լուրջ դիմադրությանը: Հունվարի 12-ին Ադրբեջանի ժողճակատը անցկացրեց հակահայկական հանրահավաք Բաքվում:

Նույն օրը սկսվեց ադրբեջանական տեխնիկապես հագեցած եւ լավ զինված ջոկատների հարձակումը Մանաշիդ, Կամո եւ Ազատ գյուղերի վրա: Սակայն տեղացի հայերից կազմված ինքնապաշտպանական ջոկատները, որոնք տեխնիկապես բավականին զիջում

<sup>78</sup> [in.am/2280392.html](http://in.am/2280392.html). 18.01.2018թ.:

էին թշնամուն, պատվով պաշտպանեցին հարազատ գյուղերն ադրբեջանցիներից: Մոտ մեկ օր տեսած մարտերից հետո ադրբեջանական ուժերը, կրելով ծանր կորուստներ, ստիպված էին նահանջել: Հարձակվում, ավերում, թալանում էին ադրբեջանական ուժերը, սակայն Մոսկվան պատժում էր ինքնապաշտպանության դիմած հայկական կողմին. հունվարի 15-ին արտակարգ դրություն մտցվեց ԼՂԻՄ-ում եւ ՀԽՍՀ-ում:

ԼՂԻՄ մտցվեցին խորհրդային ջոկատներ, որոնք զինաթափում էին հայերին, ինչից հետո բնակավայր էին մտնում ադրբեջանական ուժերը՝ կալանելով եւ բռնության ենթարկելով անգն հայերին: Ձերբակալվածներին տանում էին Շուշի եւ Խոջալու՝ հետագայում փրկագնով ազատելու նպատակով: Նույն «անձնագրային ռեժիմ»-ի ստուգման անվան տակ նման գործողություններ իրականացվում էին ԼՂԻՄ-ի եւ հարակից բնակավայրերում: Հունվարի 15-ին հայկական ինքնապաշտպանական ուժերն ազատագրեցին Նախիջեանի սահմանագծին գտնվող Քարքին, որն ազատագրումից հետո վերանվանվեց Տիգրանաշենի՝ գյուղի գրավման ժամանակ տրված միակ զոհի՝ Ավշարի ինքնապաշտպանության հրամանատար Տիգրան Մելիքյանի հիշատակին:

Հունվարի 13-ին, ադրբեջանական ուժերը հատեցին հայ-ադրբեջանական սահմանը եւ տեղակայվեցին Երասխա ավանում՝ տեղորի ենթարկելով հարակից բնակավայրերը: Երասխի դիրքը ռազմավարական էր. մի կողմից՝ ավանի վերահսկողությունը հնարավորություն է տալիս հսկել հանրապետության գլխավոր մայրուղիներից մեկի՝ Երեւան-Մեղրի ավտոմայրուղու Արարատ-Եղեգնաձոր հատվածը, մյուս կողմից՝ այն գտնվում է մայրաքաղաք Երեւանից ընդամենը 55 կմ հեռավորության վրա:

Հունվարի 18-ին հայկական ինքնապաշտպանական ուժերը շեշտակի գրոհ հասցրին ադրբեջանցիներին, ծավալվեց երկար ճակատամարտ: Երեք օր տեսած թեժ մարտերի ավարտին հայկական ուժերին հաջողվեց մաքրել Երասխը եւ թշնամուն հետ շարժել, միաժամանակ խցելով դրա դիրքերը Սադարակում եւ Նորաշենում: Մարտում հայկական կողմի հրամանատարն էր

Վազգեն Սարգսյանը: Երասխի մարտում հերոսի մահով ընկավ Մովսես Գորգիսյանը<sup>79</sup>:

## Մովսեսը մարտիրոսվեց Երասխի մարտում

(20.01.2018)

Երբ 1988թ.-ին մեկնարկեց համազգային շարժումը, ռեժիսոր Մովսես Գորգիսյանը չէր բոլորել երեսունամյակը: Չնայած այս հանգամանքին՝ Մովսես Գորգիսյանը դեռ 88-ից առաջ ակտիվորեն ներգրավվել էր քաղաքական պայքարի մեջ:

Մովսես Գորգիսյանը համոզված անկախական էր: Նա 1987թ. սեպտեմբերին դարձավ ԽՍՀՄ տարածքում առաջին բացահայտ գործող քաղաքական այլընտրանքային կազմակերպության՝ Պարույր Հայրիկյանի ստեղծած Ազգային ինքնորոշում միավորման (ԱԻՄ) վարչության անդամ: Հայրիկյանի՝ ԱՄՆ-ում գտնվելու պայմաններում, Մովսեսը ԱԻՄ փաստացի առաջնորդն էր:

Համազգային շարժման հարթակում Գորգիսյանն առանցքային դերակատար չէր, որովհետև հատկապես առաջին ամիսներին անկախության գաղափարը պոպուլյար չէր ժողովրդի շրջանում: Միեւնույն ժամանակ՝ Մովսես Գորգիսյանը լուսավոր կերպար էր եւ սիրված ժողովրդի կողմից:

Նա առաջինն էր, որ 1988թ. մայիսի 28-ին Ազատության հրապարակում ծածանեց նվիրական եռագույնը: Ի դեպ, 1988-ի մայիսը գլոբալ իմաստով բեկումնային էր շարժման համար, որովհետև վերջնական տեսքի եկան «Ղարաբաղ» կոմիտեի կազմն ու ծրագիրը. ՀԽՍՀ սովետներիտետի հարցն աստիճանաբար գալիս էր առաջին պլան:

Մովսես Գորգիսյանն այն եզակի գործիչներից մեկն էր, ով կանխատեսում էր, որ Մոսկվան վաղ թե ուշ ստորելու է հայ-ադրբեջանական պատերազմն եւ կարետրում էր ինքնապաշտպանության կազմակերպումը: Նա, լուսահոգի Աշոտ Նավասարդյանի ընկերակցու-

<sup>79</sup> [1in.am/2281079.html](http://1in.am/2281079.html), 19.01.2018թ.:

թյամբ, ստեղծեց «Անկախության բանակ» ջոկատը որպես ապագա ազգային բանակի հիմք:

Հենց այդ ջոկատի կազմում էլ Մովսես Գորգիսյանը 29 տարի առաջ այս օրը մասնակցեց Երասխի ճակատամարտին՝ հերոսի մահով կնքելով իր մահկանացուն: Նրա հուղարկավորությունը նմանվեց համազգային երթի, որում միախառնված էին ցավն ու պայքարի վճռականությունը: Մովսեսը թաղված է Ծիծեռնակաբերդի բարձունքում:

1996 թ. սեպտեմբերի 20-ին ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հրամանագրով Մովսես Գորգիսյանն արժանացել է Ազգային հերոսի կոչման<sup>80</sup>:

## Ո՞ր են կոմիտեի տղաները

(20.01.2018)

«Ղարաբաղ» կոմիտեն՝ որպես քաղաքական միասնական թիմ, դադարեց գոյություն ունենալ արդեն 1991-ի գարնանը, իսկ սեպտեմբերին, երբ Վազգեն Մանուկյանը հեռացավ վարչապետի պաշտոնից, ՀՀ-ն առաջին անգամ պառակտվեց՝ ծնունդ տալով ԱժՄ-ին:

«Ղարաբաղ» կոմիտեի երեք անդամները՝ Համբարձում Գալստյանը, Ռաֆայել Ղազարյանը եւ Սամվել Գետրոյանը, հրաժեշտ են տվել երկրային կյանքին:

Վանո Սիրադեղյանը տարագրության մեջ է եւ չնայած խոսակցություններին՝ կարծես թե, Սերժ Սարգսյանի նախագահության տասնամյակում այդպես էլ չի լուծվելու նրան հայրենիք վերադարձնելու հարցը:

2008-ին, երբ Լեւոն Տեր-Պետրոսյանը վերադարձավ քաղաքականություն, նրա թիմում էին Բաբկեն Արարքյանը, Սամսոն Ղազարյանը, Ալեքսան Հակոբյանը, բայց նրանցից որեւէ մեկն այլեւս հարթակում չէր: Առաջին նախագահը որոշել էր՝ շեշտը դնել նոր ուժերի, երիտասարդ կադրերի վրա: Այսօր Տեր-Պետրոսյանը շա-

<sup>80</sup> [1in.am/2281727.html](http://1in.am/2281727.html), 20.01.2018թ.:



րունակում է անվանապես ղեկավարել ՀԱԿ-ը, սակայն բոլորը կանխատեսում են, որ նա շուտով մեկընդմիջտ կհեռանա ակտիվ քաղաքականությունից:

Բարկեն Արարցյանը գործնականում քաղաքականության մեջ չէ 2007-ի խորհրդարանական ընտրություններից հետո: Ալեքսան Հակոբյանը զբաղված է գիտական գործունեությամբ, Սամսոն Ղազարյանը օրվա հացը վաստակում է տաքսու ղեկին:

Աշոտ Մանուչարյանը 1994-ից հեռացել է իշխանությունից, նույնիսկ մասնակցել է 1996-ի նախագահական ընտրություններին, սակայն մեծ հաջողությունների չի հասել: Անցած տարիներին Մանուչարյանն ուղղակի կամ անուղղակի ներգրավված է եղել ընդդիմադիր տարրեր ձեռնապահելու, հիմա էլ հանդես է գալիս հարցազրույցներով ու հոդվածներով: Սակայն դժվար է Մանուչարյանին կոնկրետ քաղաքական թիմի հետ նույնացնելը. նա ավելի շատ ընկալվում է որպես փորձագետ: Վազգեն Մանուկյանը՝ չնայած որոշ կանխատեսումներին, այդպես էլ երկրի նախագահ չդարձավ: Նույնիսկ՝ խորհրդարանական Հայաստանում:

ԱԺՄ-ում նրա թիմակից Դավիթ Վարդանյանը բարձրաստիճան պաշտոնյա՝ պետգույքի նախարար դարձավ Ռոբերտ Քոչարյանի նախագահության ժամանակ՝ ԱԺՄ-ն պառակտելու գնով: Նա՝ որպես նախարար է պատաժային էր, սակայն 2000-ականների կեսերից, երբ հեռացավ կառավարությունից, մամուլն ու ժողովուրդը մոռացան նրա մասին<sup>81</sup>:

## Փետրվարի 20-ից՝ Սեպտեմբերի 21 (21.01.2018)

1988-ի շարժումը սկսվեց Հայաստանին Ղարաբաղի միացման պահանջով: Սկզբում Ազատության հրապարակում հավաքվող հարյուր հազարավոր մարդկանց թվում էր՝ խորհրդային իշխանությունը արդարացի լուծում կտա հայության պահանջին: Իհարկե, պետք չէ

մեղադրել ժողովրդին, որը գտնվում էր սովետական պրոպագանդայի տոտալ ազդեցության տակ, մյուս կողմից՝ Գորբաչովի Վերակառուցման քաղաքականությունը որոշակի սպասումներ էր առաջացրել ԽՍՀՄ-ի դեմոկրատացման առնչությամբ: Սակայն հանրային սպասումները, մեծ հաշվով, քաղաքական հիմքեր չունեին, որովհետև կայսրություններն առաջնորդվում են ոչ թե պատմական արդարության վերականգնման հրամայականով, այլ պրակտիկ շահերով, որոնք հաճախ թելադրում են խորացնել հակադրությունը տարրեր ժողովուրդների, ազգային կազմավորումների միջև:

Գորբաչովի ժամանակ ԽՍՀՄ-ն, անշուշտ, փոխվել էր, բայց ֆասադային բարեփոխումները չէին սասանել կայսրության հիմքերը: Իսկ Ղարաբաղի հարցը, մեծ հաշվով, ծնվել էր հենց սովետական իշխանության կամայականության հետեւանքով: ԽՍՀՄ ներսում սահմանների վերածնունդը կարող էր անվերահսկելի գործընթացների, կայսրության փլուզման պատճառ հանդիսանալ: Սա շատ լավ հասկանում էր Գորբաչովը, թե՛ նույնիսկ մեծ էր գայթակղությունը ազգային քաղաքականության հարցերում հրաժարվել Լեւինի եւ Ստալինի տխուր ժառանգությունից: Այս ճշմարտությունը ժամանակի ընթացքում հասկացան նաեւ համազգային շարժման ղեկավարությունը եւ ժողովուրդը:

Պատահական չէ, որ 1988-ի մայիսից՝ համազգային շարժման օրակարգում առաջնային դարձավ Հայաստանի սուվերենության հարցը: 1988-ի նոյեմբերի 24-ին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը, համազգային շարժման ճնշման տակ, ընդունեց պատմական որոշում, ըստ որի՝ Հայաստանի տարածքում մասնակիորեն սահմանափակվեց ԽՍՀՄ օրենսդրության իրավազորությունը:

1989-ին պաշտոնապես տեղծվեց ՀՀԸ-ն. Հայաստանում քաղաքական հարթության վրա ֆորմալացվեց երկիշխանությունը: ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 1990թ.-ի մայիսի 20-ի ընտրություններն, ըստ էության, ոչ պաշտոնական հանրաքվե էին, որոնք պետք է որոշեին՝ Հայաստանը մնալո՞ւ է ԽՍՀՄ կազմում, թե՞ դառնալու է ինքնիշխան երկիր՝ դեմոկրատական կառուցվածքով: Գերագույն խորհրդի ընտրություններում ՀՀԸ հաղթանակը նշանավորեց ոչ

<sup>81</sup> [in.am/2282196.html](http://in.am/2282196.html). 20.01.2018թ.:

միայն կոմունիստական իշխանության տապալումն, այլ նաե՛ անկախության գործընթացի մեկնարկը:

1990թ.-ի օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհրդի կողմից ընդունված Անկախության հռչակագիրը ժամանակի ամենահատուն իրավա-քաղաքական փաստաթղթերից մեկն էր՝ ոչ միայն ԽՍՀՄ-ի, այլ նաե՛ Արեւելյան Եւրոպայի մասշտաբով: Հայաստանի նոր իշխանությունն ընտրել էր անկախության այն ճանապարհը, որը լրիվ ներդաշնակ էր խորհրդային օրենսդրությանը: Սա խոսում էր համազգային շարժման եւ դրա հենքով ձեւավորված Հայաստանի նոր իշխանության հասունության մասին: Պատահական չէ, որ Հայաստանի անկախության գործընթացը, որի պատմական հանգրվանը դարձավ 1991-ի սեպտեմբերի 21-ի հանրաքվեն, ամենալեգիտիմացվածն էր միջազգային հանրության աչքերում:

Եւ որ ամենակարեւորն է՝ անկախության հաստատման անցնցում տարբերակը Հայաստանին հնարավորություն տվեց Արցախը հեռու պահել գլոբալ ռիսկերից եւ խուսափել ներքին անկայունության այն ալիքից, որն անցավ Վրաստանով ու Ադրբեջանով<sup>82</sup>:

### Հերոսացած պատգամավորը

(23.01.2018)

Համազգային շարժումը հրապարակ բերեց երիտասարդ գործիչների նոր սերունդ, բացահայտեց նոր անուններ, որոնցից շատերն ավաղ մոռացված են՝ չնայած իրենց հերոսական հետագծին: 1988-ի զարթոնքը սկզբունքորեն չփոխեց լրագրող, գրող, «Լիտերատուրնայա Արմենիա» (ռուսական) ամսագրի գրական աշխատող Սամվել Շահմուրադյանի գործունեության բնույթը, սակայն նրա մասնագիտական տաղանդն, ունակություններն ամբողջովին ծառայեցվեցին շարժմանը:

Սամվել Շահմուրադյանը Ղարաբաղյան շարժման եւ պատերազմի տարիներին (1988–1992) մամուլում հրապարակել է Շարժումը

<sup>82</sup> [in.am/2282560.html](http://in.am/2282560.html). 21.01.2018թ.:

լուսարանող հրապարակախոսական հոդվածներ եւ ակնարկներ: 1990-ի մայիսին նա, ՀՀ աջակցությամբ, ընտրվել է Գերագույն խորհրդի պատգամավոր եւ ԳԽ նստաշրջաններում պաշտպանել է արցախահայության արդարացի պահանջը, դատապարտել Սում-գայիթի ցեղասպանությունը, իշխանությունների բռնությունները Ադրբեջանի հայաբնակ շրջաններում:

Եւյնիսկ պատգամավորական գործունեությունը չխանգարեց, որպեսզի Սամվել Շահմուրադյանը շարունակի մասնակցել մարտական գործողություններին: Նա «Նիկոլ Դուման» երկրապահ ջոկատի մարտիկ էր ու առաջիններից մեկն արժագանքեց Վազգեն Սարգսյանի մահապարտների կոչին:

Շահմուրադյանը «Արծիվ-մահապարտների» կազմում մասնակցել է Մարտակերտի շրջանի բնակավայրերի ազատագրական մարտերին. նա հերոսի մահով նահատակվեց 1992-ի սեպտեմբերի 11-ին, Մարտակերտի շրջանում, Վաղուհայի համար մղվող մարտերում: ՀՀ նախագահի 1996-ի հրամանագրով Սամվել Շահմուրադյանին հետմահու շնորհվել է Մարտական Խաչ 1-ին Աստիճանի Շքանշան:

ԼՂՀ նախագահը 2014թ.-ին Շահմուրադյանին շնորհել է Արիության մեդալ: 2005թ. մարտի 1-ին Հայաստանի գրողների տանը տեղի ունեցավ գրող, լրագրող, հրապարակագիր, Արցախյան պատերազմի հերոս – նահատակ Սամվել Շահմուրադյանի «Մեր քաղցր հողը» հոդվածների եւ էսսեների ժողովածուի շնորհանդեսը:

Սամվել Շահմուրադյանը հեղինակել է «Սումգայիթյան ողբերգություն ականատեսների վկայությամբ» գիրքը, որը լույս է տեսել ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն եւ իտալերեն լեզուներով: Սամվել Շահմուրադյանը նահատակվեց, երբ ընդամենը 37 տարեկան էր: Հայաստանի խորհրդարանը կորցրեց իր լավագույն պատգամավորներից մեկին, համազգային շարժումը՝ նվիրյալին<sup>83</sup>...

<sup>83</sup> [in.am/2283236.html](http://in.am/2283236.html). 23.01.2018թ.:



## Քոչարյանն ու Սարգսյանը հեռացան 88-ի արժեքներից (24.01.2018)

Հայաստանի երեք նախագահներն էլ համազգային շարժման ծնունդ են: Եթե Լևոն Տեր-Պետրոսյանը եղել է համազգային շարժման «Նարաբաղ» կոմիտեի անդամ, ապա 1988–90 թթ.-ին Ռոբերտ Քոչարյանն ու Սերժ Սարգսյանն ակտիվ դերակատարություն են ունեցել Արցախում, մասնավորապես՝ Քոչարյանը համակարգել է «Կոունկ» կոմիտեի գործունեությունը:

Այնուամենայնիվ, Հայաստանի երեք նախագահները տարբեր վերաբերմունք են ունեցել 88-ի, նրա արժեքների, շարժման եւ պատերազմի մասնակիցների հանդեպ: Դրա դրսևտրումներից մեկը նախագահների կողմից Ազգային հերոսի կոչումով պարգևատրվածների ցանկի ուսումնասիրությունն է:

Լևոն Տեր-Պետրոսյանի նախագահության շրջանում Ազգային հերոսի կոչմանն է արժանացել 10 գործիչ, որոնցից յոթը՝ Մոնթե Մելքոնյանը, Ջիվան Աբրահամյանը, Վիտյա Այվազյանը, Մովսես Գորգիսյանը, Թաթուլ Կրպեյանը, Գեղազնիկ Միքայելյանը եւ Յուրա Պողոսյանն, առնչություն ունեն համազգային շարժման կամ Արցախյան առաջին պատերազմի հետ: Ընդ որում, Տեր-Պետրոսյանը հատվածական վերաբերմունք չդրսետրեց շարժման տարբեր հոսանքների հանդեպ: Օրինակ՝ Մովսես Գորգիսյանը եւ Թաթուլ Կրպեյանը համապատասխանաբար ԱԻՄ եւ ՀՅԴ անդամներ են եղել, որոնք ընդդիմադիր էին առաջին նախագահին:

Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը Ազգային հերոսի կոչմանն է արժանացրել չորս գործիչի, որոնցից միայն Վազգեն Սարգսյանը կապ ունի համազգային շարժման հետ: Ընդ որում, Ռոբերտ Քոչարյանը Հոկտեմբերի 27-ի ոճրագործությունից հետո հարկադրված էր Ազգային հերոսի կոչում շնորհել Վազգեն Սարգսյանին ու Կարեն Դեմիրճյանին, որպեսզի մեղմի իր անձի հանդեպ հանրային հարաճուն դժգոհությունը եւ կասկածները:

Սերժ Սարգսյանը Ազգային հերոսի կոչում է շնորհել երեք գործիչի, որոնցից որեւէ մեկը առնչություն չունի 88-ի համազգային շարժման հետ: Բերված փաստերը պատահականություն չեն եւ բացահայտում են Հայաստանի երեք նախագահներից յուրաքանչյուրի արժեքային համակարգը, վերաբերմունքը համազգային շարժման, մեր ժողովրդի իդեալների ու երազանքների հանդեպ<sup>84</sup>:

## Գիտեմ, որ Երեան այլեւ չեմ գա, ինձ կբերեն... (25.01.2018)

Համազգային շարժման, արցախյան պատերազմի ամենալուսավոր կերպարներից մեկն էր Թալինի Արեգ գյուղում ծնված Թաթուլ Կրպեյանը: Համալսարանի չորրորդ կուրսում Թաթուլը միացել է համազգային շարժմանը: 1990 թվականի սեպտեմբերին Թաթուլը մեկնեց Արցախ, որտեղ վիճակը շարունակում էր վատանալ: Իր իսկ հիմնած ինքնապաշտպանական ջոկատով 1990 թվականի սեպտեմբերից մինչեւ 1991 թվականի մայիս ղեկավարել է Գետաշենի ենթաշրջանի (Գետաշեն-Մարտունաշեն) ինքնապաշտպանությունը՝ ընդդեմ ադրբեջանական զինված ուժերի եւ խորհրդային զորքերի: Կրպեյանը այդժամ անգամ կարետրում էր ուսումը եւ այդ օրերին պատմություն էր դասավանդում Գետաշենի երկու դպրոցներում:

Գետաշենցիները մինչեւ այսօր կարոտով ու ակնածանքով են իիշում Թաթուլին, ով հաճախ էր հավաքում գյուղացիներին եւ ասում էր.«Ինչո՞ւ եք վախենում մահից: Հողի համար ես հենց հիմա պատրաստ եմ մեռնելու: Հողի, ազգի համար: Ես ոչ մի անգամ չեմ գնա Երեանի օդանավակայանում իջնեմ, ասեմ՝ Գետաշենը հանձնեցի: Ես այստեղ կմեռնեմ, այդ բանը չեմ անի...»:

Վերջին անգամ, երբ Երեան է եկել, գնալիս ասել է. «Գիտեմ, որ Երեան այլեւ չեմ գա, ինձ կբերեն...»: Այդպես էլ եղավ. Թաթուլը հերոսի մահով ընկավ 1991 թվականի ապրիլի 30-ին՝ «Օղակ» գոր-

<sup>84</sup> [tin.am/2284141.html](http://tin.am/2284141.html), 24.01.2018թ.:

ծողության ժամանակ, խորհրդային և արդրեջանցի հրոսակների դեմ անհավասար մարտում: 26-ամյա Թաթուլը նահատակվեց իսկական քաջին վայել, ընկավ նաև Գետաշենը:

1996 թվականի սեպտեմբերի 20-ին Թաթուլ Կրպեյանը արժանացել է ՀՀ Ազգային հերոսի կոչման: 2015 թվականի մարտի 18-ին Երեւանի ավագանու որոշմամբ մայրաքաղաքի գեոսայգիներից մեկը վերանվանվեց Թաթուլ Կրպեյանի անվամբ: 2015 թվականի հոկտեմբերին նրա անվամբ անվանակոչվեց Երեւանի թիվ 62 ավագ դպրոցը: Թաթուլի Արեգ գյուղը՝ քաջարի հայդուկի ծննդավայրը, կրում է նրա անունը՝ Թաթուլ<sup>85</sup>:

### Ո՞ւմ էր պետք Չաուշի և Վիտյա Այվազյանի մահը

(26.01.2018)

Վիտյա Այվազյանը և Գեղազնիկ Միքայելյանը տարբեր դերակատարություն ունեին համազգային շարժման մեջ: ԵՊՀ կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետն ավարտած Վիտյա Այվազյանը 1988 թվականին աշխատում էր «Լազուր» արտադրական միավորումում, ուր կազմակերպել և ղեկավարել է «Ղարաբաղ» կոմիտեն: Վիտյան 1989 թվականից ՀՀԸ անդամ էր, 1989 թվականի հունվարի 7-ին ակտիվ քաղաքական և ազգային-ազատագրական պայքարի կոչերի համար ձերբակալվել է և շուրջ մեկ ամիս պահվել Նուբարաշենի բանտում: 1990 թվականին ընտրվել է ՀՀ ԳԽ պատգամավոր: Չաուշը զենքի մարդ էր, ակտիվորեն մասնակցել է ՀՀ արեւելյան սահմանների պաշտպանությանը, Կոռնիձորի, Երասխի, Ոսկեպարի ինքնապաշտպանության ակտիվ կազմակերպիչներից մեկն է, ՀՀԸ-ի իշխանության գալուց հետո ձեռնամուկ էր եղել Հայաստանի զինված ուժերի ձեւավորման աշխատանքներին:

Վիտյա Այվազյանը և Գեղազնիկ Միքայելյանը մեծ հեղինակություն ունեին ՀՀԸ-ում և ազատամարտիկների շրջանում և պատահական չէ, որ 1990-ի օգոստոսի 29-ին հենց նրանց ուղարկեցին

ՀԱԲ շտաբ բանակցությունների, երբ վերջինս հրաժարվեց ենթարկվել օրինական իշխանություններին և որոշեց դիմադրել: Վիտյան և Չաուշն այդ օրը ներկայացնում էին Հայաստանի օրինական իշխանություններին, սակայն նրանք այդպես էլ չհասցրեցին երկխոսության մեջ մտնել ՀԱԲ զինյալների հետ՝ սպանվելով զինված խմբավորման շտաբի մոտ: Պաշտոնական վարկածի համաձայն՝ դավադիր կրակոցներն արձակվել էին ՀԱԲ-ի շտաբից, ինքնակոչ բանակն, ի վերջո, զինաթափվեց, խմբավորման ղեկավարները ձերբակալվեցին: ՀԱԲ ղեկավարները մինչև վերջ պնդեցին, թե Վիտյայի և Գեղազնիկի վրա արձակված կրակոցների հետ առնչություն չունեն:

Լեւոն Տեր-Պետրոսյանի իշխանության հեղինակության անկմանը զուգահեռ շրջանառության մեջ դրվեց, ըստ էության, անհերթթ մի վարկած, ըստ որի՝ Այվազյանը և Միքայելյանը դարձել են ՀՀԸ-ի դավադրության զոհը, որպեսզի մոտիվացվի ՀԱԲ-ի զինաթափումը: Այս վարկածը քննադատության չի դիմանում, որովհետև ՀԱԲ-ի վնասագերծման գլխավոր մոտիվն այն էր, որ նա չէր ենթարկվում ժողովրդի կողմից ընտրված օրինական իշխանությանը և ՀՀԸ-ն, ըստ էության, հնարածին մոտիվների անհրաժեշտություն չունեց: Իհարկե, չի կարելի անտեսել երրորդ վարկածը: Չնայած այն հանգամանքին, որ 1990թ.-ի օգոստոսի 4-ին Հայաստանում տապալվել էր կոմունիստական իշխանությունը՝ Հայաստանում դեռ պահպանվում էր Մոսկվայի, ՊԱԿ-ի ազդեցությունը:

Չի բացառվում, որ օգոստոսի 29-ի արյունոտ միջադեպը հրահրել էր հենց Մոսկվան՝ Հայաստանում քաղաքացիական պատերազմ հրահրելու նպատակով: Բարեբախտաբար, Հայաստանի իշխանությունների և հասարակության հասունության շնորհիվ հնարավոր եղավ կանխել դեպքերի անկանխատեսելի ընթացքը: Հանձինս Վիտյա Այվազյանի և Գեղազնիկ Միքայելյանի՝ համազգային շարժումը կորցրեց իր վառ անհատականություններին: Թե Վիտյան և թե Չաուշը կարող էին հերոսի մահով ընկնել թշնամու դեմ կռվում, բայց սպանվեցին հայրենադավ կրակոցներից, Երեւանի կենտրոնում: 1988-90 թթ.-ին Վիտյա Այվազյանը և Գեղազնիկ

<sup>85</sup> [in.am/2284879.html](http://in.am/2284879.html), 25.01.2018թ.:



Միքայելյանն անցել են հիրավի հերոսական ուղի: 1996-ին նրանց շնորհվեց Ազգային հերոսի կոչում<sup>86</sup>:

**Մոնթեն՝ ազգային հերոս,  
ԱՍԱԼԱ-ի համար՝ դավաճան**  
(27.01.2018)

Եթե չլիներ հայկական հարցը, Մոնթե Մելքոնյանը զուցե մեծ գիտնական դառնար: Համենայն դեպս, 20 տարեկանում նա ընդունվել է Կալիֆոռնիայի Բերկլիի համալսարանը: Լայն աշխարհընկալում ու ընդունակություններ ունենալու շնորհիվ չոր տարվա դասընթացն ավարտում է կրկնակի տիտղոսով՝ ստանալով «Հնագիտության եւ ասիական պատմության մասնագետի» վկայականներ: Մոնթեն ընդունվում է նաեւ Օքսֆորդի հեղինակավոր համալսարան, սակայն ուսանել չի հասցնում: 1978թ.-ի աշնանը Մելքոնյանը մեկնում է Իրան, մասնակցում է Իրանի շահի դեմ կազմակերպված ցույցերին: Նույն թվականին մեկնում է Լիբանան, որտեղ քաղաքացիական պատերազմը հասել էր իր գագաթնակետին: Բեյրութում մասնակցում է հայ համայնքի ինքնապաշտպանության մարտերին: Այստեղ նա սովորում է արաբերեն եւ արդեն 22 տարեկանում լիովին տիրապետում էր հայերենին, անգլերենին, ֆրանսերենին, իսպաներենին, իտալերենին, թուրքերենին, պարսկերենին, ճապոներենին, քրդերենին:

1980թ.-ից Մոնթեն անդամագրվելով Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակին (ԱՍԱԼԱ)՝ կարճ ժամանակում դարձել է նրա ղեկավարներից մեկը: 1981թ.-ին նրա մասնակցությամբ կազմակերպվեց հայտնի Վան ռազմագործողությունը: 1981թ.-ի նոյեմբերի 11-ին Ֆրանսիայի Օլիվ օդանավակայանում Մոնթեն ձերբակալվեց կեղծ անձնագիր եւ ատրճանակ կրելու մեղադրանքով: Նա սկզբում դատապարտվեց 4 ամսվա ազատազրկման, իսկ ավելի ուշ դատարանը որոշեց վտարել նրան Ֆրանսիայից:

Դատարանում Մոնթեն հայտարարեց. «Բոլոր հայերը կեղծ անձնագրեր են կրում՝ ֆրանսիական, ամերիկյան, դրանք կեղծ կլինեն այնքան ժամանակ, քանի դեռ դրանք հայկական չեն...»: 1985թ.-ին նա նորից կեղծ անձնագրով ժամանեց Ֆրանսիա եւ մի քանի ամիս անց նորից ձերբակալվեց «ահաբեկչություն» կազմակերպելու մեղադրանքով: Մոնթեն բանտից դուրս եկավ 1989թ.-ի հունվարի 16-ին:

ԱՍԱԼԱ-ն Մոնթեի կենսագրության մուգ էջերից մեկն է: Համենայն դեպս, տողերի հեղինակն առիթ ունեցել է 1995-ին ներկա գտնվել ԵՊՀ-ում ԱՍԱԼԱ-ի մարտիկ Վազգեն Միսյանի մի հանդիպման, որտեղ վերջինս Մոնթեին մեղադրեց դավաճանության մեջ՝ այդպես էլ լարանին չհրազեկելով ԱՍԱԼԱ-ի մուգ էջերին վերաբերող այդ խորհրդավոր դրվագը: Սակայն եթե ԱՍԱԼԱ-ն կամ նրա մի հատվածը Մոնթեին դավաճան է համարում, ապա քուճակակալ հայությունը հերոսացնում է նրան՝ արցախյան պատերազմում ունեցած անուրանալի ավանդի համար: 1989թ.-ին ֆրանսիական բանտից ազատվելուց հետո Մոնթեն 1991թ.-ին գալիս է Հայաստանի Հանրապետություն, որտեղ արդեն սկսվել էին հայ-ադրբեջանական զինված ընդհարումները: Մոնթեն հիմնում է իր ջոկատը: Երեսնում յոթ ամիս աշխատում է Գիտությունների ակադեմիայում՝ գրելով եւ հրատարակելով «Հայաստանը եւ հարեանները» գիրքը: Նույն թվականի սեպտեմբերին Մոնթեն մեկնում է Արցախի Հանրապետություն, որտեղ նրան անվանակոչում են Ավր մականունով:

Ռազմական տեսանկյունից մասնագիտական բարձր հմտություններ ցուցաբերելու շնորհիվ Մոնթեն 1992թ.-ին ստանձնում է Մարտունու պաշտպանական շրջանի շտաբի պետի պարտականությունը: Նա կարճ ժամանակում դարձել է արցախյան պատերազմի խորհրդանիշներից մեկը: 1993թ.-ի մարտ-ապրիլ ամիսներին Մոնթեն մասնակցել է Քարվաճառի ազատագրմանը:

Պաշտոնական տեղեկատվության համաձայն Մոնթեն սպանվել է 1993թ.-ի հունիսի 12-ին արդրեջանական զրահամեքենայի կրակոցից, երբ հետախուզության նպատակով զինակիցների հետ այցելել է Աղդամի շրջանի Մարզիլի գյուղի մատույցներ: Իհարկե,

<sup>86</sup> [in.am/2285713.html](http://in.am/2285713.html). 26.01.2018թ.:

մինչ այսօր մամուլում եւ այլ հարթակներում շրջանառվում են Մոնթեի մահվան այլ վարկածներ նույնպես:

Մոնթեն այն քիչ սփյուռքահայերից էր, ով ակտիվորեն մասնակցեց 88-ի համազգային շարժմանն ու արցախյան պատերազմին. նա հետմահու արժանացել է Հայաստանի եւ Արցախի Ազգային հերոսի կոչումներին<sup>87</sup>:

### Բանակը ձեավորվեց շարժման ընդերքում

(28.01.2018)

Այսօր Սերժ Սարգսյանն ասել է, թե Հայաստանի բանակը ժողովրդական է: Սա այն բացառիկ դեպքերից է, երբ հարյուր տոկոսով համաձայն ենք նախագահի ձեռնարկման հետ: Հայաստանի բանակը ծնվել է համազգային շարժման ընդերքում՝ Ազատության հրապարակում, երբ Մոսկվայի եւ Բաքվի ագրեսիվ քաղաքականության համատեքստում շարժման ղեկավարները որոշում կայացրեցին ինքնապաշտպանության ջոկատներ ձեավորելու մասին: Սա նույնքան ինքնարուխ գործընթաց էր, որքան՝ համազգային շարժումը, նույնքան զուլալ էր նպատակը՝ որքան Ազատության հրապարակում ձեռնարկված ազգային նպատակներն ու տեսլականը:

Հայաստանի ազգային բանակի հիմքը շարժման խենթ ու խելառ տղաներն էին, ովքեր առաջնագիծ մեկնեցին Հայաստանի կայացող ինքնիշխանությունը, շարժման տարիներին ձեռք բերված ազատությունը պաշտպանելու նպատակով:

Հայաստանի բանակը համազգային շարժման հզոր էներգետիկայի եւ հայրենիքի կարոտն իրենց սրտերում պահած ու շարժման կանչով հայրենիք վերադարձած սպայության պրոֆեսիոնալիզմի ներդաշնակության ծնունդն է: Հայաստանի բանակը հաղթական բանակ է՝ համազգային պատերազմի ծնունդը: Հայաստանի զինված ուժերը կայացել են ոչ թե նախագահական հրամանագրով կամ

<sup>87</sup> [in.am/2286443.html](http://in.am/2286443.html), 27.01.2018թ.:

իշխանական կաբինետներում, այլ ռազմի դաշտում՝ արիության եւ սխրանքի անմոռանալի, փառավոր էջերով:

Հայաստանի բանակ եւ հաղթանակ բառերը հոմանիշներ են, ինչի հետեւանքով մեր պետությունն ունի սուբյեկտություն, Հայաստանն ու Արցախն՝ անվտանգության կայուն երաշխիքներ: Հայաստանի բանակն, ըստ էության, միակ պետական ինստիտուտն է, որը հավատարիմ է մնացել 88-ին, շարժման արժեքներին, համազգային իդեալներին ու նպատակներին:

Հայաստանի բանակն այսօր դարձել է Հայաստանի ինքնիշխանության ու սուբյեկտության, ըստ էության, միակ ինստիտուցիոնալ խորհրդանիշը: Հայաստանի բանակը 26 տարեկան է, շնորհավոր տոնը, Հայաստանի ազատատենչ ժողովուրդը:

Շնորհավոր տոնը, զինվոր, որ քո աջախորշ հայացքով հսկում ես մեր երկրի, Արցախի սահմանները: Շնորհավոր տոնը, սպա, որ երդումով տրվել ես հայրենիքի պաշտպանությանը, ծնողական հոգատարությամբ՝ զինվորին:

Շնորհավոր ձեր տոնը, քաջասիրտ տղաներ, որ ձեր Սպարապետի հրամանատարությամբ բազմել եք Եռաբլուրի բարձունքում՝ խորհրդանշելով հայոց բանակի հզորությունն ու հաղթական ուղին<sup>88</sup>:

### Վազգենը՝ պատերազմի եւ խաղաղության մասին

(28.01.2018)

Վազգեն Սարգսյանը 88-ի համազգային շարժման ղեկավարներից մեկն էր<sup>89</sup> թեւ հանրահավաքի հարթակներից ելույթներ ունենալ չէր սիրում: Տեսակետ կա, որ Վազգենին համազգային ղեմք դարձրեց պատերազմը: Սրա մեջ ճշմարտության հատիկ, իհարկե, կա, մյուս կողմից՝ Վազգեն Սարգսյանն ուներ մեծ խարիզմա, ինչի արդյունքում դեռ 1989-ի նոյեմբերին նա ընտրվեց ՀՀ վարչության անդամ, իսկ 1990-ի մայիսին՝ Գերագույն խորհրդի պատգամավոր:

<sup>88</sup> [in.am/2287096.html](http://in.am/2287096.html), 28.01.2018թ.:

<sup>89</sup> Տե՛ս ծանոթ. 27:



Հենց այդ խարիզմայի շնորհիվ էր, որ Վազգեն Սարգսյանը դարձավ ինքնապաշտպանության ջոկատների հրամանատարը, պաշտպանության առաջին նախարարը, հանրային ընկալման մեջ՝ Սպարապետ:

Պատերազմը Վազգեն Սարգսյանի համար սուկ տարածքի կամ պատմական արդարության խնդիր չէր: Վազգեն Սարգսյանն արցախյան պատերազմը մոտիվացված էր համարում արժեքային, նույնիսկ գաղափարական հարթությունների վրա: «Ես այս պատերազմին տվել եմ ինչ որ կարող էի, ձեռք եմ բերել հպարտություն: Հանե՛ք այդ հպարտությունը, հանե՛ք այդ գաղափարը՝ տակը բան չկա: Ես կովել եմ, կովում եմ եւ կովելու եմ գաղափարի համար, նպատակի համար. իմ նպատակի ճանապարհին ոչ ոք ինձ լռեցնել չի կարող, հանգի՛ստ եղեք», - մի առիթով ասել է Սպարապետը: Բնականաբար, Վազգենը խոսել է ոչ թե անհատական, այլ՝ հավաքական, այսպես կոչված, համագգային հպարտության մասին: Այս գաղափարի մասին է խոսում Սպարապետը՝ դրա կրող համարելով Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացուն եւ մեր հավաքականությունը՝ որպես պետություն:

Հայարտ Հայաստանն էր Վազգենի տեսլականը, երբ նա առաջնագծում էր կամ պաշտպանության նախարարի պաշտոնում, քաղաքականության մեջ կամ վարչապետի կարգավիճակում: Վազգեն Սարգսյանը 1999-ի խորհրդարանական ընտրություններին անմիջական մասնակցություն ունեցավ՝ հստակ հասկացնելով, որ Հայարտ Հայաստանի կայացման բանալին այլեւ տեսնում է քաղաքական, տնտեսական հարթություններում:

Պատերազմում հաղթանակը ոչինչ է, եթե դա չի ծառայում քաղաքացու բարեկեցությանն, անվտանգությանը: Գուցե պարադոքսալ ինչի, ասկայն հենց Վազգեն Սարգսյանն էր Հայաստանի էլիտայի այն գործիչը, ով կարող էր կայուն խաղաղության երաշխավոր լինել: Միայն Վազգեն Սարգսյանի առաջարկված խաղաղության ծրագիրը կարող էր լեգիտիմացվել հասարակության համաձայնությամբ, որովհետեւ հաղթանակի խորհրդանիշ համարվող գործիչը չէր կարող կապիտուլացվել հակառակորդի առջեւ:

Թյուր է այն կարծիքը, թե Վազգեն Սարգսյանը «պատերազմի կուսակցության» ներկայացուցիչ էր, որովհետեւ նրա ողջախոհությունը, լայնախոհությունը հուշում են, որ Վազգեն Սարգսյանն արժանապատիվ խաղաղության, ողջամիտ փոխզիջումների ջատագովն էր: «Ոչ ոք խաղաղության գինն այնքան լավ չգիտի, որքան ես, ոչ ոք այնքան խաղաղություն չի ուզում, որքան ես: Թե քաղաքական հայտարարություններ անողներն այս պատերազմում ի՞նչ ներդրումներ ունեն, ի՞նչ ջանքեր են ներդրել, քանի՞ ընկեր են կորցրել, քանի՞ հարազատ՝ դա իրենց գործն է, բայց պատերազմի ընթացքում ես կորցրել եմ իմ լավագույն ընկերներին», - ասում էր Վազգեն Սարգսյանը:

Վազգեն Սարգսյանի իշխանությունն ասոցացվում էր հենց ուժեղ Հայաստանի եւ տարածաշրջանային կայունության հետ: Մի հանգամանք, որն ամենեւին ձեռնտու չէր աշխարհաքաղաքական այն կենտրոնին, որը Հարավային Կովկասում իր ազդեցությունը պահպանում է հակամարտության կողմերին սպառազինելու եւ տարածաշրջանային միլիտարիզացիայի բարձր մակարդակի հետեւանքով: Վազգեն Սարգսյանի համար խաղաղությունն այլընտրանք չուներ. այդ նպատակին էր նա ծառայեցնում անգամ բանակի մարտունակության բարձրացումը<sup>90</sup>:

### Ինչո՞ւ ընտրությունը կանգ առավ Լեւոն Տեր-Պետրոսյանի վրա (30.01.2018)

«Ուրաբաղ» կոմիտեի Հայաստանի նորագույն պատմության բացառիկ քաղաքական հարթակն է՝ մի քանի առումով: Նախ՝ կոմիտեի քաղաքական նոր մտքի, խոսքի կրողն է, որի առանցքում դրված է ուսցիոնալ հենքով հայության միավորման, կոնսոլիդացիայի գաղափարը: Թերեւս վերջին երկու հարյուր տարվա մեջ առաջին անգամ փորձ արվեց հայ ժողովրդին միավորել ոչ թե

<sup>90</sup> [in.am/2287525.html](http://in.am/2287525.html), 28.01.2018թ.:

հակաթրքականության կամ ռուսամետության առանցքով, այլ՝ պետություն ունենալու, ինքնաբավ սուբյեկտ դառնալու գաղափարի շուրջ: Սա է «Ղարաբաղ» կոմիտեի, համազգային շարժման հիմնական քաղաքական առաքելությունը:

Վազմակերպչական առումով «Ղարաբաղ» կոմիտեն դարձյալ բացառիկ է: Կոլեգիալության սկզբունքը բնորոշ է ՀՅԴ-ին նույնպես, սակայն Դաշնակցության կոլեգիալությանը բնորոշ է անձնական ԵԱ-ը, տեսակը խեղդող համահարթեցումը: Կոմիտեն վառ անհատականությունների թիմ էր՝ իր մի քանի պահեստային կամ զուգահեռ թիմերով, որտեղ անհատականությունների պակաս չկար:

«Ղարաբաղ» կոմիտեում Ռաֆայել Ղազարյանի ակադեմիական մտածողությանը փոխյուրացնում էր Վանո Սիրադեղյանի քաղաքային կոլորիտը, Աշոտ Մանուչարյանի հռետորական ձիրքին՝ Համբարձում Գալստյանի արտաքուստ անտեսանելի լայնածավալ աշխատանքը միջազգային կառույցների հետ, Վազգեն Մանուկյանի տակտիկական անվրեպ հաշվարկներին՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի ռազմավարական մտածողությունը: Այսպիսի թիմում դժվար էր լիդեր լինելը, որովհետեւ առաջնորդի կարգավիճակում էին բոլորը՝ տասնմեկ գործիչները, որոնց ժողովուրդը կանչում էր «կոմիտե» վանկարկումով: Սակայն շարժման ինստիտուցիոնալիզացիային զուգահեռ՝ առաջանում էր լիդերի պահանջարկ:

Ի դեպ, թյուր է այն կարծիքը, որ հետկոմունիստական Հայաստանի ղեկավարին որոշել են կոմիտեն կամ նույնիսկ ՀՀԵ-ն, որովհետեւ համազգային շարժումների ժամանակ կարիքնետային որոշումները գորշի արժեք չունեն: Համազգային շարժման ակնհայտ նետնացման են ուղղված նաեւ հակազիտական այն վարկածները, թե Լեւոն Տեր-Պետրոսյանը մասն է կամ ՊԱԿ-ի գործակալ:

Առնվազն պետք է հարգել համազգային շարժումը, Երրորդ հանրապետությունը, ղարաբաղյան փառահեղ պատերազմը՝ նման անհեթեթություններին տուրք չտալու համար, որովհետեւ Հայաստանի առաջին նախագահը՝ հենց բացառիկ շարժում, քաղաքակրթական բարձր նշանող սահմանած հայ ժողովրդի քաղաքական իմաստավորված ընտրությունն էր: Լեւոն Տեր-Պետրոսյանն ուներ բացառիկ

ռազմավարական մտածողություն, որը շարժումային հզոր էներգետիկան փոխակերպում էր պետական մտածողության, խենթությունը՝ ռացիոնալության: Շարժումային մտածողությունից պետականի անցման տրանսֆորմացիան կարող էր իրականացնել հենց Լեւոն Տեր-Պետրոսյանը, ինչի շնորհիվ դարձավ առաջինը կոմիտեում, ՀՀԵ-ում, ի վերջո՝ ընտրվելով հանրապետության առաջին նախագահ:

Նախագահության շրջանում ու նաեւ 2008-ի համաժողովրդական շարժման ընթացքում Տեր-Պետրոսյանը գործել է բազմաթիվ սխալներ, սակայն Երրորդ հանրապետության գործիչների մեջ նա մնում է անզերազանցելի՝ իր ռազմավարական մտածողությամբ եւ քաղաքական պլանավորման ընդունակությամբ: Սա 88-ի համար հպարտություն էր, այսօրվա համար՝ քաղաքական դաշտի ամրության դրսեւորում<sup>91</sup>:

### Ի՞նչը խանգարեց Վազգեն Մանուկյանին (31.01.2018)

Հանրային խորհրդի ներկայիս նախագահ Վազգեն Մանուկյանը 88-ի համազգային շարժման հարթակում եղել է հենց առաջին օրերից: Տարածված կարծիքի համաձայն՝ Վազգեն Մանուկյանը եղել է «Ղարաբաղ» կոմիտեի կորդինատորը<sup>92</sup>: Համենայն դեպս, այս վարկածի օգտին են խոսում այն փաստերը, որ Վազգեն Մանուկյանը եղել է ՀՀԵ-ի առաջին ծրագրի հեղինակը<sup>93</sup> ու նաեւ՝ վարչության առաջին նախագահը: Իհարկե, ՀՀԵ վարչության նախագահի պաշտոնում Մանուկյանը մնացել է ընդամենը մեկ ամիս, որով

<sup>91</sup> [in.am/2288238.html](http://in.am/2288238.html), 30.01.2018թ.:

<sup>92</sup> Տե՛ս ծանոթ. 9:

<sup>93</sup> Վազգեն Մանուկյանը ներկայացրել է ՀՀԵ-ի ծրագրի խիստ նախնական մի տեքստ: Դրա վրա աշխարհել են նախ՝ Սամվել Գեորգյանը, ապա՝ Լեւոն Տեր-Պետրոսյանը: Դրանից հետո այն կերպ առ կերպ քննարկվել եւ հապաքարվել է «Ղարաբաղ» կոմիտեի նիստերում: Այսինքն՝ դրա կոլեկտիվի հեղինակը «Ղարաբաղ» կոմիտեի է:



հետև արդեն 1989-ի դեկտեմբերից ՀՀ-ն ղեկավարում էր Լեւոն Տեր-Պետրոսյանը:

Հայաստանի նորագույն քաղաքական պատմության հիմնական հարցերից մեկն այն է, թե ինչու՞ Վազգեն Մանուկյանն՝ ունենալով ավելի մեծ քաղաքական փորձառություն, համազգային շարժման լի-դերությունը զիջեց Լեւոն Տեր-Պետրոսյանին, մանավանդ, որ Տեր-Պետրոսյան-Մանուկյան հակադրությունը դարձավ Հայաստանի քաղաքական կյանքի առանցքային դրվագներից մեկը: Ընդունված է համարել, որ հետկոմունիստական Հայաստանի առաջին ղեկավարը եղել է Լեւոն Տեր-Պետրոսյանը: Ֆորմալ առումով այդպես էլ կա, որովհետև երկրի ղեկավարը Գերագույն խորհրդի նախագահն էր, սակայն 1990-ի օգոստոսի 13-ին վարչապետ նշանակվեց Վազգեն Մանուկյանը, որի ձեռքում կենտրոնացած էր գործադիր իշխանությունը, մանավանդ, որ 1990-ի նոյեմբերին Մանուկյանը լրացուցիչ լիազորություններ ստացավ խորհրդարանից:

Վազգեն Մանուկյանի վարչապետությունը, սակայն, արդյունավետ չէր, հատկապես՝ կադրային քաղաքականության հարցերում, ինչի հետեանքով ՀՀ-ն կորցնում էր հեղինակությունը հասարակության մեջ, իսկ Մանուկյանն՝ իր հեղինակությունը ՀՀ-ում: Օրինակ՝ փոխվարչապետի պաշտոնում հայտնվել էր Գեորգ Վարդանյանը՝ հայտնի ժուրնալիստ և ակնաբույժ, ում հետ Մանուկյանին կապում էին զանազան կապեր, բայց՝ ոչ շարժումն ու քաղաքականությունը:

Նման իրավիճակում Լեւոն Տեր-Պետրոսյանը մնում էր այն քաղաքական առաջնորդը, ով ավելի էր ասոցացվում համազգային շարժման հետ, մանավանդ, որ ՀՀ-ի ներսում եւ Գերագույն խորհրդում 1991-ի գարնանը տեղի ունեցան մի քանի սկզբունքային քննարկումներ՝ պետական համակարգի կառուցվածքի, անկախության գործընթացի վերաբերյալ եւ դրանց ընթացքում Տեր-Պետրոսյանն ավելի ճկուն մոտեցումներ էր առաջարկում:

Նույնիսկ կարելի է արձանագրել, որ Վազգեն Մանուկյանն ինքը պարտվեց՝ 1990–91 թթ.-ին ունենալով ավելի մեծ իշխանություն: Համենայն դեպս, 1991-ի հոկտեմբերի 16-ի նախագահական ընտրություններին ընդառաջ Լեւոն Տեր-Պետրոսյանը չունեւ այլընտ-

րանք ՀՀ-ում եւ դրանից դուրս, իսկ Վազգեն Մանուկյանին այլ քան չէր մնում, քան համախոհների փոքր խմբով հեռանալ ՀՀ-ից: ԱժՄ-ն երբեք զանգվածային կուսակցություն չի եղել, բայց Վազգեն Մանուկյանին հաջողվեց 1996-ի նախագահական ընտրություններում դառնալ ընդդիմության միասնական թեկնածու:

Անկախության հռչակումից հինգ տարի հետո Լեւոն Տեր-Պետրոսյանն ու Վազգեն Մանուկյանն արդեն բավարար չափով հեռացել էին շարժման ակունքներից, ինչի հետեանքով նրանց մրցակցությունը նախագահական ընտրություններում զուրկ էր ռացիոնալությունից եւ, մեծ իմաստով, անտագոնիստական քաղաքական համակարգի ստեղծման պատճառ դարձավ: 1996-ի նախագահական ընտրություններն, ըստ էության, նշանավորեցին համազգային շարժման պարտությունն՝ իր բոլոր բեռններով հանդերձ:

Պատահական չէ, որ ընդամենը երկու տարի անց Տեր-Պետրոսյանը հրաժարական տվեց<sup>94</sup>, իսկ քաղաքականություն վերադարձած Կարեն Դեմիրճյանը 1998-ի նախագահական ընտրություններում ստացավ մի քանի անգամ ավելի ձայն, քան՝ Վազգեն Մանուկյանը: 1998-ից հետո Լեւոն Տեր-Պետրոսյանին հաջողվեց քաղաքական ռեաբիլիտացիայի ենթարկվել՝ 2008-ի նախագահական ընտրությունների եւ դրանց հաջորդած համաժողովրդական շարժման միջոցով: Նույն այդ ընտրություններում Վազգեն Մանուկյանը ասպայդեր էր:

Շարժման երկու առաջնորդների հակադրության այսպիսի վերջաբանը նույնիսկ քաղաքական, պատմական օրինաչափություն էր, որովհետև հանրային ընկալման մեջ 88-ի շարժումը, երրորդ հանրապետությունն ավելի շատ ասոցացվում են ոչ թե Վազգեն Մանուկյանի, այլ՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի անվան հետ<sup>95</sup>:

<sup>94</sup> Տե՛ս ծանոթ. 24:

<sup>95</sup> [lin.am/2288967.html](http://lin.am/2288967.html), 31.01.2018թ.:

## Ինչո՞ւ Սերժ Սարգսյանը Արցախից տեղափոխվեց Հայաստան (01.02.2018)

Եթե չլինե՞ր 1988-ի համազգային շարժումը, Սերժ Սարգսյանը թերեա՞ կուսակցական պատկանելի կարիերա անե՞ր՝ չնայած խորհրդային Ադրբեջանի մաս կազմող ԼՂԻՄ-ում դա այդքան էլ դյուրին բան չէր հայերի համար: Համենայն դեպս, 1979թ.-ից Սերժ Սարգսյանը ԼՂԻՄ կոմերիտական եւ կուսակցական սանդղակով վեր էր բարձրանում եւ շարժման արշալույսին ԼՂԻՄ մարզկոմի առաջին քարտուղարի՝ Հենրիկ Պողոսյանի օգնականն էր: Ճարժումն արմատապես փոխեց շատերի կյանքը, այդ թվում՝ Սերժ Սարգսյանի:

Տարածված կարծիքի համաձայն՝ Սերժ Սարգսյանը սերտ կապերի մեջ է եղել համազգային շարժման Երեւանի կոմիտեի հետ եւ, ըստ ամենայնի, Ստեփանակերտում նույնացել է հենց «Դարաբաղ» կոմիտեի, հետո արդեն՝ ՀՀԵ-ի հետ: Ինչքան էլ Սերժ Սարգսյանի այսօրվա շրջապատի որոշ մարդիկ փորձեն «խմբագրել» նրա կենսագրությունը՝ փաստ է, որ Սարգսյանն անզամ ՀՀԵ անդամ է եղել, նույնիսկ հիմնադիր համագումարում փորձել է ընտրվել վարչության անդամ, սակայն մրցակցությունը շատ մեծ է եղել, եւ Հայաստանի երրորդ նախագահի անունը տեղ չի գտել ՀՀԵ առաջին վարչության կազմում:

Չնայած այս հանգամանքին՝ Սերժ Սարգսյանը ՀՀԵ-ից եւ Լեւոն Տեր-Պետրոսյանից նեղանալու առիթ չունի, որովհետեւ նրանց իշխանության տարիներին զբաղեցրել է պաշտպանության, ազգային անվտանգության, ՆԳ եւ ԱԱ նախարարների պաշտոնները: Ասում են՝ Սարգսյանը եղել է Տեր-Պետրոսյանի վտահելի կադրերից մեկը եւ հենց առաջին նախագահի շնորհիվ է տեղ գտել իշխանության «պոլիտբյուրոյում»:

Տեր-Պետրոսյանին ու Սարգսյանին կապել են ոչ միայն պետական ծառայությունն ու մարդկային հարաբերությունները, այլ նաեւ շախմատը, որի հանդեպ Հայաստանի առաջին եւ երրորդ նախագահներն ունեն ընդհանուր թուլություն: Սակայն մինչեւ երեսնյան

էլիտայում հայտնվելը՝ Սերժ Սարգսյանն առաջնագծում էր. 1989–93 թթ.-ին նա ղեկավարել է ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի կոմիտեն: Իրազեկ մարդիկ ասում են, որ Սարգսյանը բավականին հմուտ է եղել իր գործում եւ այս կարծիքն արժանահավատ է թվում, որովհետեւ Սերժ Սարգսյանն ավելի ուշ երկու անգամ տեւական ժամանակով արդյունավետ ղեկավարել է Հայաստանի ՊՆ-ն: Սակայն անհասկանալի է մնում, թե ինչո՞ւ է Սերժ Սարգսյանը 1993-ին, երբ դեռ ավարտված չէր պատերազմը, հեռացել Արցախից, ապա նշանակվել Հայաստանի պաշտպանության նախարար:

Իրազեկ մարդիկ ասում են, որ Ստեփանակերտի եւ Երեւանի միջակայքում Սարգսյանը մի քանի ամսով եղել է Մոսկվայում: Ունանք ասում են՝ Ռուսաստանի մայրաքաղաք Սերժ Սարգսյանին տարել է դարձյալ արցախյան պատերազմի հետ կապված առաքելություն, մյուսներն ասում են՝ Սարգսյանն Արցախից հեռացել է, որովհետեւ հակասություններ է ունեցել նրանից հետո ԼՂՀ ՊԲ հրամանատար դարձած Սամվել Բաբայանի հետ: Սա այն դեպքն է, որ երկու վարկածները իրար կարող են ոչ թե հակասել, այլ՝ փոխլրացնել: Համենայն դեպս, փաստ է նաեւ, որ 90-ականներից Սարգսյանի ու Բաբայանի «ջրերը նույն առվով չեն հոսել»:

1993-ին Սերժ Սարգսյանը Հայաստան եկել եւ ՊՆ նախարար է դարձել Վազգեն Սարգսյանի երաշխավորությամբ: Վազգեն Սարգսյանն ու Սերժ Սարգսյանը գոնե արտաքուստ թիմակիցներ են եղել մինչեւ 1999-ի սկզբները: 1999-ի սկզբին, երբ տեղի ունեցան Վահան Խորխոռունու եւ Արծրուն Մարգարյանի աղմկահարույց սպանությունները, Վազգեն Սարգսյանի շրջապատի քննադատության սլաքներն ուղղվեցին ՆԳ եւ ԱԱ միացյալ նախարարության ուղղությամբ, որը ղեկավարում էր Սերժ Սարգսյանը:

Վերջինս քննադատություններին պատասխանեց «Արմենիկոմի» հայտնագործության մասին հեռուստատեսային հայտարարությամբ եւ երկրապահ մի քանի հրամանատարների տների խուզարկություններով: Խորհրդարանական ընտրություններից հետո վարչապետ դարձած Վազգեն Սարգսյանն էապես թուլացրեց Սերժ



Սարգսյանի ազդեցությունը՝ միացյալ նախարարությունը լուծարելով եւ նրան նշանակելով միայն ԱԱ նախարար:

...«Վերջին բոլշեիկ» տարիներ առաջ այսպես դիմեց Սերժ Սարգսյանին գեներալ Մանվել Գրիգորյանը: Վերջինս թերեւս ակնարկում էր, որ Սարգսյանը համազգային շարժման առանցքային վերջին գործիչն է, որ գտնվում է իշխանության օլիմպոսում: Թերեւս այդպես էլ կա. իշխանությունը համալրվում է նոր մարդկանցով, ովքեր ոչ Ազատության հրապարակում են մաշեցրել իրենց ջահեությունը, ոչ էլ՝ առաջնագծում<sup>96</sup>...

### **Տեր-Պետրոսյանի ֆենոմենը, Զվիադի փախուստը Հայաստան, Էլչիբեյի չկայացած «լուսնը» Սեւանում (02.02.2018)**

ԻՍԱԿ Գեղամի ֆոնին համազգային շարժումներ ծավալվեցին նաեւ հարեան Վրաստանում եւ Ադրբեջանում: Սակայն համազգային շարժումների որակական տարբերությունն էական էր, ինչի հետեւանքով 90-ականների սկզբին Հայաստանում ձեւավորվեց էֆեկտիվ պետական համակարգ, որը կարողացավ հաղթանակ տանել արցախյան պատերազմում, իսկ Ադրբեջանն ու Վրաստանը պարտություններ կրեցին պատերազմներում՝ մխրճվելով քաղաքացիական պատերազմների եւ անկայունության հորձանուտում: Էլչիբեյն ու Գամսախուրդիան սովետական դիսիդենտներ են եղել, սակայն 1988-90 թթ.-ին նրանց այդպես էլ չհաջողվեց իրենց շուրջ ձեւավորել, ըստ էության, համազգային շարժումներ: Դրան խանգարեցին՝ մի կողմից, Էլչիբեյի ու Գամսախուրդիայի դիսիդենտական բարդությունները, որոնք շատ արագ փոխակերպվեցին վճռիզմի, մյուս կողմից՝ վրացական եւ ադրբեջանական շարժումների աշխարհայացքային սահմանափակվածությունը, դրանց օրակարգերի եւ համաշխարհային համատեքստի աններդաշնակությունը: ՀՀ-ն հիրավի շեշտը դնում էր ժողովրդավարական բարեփոխումների

<sup>96</sup> [in.am/2289676.html](http://in.am/2289676.html). 01.02.2018թ.:

վրա, զվիադիստների համար գաղափարական ակունք էր Վրաստանի առաջին հանրապետությունը, իսկ Էլչիբեյի կուռքը Քեմալ Աթաթուրքն էր:

Լեւոն Տեր-Պետրոսյանի ՀՀ-ն եւ վրացական շարժման առաջնորդ Զվիադ Գամսախուրդիայի ազգայնական ճակատը իշխանության եկան գրեթե զուգահեռաբար՝ խորհրդային օրենսդրության շրջականերում հաղթանակ տանելով Գերագույն խորհրդի ընտրություններում: Երկու գործիչներն էլ նախ ընտրվեցին Գերագույն խորհրդի, ապա երկրի նախագահներ, սակայն միանգամայն տարբեր եղան երկու առաջնորդների վարքագծերը: Հակակայսերական հոե-տորաբանությամբ աչքի ընկնող Գամսախուրդիան բացահայտ առճակատման գնաց Մոսկվայի հետ, բայց դա սովետական նախկին դիսիդենտին չհասնաքարեց, որպեսզի նա ընդունի մոսկովյան ԳԿԶՊ-ի նվաստացուցիչ պահանջները: Զվիադն առավել անհավասարակշիռ գտնվեց հարավօսական խնդրում:

«Շուտով իմ 10000 արծիվների հետ ես կլինեմ Ցխինվալիում, եւ կտեսնենք, թե Ցխինվալիի հանրությունը ինչ հանդիպում կկազմակերպի նրանց համար: Մենք կլորրենք նրանց վիզը, հատկապես որ նման թույլ հակառակորդներ, ինչպիսիք են օսերը, դժվար չի լինի զսպել: Վրաստանի կեսը կլինի այնտեղ, եւ այնտեղ կերեա, թե ում արյունը ամենից շատ կթափվի»,- 1990-ի աշնանը խորհրդարանում հայտարարում էր Վրաստանի նորընտիր ղեկավար Զվիադ Գամսախուրդիան՝ չնայած նրան, որ ամիսներ անց նրա հարավօսական քաղաքականությունը ֆիասկո ապրեց: Գամսախուրդիայի իշխանությունը կառուցվում էր ոչ թե ժողովրդավարության, այլ՝ օտարամերժության հենքով: 1990 թվականի դեկտեմբերի 6-ին անգլիական «Թայմս» պարբերականին տված հարցազրույցում Զվիադ Գամսախուրդիան հանդես է եկել նաեւ հակահայկական եւ հակա-ադրբեջանական ելույթներով: Նա մասնավորապես ասել է. «հայերն ու ադրբեջանցիները միասին հանդիսանում են Վրաստանի բնակչության 20 տոկոսը, դա վտանգ է վրաց ազգի համար: Նրանց մեծամասնությունը թշնամիներ են»:

Ազրեսիվ արտաքին և ներքին քաղաքականությունը ի վերջո արդեն 1991-ի սեպտեմբերին Վրաստանում հանգեցրեց քաղաքացիական բախումների, ինչի հետեանքով 1992-ի հունվարին Վրաստանի նախագահ Ջվիադ Գամսախուրդիան ընտանիքով և շուրջ 100 հոգանոց զինված թիկնազորով հայտնվեց Հայաստանի սահմանի մոտ ու քաղաքական ապաստան խնդրեց Հայաստանի իշխանություններից: Տեր-Պետրոսյանը բավականին շրջահայաց գտնվեց՝ մի կողմից ընդառաջելով Գամսախուրդիային և մի քանի օրով նրան ապաստան տալով Հայաստանում, մյուս կողմից՝ մերժելով քաղաքական ապաստանի և Վրաստանի ներքին գործերին խառնվելու վերջինիս խնդրանքը:

Մոտավորապես մեկ տարի ու մի քանի ամիս Ադրբեջանը նախագահեց ժողովրդատի առաջնորդ Արուֆազ Էջիբեյը: Նա իշխանության եկավ դարաբաղյան պատերազմի ալիքի վրա՝ 1992-ի հունիսի 7-ին, հոխորտաց լողանալ Սեանում, սակայն դարձավ Արցախում ադրբեջանական բանակի անփառունակ պարտությունների զոհը՝ 1993-ի օգոստոսին ճողոպրելով Բաքվից:

Լեւոն Տեր-Պետրոսյանը գերադասեց բաց առճակատման չզնայ Մոսկվայի հետ, Հայաստանի անկախության գործընթացն իրականություն դարձրեց խորհրդային օրենսդրության համաձայն, սակայն երբեք չնվաստացավ ԳԿԶՊ-ի եռօրյա դիկտատուրայի առաջ: Լեւոն Տեր-Պետրոսյանը Բաքվում թեյախմության խոստում չստաց, բայց ստիպեց, որ ոչ միայն Շուշիում, այլև՝ Ադրբեջանի՝ Ղարաբաղից դուրս գտնվող յոթ շրջկենտրոններում խոնարհվեն Ադրբեջանի դրոշները:

88-ի շարժման հզոր էներգետիկայի շնորհիվ Տեր-Պետրոսյանին հաջողվեց ստեղծել երկարամյա էֆեկտիվ իշխանություն, որը կարողացավ հաղթանակ տանել արցախյան պատերազմում:

Ավարդ, Տեր-Պետրոսյանի իշխանությունը նույն հետևողականությունը չցուցաբերեց ներքին բարեփոխումների հարցում՝ 1998-ին ճանապարհ բացելով հայկական հակահեղափոխության հաղթանակի համար<sup>97</sup>...

<sup>97</sup> [in.am/2290393.html](http://in.am/2290393.html). 02.02.2018թ.:

## Հայկական հակահեղափոխության ուրվականը համազգային շարժման սովորում

(03.02.2018)

Այս ամիս լրանում է ոչ միայն համազգային շարժման 30-րդ տարեդարձը, այլ նաև՝ փետրվարյան դրամատիկ իրադարձությունների քսան տարին, որոնք 1998-ի փետրվարի 3-ին հանգեցրեցին առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի ինքնակամ-հարկադրական հրաժարականին: Հայկական հակահեղափոխության արմատներն իրականում թաքնված են 88-ի սովորում, իսկ ավելի ստույգ հետեանք են այն բանի, որ Երրորդ հանրապետության առաջին իշխանությունները շատ արագ մխտեցին 88-ի պոտենցիալը:

Շարժման հարթակը այնքան միատարր ու կոտ չէր՝ ինչքան կարող էր թվալ առաջին հայացքից ու պատահական չէ, որ 1998-ի հակահեղափոխության առաջին գծում շարժման երկրորդ շերտի գործիչներն էին, ովքեր համազգային զարթոնքի տարիներին ակտիվ էին եղել Արցախում: Շարժման առաջնորդները հաճախ են պնդում, որ 88-ի նպատակներն իրագործված են՝ Հայաստանն անկախ է, Արցախն՝ ազատագրված:

Հանրահավաքային լոզունգների տրամաբանության համատեքստում նրանք գուցե նույնիսկ ճիշտ են, սակայն 88-ի շարժման պոտենցիալը, էներգետիկան թույլ էին տալիս լուծել ոչ միայն ազգային հարցերը, հաղթել պատերազմում, այլ նաև ունենալ ժամանակակից երոպական պետություն՝ ինչպես դա հաջողվեց մերձբալթյան ժողովուրդներին: Եթե Հայաստանը կարողանար ապահովել դեմոկրատական այդ ճեղքումը, լուծված կլինեք նաև ռուսական կայսրությունից վերջնականապես պոկվելու հարցը, որովհետև Մոսկվայի ազդեցությունը բոլոր դեպքերում տարածվում է այն երկրների վրա, որոնք ունեն ավտորիտար ռեժիմներ, օլիգոպոլ համակարգեր:

90-ականների սկիզբը խոստումնալից էր. նույնիսկ պատերազմը չէր խանգարում քաղաքական, տնտեսական բարեփոխումների իրականացմանը, սակայն ՀՀԵ-ն չկարողացավ հաղթահարել իշխանությունը պահելու բարդույթը, ինչի հետեանքով տեղի ունե-



ցավ իշխանության քաղաքական թեւի դուրսնւղումը նմանակատու-րայի, այսպէս կոչված՝ երկրապահական էլիտայի, դարաբաղյան կլա-նի կողմից, ընտրությունների ինստիտուտի վարկաբեկումը՝ 1995–96 թթ.-ի խորհրդարանական եւ նախագահական ընտրությունների ու սահմանադրական հանրաքվէի ժամանակ: Սրան զուգահեռ՝ շու-կայական տնտեսությունը տեղը զիջեց պետական կապիտալիզմի մոդելին:

1996-ին իշխանության ճգնաժամն արդեն ակնհայտ էր եւ, ըստ էության, տեսանելի չէին այն հաղթահարելու դեղատոմսերը: 1998-ին տեղի ունեցավ, ըստ էության, պալատական հեղաշրջում, որը քա-ղաքական ակտ էր՝ ուղղված 88-ի համազգային շարժման արժեք-ների, Երրորդ հանրապետության հիմքերի դեմ:

Մյուս կողմից՝ 1998-ի քաղաքական դավադրությունը երբեք իրա-կանություն չէր դառնա, եթե համազգային շարժումից ընդամենը տաս տարի անց ՀՀ-ն եւ նրա ղեկավարությունն անհուսալիորեն հեռացած չլինեին 88-ի ակունքից:

...Մեկ տարի հետո՝ 1999թ.-ի հոկտեմբերի 27-ին, Հայաստանի խորհրդարանում հնչած դավադիր կրակոցները փաստացի ընդհա-տեցին Երրորդ հանրապետության քաղաքական կենսագրությունը<sup>98</sup>:

### Հեղափոխական ընտրություններ (03.02.2018)

1990թ.-ի մայիսի 20-ին խորհրդային Հայաստանում տեղի ունե-ցան Գերագույն խորհրդի ընտրություններ: 260 տեղանոց ԳԽ-ն ձե-ավորվում էր բացառապես մեծամասնական ընտրակարգով՝ թեւեւ Հայաստանում փաստացի երկիշխանություն էր եւ մեծամասնական բոլոր ընտրատարածքներում պայքարն ընթանում էր կոմկուսի եւ համազգային շարժման ներկայացուցիչների միջեւ:

Նորընտիր Գերագույն խորհուրդն իր առաջին նիստն անցկաց-րեց հուլիսի 20-ին, ԳԽ նախագահի ընտրությանը ձեռնամուխ եղավ

օգոստոսի 3-ին: ՀԿԿ առաջին քարտուղար, ՀԽՍՀ փաստացի ղե-կավար Վլադիմիր Մովսիսյանի դեմ ՀՀ-ն առաջադրեց Լեւոն Տեր-Պետրոսյանի թեկնածությունը: Փողոցն արդեն ընտրել էր երկրի նոր ղեկավարին: Նիստերն ընթանում էին կատավարության նիստե-րի դաիլիճում, որի հարակից փողոցներում հավաքվել էին տասնյակ հազարավոր քաղաքացիներ՝ անընդհատ վանկարկելով Տեր-Պետ-րոսյանի անունը: Մոսկվան թերեւս հաշտվել էր պարտության հետ, մանավանդ, որ մայիսի 27-ի սադրանքից հետո կոմունիստական իշխանությունը ամբողջովին վարկաբեկվել էր հայաստանցիների աչքերում:

Լեւոն Տեր-Պետրոսյանը Վլադիմիր Մովսիսյանին հաղթեց միայն չորրորդ քվեարկության ժամանակ՝ օգոստոսի 4-ին, երբ հասարա-կության ճնշման տակ կոմկուսի մի քանի պատգամավորներ «ուրա-ցան» իրենց առաջին քարտուղարին: Օգոստոսի 4-ը պատմական օր է Հայաստանի նորագույն պատմության մեջ, որովհետեւ Հայաս-տանում տապալվեց կոմունիստական յոթանասունամյա իշխանու-թյունը:

Օգոստոսի 4-ը նաեւ որոշակի քաղաքական աքսիոմներ է իրա-պարակ բերել, որոնք իրենց կենսունակությունն ապացուցել են հե-տագա տարիներին, ընդ որում՝ ոչ միայն Հայաստանում: ՀՀ-ն 1990-ին հաղթանակ տարավ բացառապես խորհրդային օրենսդրու-թյան շրջանակներում՝ լեգիտիմություն ձեռք բերելով ոչ միայն հա-մազգային շարժման նկատմամբ համակրություն ունեցող միջազ-գային հանրության, այլ նաեւ՝ հայաստանյան իրադարձությունները խոտովություն համարող Մոսկվայի աչքերում: Նույնիսկ ԽՍՀՄ-ի նման դեպպոտ, տոտալիտար երկրներում հնարավոր է իշխանության գալ միանգամայն լեգալ ճանապարհով, եթե գոյություն ունի իրական այլընտրանք: 1990-ին ՀՀ-ն իրական այլընտրանք էր դարձել կոմ-կուսին, ընդ որում՝ զլոբալ առումով:

ՀԿԿ-ն եւ ՀՀ-ն տարբեր կերպ էին պատկերացնում Հայաս-տանի զարգացումը, քաղաքական եւ տնտեսական հարաբերություն-ները: Օգոստոսի 4-ը, առանց չափազանցության, կարելի է համա-րել Երրորդ հանրապետության ամենակարեւոր տարեթվերից մեկը,

<sup>98</sup> [in.am/2291128.html](http://in.am/2291128.html), 03.02.2018թ.:

որը ճանապարհ բացեց 1990-ի օգոստոսի 23-ին Անկախության հռչակագրի ընդունման, իսկ 1991-ի սեպտեմբերի 21-ին Անկախության հանրաքվեի անցկացման համար<sup>99</sup>:

### Մի քանի միջ շարժման ու պատերազմի մասին (05.02.2018)

1988-ի համազգային շարժումն աննախադեպ է հայ իրականության մեջ, որովհետև նման զանգվածային ու տեսական գործընթաց՝ ռացիոնալ եւ կոնսոլիդացնող օրակարգով, մեր պատմությունը չէր տեսել: Այս համատեքստում նույնիսկ բնական է, որ շարժման ու դրան հաջորդած պատերազմի մասին տարածվել են զանազան միջեր, ասեկոսներ: Օրինակ՝ կարելի է նույնիսկ լուրջ մարդկանցից կարծիք լսել, որ համազգային շարժումը սովետական ԿԳԲ-ի կամ ամերիկյան ՑՌՈւ-ի ձեռքի գործն է:

Նման ասեկոսե տարածողներն իրականում թերազնահատում են մեր ժողովրդի պոտենցիալը եւ վստահ են, որ նման զանգվածային շարժում չէր կարող լինել՝ առանց արտաքին միջամտության: Սակայն այս վարկածն առնվազն անլուրջ է, որովհետև եթե նույնիսկ տեսականորեն ընդունենք, որ հարթակի մեկ-երկու գործիչ վերահսկվել են, նրանք չէին կարող ուղղորդել համազգային շարժումը: Ձևազվածային շարժումները, գործընթացները, որպես կանոն, գծագրված սցենար չեն ունենում կամ շատ արագ դուրս են գալիս դրա շրջանակներից:

Մեկընդմիջտ պատմության համար պետք է արձանագրել, որ համազգային շարժման հիմնական սուբյեկտը եղել է՝ ոչ թե «Ղարաբաղ» կոմիտեն կամ ՀՀԵ-ն, այլ՝ Հայաստանի ժողովուրդը, որը, բնականաբար, չէր կարող «հավաքագրված» լինել օտար հատուկ ծառայությունների կողմից: Կառավարող ՀՀԵ-ի հեղինակագրվածները զուգահեռ՝ պոպուլյար դարձավ մի տեսակետ, թե կոմիտեի նպատակը եղել է ոչ թե Ղարաբաղը, այլ՝ իշխանությունը: Բացարձա-

<sup>99</sup> [in.am/2291627.html](http://in.am/2291627.html). 03.02.2018թ.:

կապես հիմնազուրկ տեսակետ է, որովհետև շարժման առաջին ամիսներին խոսակցություններ չեն եղել անգամ անկախ պետության հեռանկարի մասին, իսկ խորհրդային որեւէ հանրապետությունում իշխանության մեջ կարելի էր հայտնվել բացառապես կոմունիստական խողովակով:

Իշխանության գալու մասին շարժման գործիչները կարող էին մտածել միայն 1989-ի նոյեմբերից հետո, երբ համազգային շարժումն ինստիտուցիոնալ տեսք ընդունեց եւ ձեակերպեց հստակ քաղաքական այլընտրանք: Իհարկե, ասվածը բացարձակապես չի արդարացնում այն աններելի սխալները, որ ՀՀԵ-ն գործել է իշխանության տարիներին: Եթե լուրջ ընդունենք համազգային շարժմանը դատաւիտողների կարծիքները, ապա հայկական ինքնապաշտպանական ուժերը պատերազմի տարիներին պայքարել են ոչ միայն արևախում հակառակորդի, այլ նաեւ «խաղաղասեր» Լեւոն Տեր-Պետրոսյանի դեմ, ով «հանձնել» է Արծվաշենը, դեմ է եղել Շուշիի ազատագրմանը:

Լեւոն Տեր-Պետրոսյանն իր քաղաքական կենսագրության ողջ ընթացքում հավատարիմ է մնացել խաղաղության օրակարգին, սակայն բժախնդի վերաբերմունք է ունեցել գերագույն զինավոր հրամանատարի իր կարգավիճակի հանդեպ: Վազգեն Սարգսյանը, ռազմական ոլորտի մյուս պատասխանատուները քանիցս հայտարարել են, որ բոլոր նշանակալի ռազմական օպերացիաները մշակվել եւ իրականացվել են Տեր-Պետրոսյանի գիտությամբ եւ հավանությամբ:

Ի վերջո, եթե Տեր-Պետրոսյանի ընդդիմախոսները նրան մեղադրում են «ցրտի ու մութ» տարիների համար, ապա պարտավոր են ընդունել, որ դրանք եղել են նաեւ հաղթանակի տարիներ<sup>100</sup>:

<sup>100</sup> [in.am/2291954.html](http://in.am/2291954.html). 05.02.2018թ.:



## Բլեյանի դպրոցի Աշոտները

(06.02.2018)

«Ղարաբաղ» կոմիտեի անդամ Աշոտ Մանուչարյանն այսօր լրագրողներին պատմել է, որ համազգային շարժման առաջին հավաքը անցկացվել է իրենց՝ «Մխիթար Սեբաստացի» դպրոցում (այն ժամանակվա 183 դպրոցում): «Շարժման ավագ սերունդը փորձում էր պայմանավորվել ապարատային՝ դիմել Մոսկվա, Ղարաբաղում ինչ-որ բաներ ձեռնարկել, իսկ երիտասարդները ավելի համարձակ էին հրապարակային գործողություններում»,- նշել է նա: Աշոտ Մանուչարյանը պատմել է, որ «Ղարաբաղ» կոմիտեի անդամներից էին դպրոցի ուսուցիչները՝ Սամսոն Ղազարյանը, Համբարձում Գալստյանը: «Մխիթար Սեբաստացի» կամ ժողովրդական լեզվով ասած՝ Բլեյանի դպրոցի ծնողներն են եղել Լեւոն Տեր-Պետրոսյանը, Ալեքսան Հակոբյանը, Վանո Սիրադեղյանը<sup>101</sup>: Թիվ 183 դպրոցը հիշարժան է այն փաստով, որ դրա տնօրենը՝ Աշոտ Բլեյանը եւ ուսմավարը՝ Աշոտ Մանուչարյանը, եղել են համազգային շարժման ակտիվ դերակատարներ:

Մանուչարյանը շարժման խորհրդանիշներից, «Ղարաբաղ» կոմիտեի մշտական հոետորներից մեկն էր: Այսօրվա ասուլիսում Մանուչարյանը ուշագրավ միտք է արտահայտել: Նա ասել է, թե շարժման սխալներից մեկն այն էր, որ «Ղարաբաղ» կոմիտեն որոշում կայացրեց գնալ դեպի կառավարում: Նրա կարծիքով՝ շարժման որակը կորավ դրանով: Մանուչարյանի այս տեսակետը վիճահարույց է: Մի կողմից՝ նա ճիշտ է, որովհետեւ դառնալով իշխանություն՝ կոմիտեն կամ ՀՀԵ-ն կորցրեց բարոյական արբիտրի դերը՝ դառնալով քաղաքական դիմակայության սուբյեկտ:

Մյուս կողմից՝ Արեւելյան Եվրոպայի դեմոկրատական շարժումների փորձը հուշում է, որ ՀՀԵ-ն այլընտրանք չունեւ, եթե, իհարկե, ցանկանում էր իրականություն դարձնել իր քաղաքական ծրագրերը: Այլ խնդիր է, որ ՀՀԵ-ն չկարողացավ շարժման բարձր նշանդր դարձնել իշխանության գործունեության եւ որակի նշանդր ու շատ

<sup>101</sup> Նաեւ՝ Սամվել Գետրոսյանը:

շուտով ինքը դարձավ իշխանության բյուրոկրատական արատների կրող:

Աշոտ Մանուչարյանն իշխանության մեջ գտնվեց ընդամենը երկու տարի՝ 1991–93 թթ.-ին զբաղեցնելով ՆԳ նախարարի, ապա ՀՀ նախագահի ազգային անվտանգության գծով խորհրդակցականի պաշտոնները: 1996-ի նախագահական ընտրություններում Մանուչարյանն արդեն Տեր-Պետրոսյանի մրցակիցներից մեկն էր, սակայն լուրջ հաջողություն չգրանցեց: Աշոտ Մանուչարյանն այս ամբողջ տարիներին եղել է ակտիվ քաղաքականության մեջ, սակայն մնաց, այսպես կոչված, շարժման տրամաբանության մեջ՝ այդպես էլ չնույնանալով որեւէ կուսակցության հետ:

Հիմա Աշոտ Մանուչարյանն ավելի շատ հանդես է գալիս փորձագիտական գնահատականներով՝ միով բանիվ, ասոցացվելով շատ կոնկրետ արժեհամակարգի հետ: Մանուչարյանի տեսակետները մոտ են երոպական ծախս ինտելեկտուալների դիրքորոշումներին: Աշոտ Բլեյանը 1989-ին ընտրվեց ՀՀԵ վարչության անդամ, 1990-ին՝ ԳԽ պատգամավոր: 1994-ին զբաղեցրել է լուսավորության նախարարի պաշտոնը, սակայն հետո հեռացել է իշխանությունից՝ իր գործունեությունը կենտրոնացնելով հարազատ կրթօջախում:

Բլեյանի կրթական ծրագրերը կրեատիվ մեծ ռեսուրս ունեն, սակայն միանշանակ չեն ընկալվում փորձագիտական շրջանակներում եւ հասարակության կողմից: Սակայն Աշոտ Բլեյանի օտարումը իշխանության վերնախավից եւ նույնիսկ քաղաքականությունից սկսվեց արցախյան առաջին պատերազմի ժամանակ, երբ նա կտրուկ առաջ քաշեց խաղաղության պլատֆորմը եւ նույնիսկ մեկնեց Բաքու՝ անտեսելով Հայաստանում եւ Ադրբեջանում իր հասցեին հնչող սպառնալիքները: Բլեյանը մինչեւ վերջ հավատարիմ մնաց իր դիրքորոշումներին՝ չնայած մինչեւ հիմա էլ դրանք չեն ընդունվում հասարակության մեծամասնության կողմից:

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրը մինչեւ այսօր էլ իր ուրույն տեղն ունի կրթական համակարգում եւ ծգող կենտրոն է

ազատամիտ շատ մտավորականների համար<sup>102</sup>:

### **Շուշիի ազատագրման առեղծվածը, ի՞նչ էր անում Տեր-Պետրոսյանը Թեհրանում (07.02.2018)**

Շուշիի ազատագրումը հայկական ռազմական ուժերի առաջին նշանակալից հաղթանակն էր Արցախյան պատերազմում: Ճակատամարտը տեղի է ունեցել 1992թ. մայիսի 8-ին ռազմավարական կարևոր Շուշի քաղաքում: Մարտական գործողությունները ճշգրիտ հաշվարկված էին եւ արդեն մյուս օրը Շուշին լիովին ազատագրված էր ադրբեջանցիներից, որոնք ողջ հակամարտության ընթացքում Շուշիից ուժրակոծում էին ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտը: 1991թ.-ի նոյեմբերից մինչև 1992թ.-ի մայիսի սկիզբը Շուշիից, Ջանհասանից, Քյոսալարից, Ղայրալուից Ստեփանակերտի վրա արձակվել է շուրջ 4740 արկ, որից մոտ 3 հազարը «Գրադ» կայանքներից: Այդ հրետակոծությունների հետևանքով զոհվել են 111 եւ վիրավորվել 332 խաղաղ բնակիչներ, ավերվել է 370 բնակելի տուն եւ շինություն:

Շուշիի ազատագրումն արցախյան պատերազմի բեկումնային պահերից մեկն էր: Իրադարձությունը նշանակալի է նաեւ քաղաքական, բարոյական տեսանկյունից, որովհետեւ Շուշին Արցախի պատմական մայրաքաղաքն է եւ նրա ազատագրումն ավելի հաստատուն դարձրեց Արցախի անկախության հեռանկարը: Շուշիի ազատագրումը նաեւ տնտեսական անհրաժեշտություն էր, ցամաքային եւ օդային ճանապարհների շրջափակման, էլեկտրաէներգիայի, գազի ու խմելու ջրի պակասի եւ Շուշիից անընդհատ հրթիռակոծությունների պատճառով Ստեփանակերտում ու հարակից բնակավայրերում, ինչպես նաեւ ողջ հանրապետությունում կաթվածահար էր եղել տնտեսությունը:

Հիմա անդրադառնանք Շուշիի ազատագրման օրվա մեկ այլ ուշագրավ իրադարձության, որը հետագայում շահարկումների տեղիք տվեց, թե ռազմական այդ օպերացիան տեղի է ունեցել առանց Լեւոն Տեր-Պետրոսյանի իմացության: 1992թ. մայիսի 6-ին Իրանի նախագահ Հաշեմի Ռաֆսանջանիի հրավերով Թեհրան է ժամանում ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի գլխավորած պատվիրակությունը: Կողմերը, ի թիվս այլ հարցերի, բանակցում են նաեւ Լեւոնային Ղարաբաղի հակամարտության շուրջ:

ԻհՀ ԱԳ նախարար Ալի Աքբար Վելայաթիի՝ Երեւան կատարած այցից որոշ ժամանակ անց փոխարտգործնախարար Մահմուդ Վալեդին ժամանում է Ադրբեջան եւ Հայաստան, որտեղ նա փորձում էր կողմերին համոզել զինադադար հաստատելու հարցում համաձայնության գալ:

1992թ. մայիսի 8-ին Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը, Ադրբեջանի նախագահի պաշտոնակատար Յադուբ Մամեդովը, ինչպես նաեւ միջնորդ երկրի՝ Իրանի, նախագահ Հաշեմի Ռաֆսանջանին ԼՂ հակամարտության կարգավորման մասին ստորագրում են համատեղ հայտարարություն, համաձայն որի՝ Մահմուդ Վալեդին պետք է կրկին ժամաներ տարածաշրջան՝ Բաքու, Երեւան եւ Ստեփանակերտ, զինադադարն իրականացնելու համապատասխան մեխանիզմներ մշակելու համար: Իրանն առաջին երկիրն է, որ Լեւոնային Ղարաբաղի հակամարտության հարցում հանդես է եկել միջնորդական առաքելությամբ: Շուշիի ազատագրումը կասեցրեց Իրանի միջնորդական առաքելությունը, սակայն Թեհրանը ԼՂ խնդրում մինչեւ հիմա հանդես է գալիս հավասարակշիռ դիրքորոշումներով: Այն փաստը, որ Շուշիի ազատագրման օրը Տեր-Պետրոսյանը բանակցում էր Ադրբեջանի իր գործընկերոջ հետ՝ շատ ընդդիմախոսների հիմք է տվել պնդելու, որ Շուշին ազատագրվել է առանց առաջին նախագահի իմացության, նույնիսկ՝ ի հեճուկս նրա:

Նույնիսկ ՀՀ ՁՈՒ բարձրաստիճան պաշտոնյաների եւ օպերացիային մասնակից հրամանատարների հավաստիացումները, թե օպերացիայի բոլոր մանրամասները համաձայնեցված են եղել Տեր-Պետրոսյանի հետ, չփակեցին չարակամների բերանները: Թեհրանի

<sup>102</sup> [in.am/2292604.html](http://in.am/2292604.html). 06.02.2018թ.:



բանակցությունները եւ Շուշիի ազատագրումն իրականում Տեր-Պետրոսյանի փայլուն դիվանագիտության դրսևորումն են: Առաջին նախագահը կարողացավ թուլացնել պաշտոնական Բաքվի զգոնությունը՝ հուսալի դարձնելով Շուշիի ազատագրման թիկունքը<sup>103</sup>:

## Մեր հաղթական բանակի փառավոր գեներալները

(07.02.2018)

Համազգային շարժումը, երրորդ հանրապետության ծնունդն անհրաժեշտություն դարձրեցին Հայաստանի զինված ուժերի ստեղծումը: Հայաստանի նորաստեղծ բանակի միջուկը երկրապահությունն էր: Սակայն երկրի քաղաքական ղեկավարությունը գիտակցում էր, որ ժամանակակից, մարտունակ բանակ ունենալու համար երկրապահների անձնվիրությունն ու նվիրումը պետք է փոխլրացվի կադրային սպաների մասնագիտական հմտություններով: Լեւոն Տեր-Պետրոսյանն ու Վազգեն Սարգսյանը քաղաքական համարձակ որոշում են կայացնում՝ Հայաստան հրավիրել սովետական (ռուսական բանակի) հայազգի բարձրաստիճան սպաներին<sup>104</sup>: Հայաստանի քաղաքական ղեկավարության ջանքերը պսակվում են հաջողությամբ եւ շատ շուտով հայոց բանակը համալրվում է փառապանծ ուղի անցած սպաներով:

Առաջիններից մեկը Հայաստան վերադարձավ Նորատ Տեր-Գրիգորյանցը, ով մինչեւ հիմա էլ ակնանձանքով է խոսում հերոսական 90-ականների, իր ու Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ Վազգեն Սարգսյանի միջեւ տեղի ունեցած զրոյցների, աշխատանքային քննարկումների մասին: Տեր-Գրիգորյանցը Հայաստանի բանակի փաստացի հրամանատարությունը ստանձնել է 1992-ին՝ 56 տարեկան հասակում: Սովետական բանակում գեներալ-լեյտենանտի վերջին կար-

<sup>103</sup> [in.am/2293485.html](http://in.am/2293485.html). 07.02.2018թ.:

<sup>104</sup> Դա տեղի է ունեցել Բ. Ելցինի եւ Լեւոն Տեր-Պետրոսյանի միջեւ կայացած համաձայնության արդյունքում, ինչի շնորհիվ խորհրդային բանակից Հայաստան տեղափոխվեց 1000-ից ավելի հայազգի բարձրաստիճան սպա:

գավիճակը եղել է Յամաքային Ջորջերի Գլխավոր Շտաբի պետի պաշտոնը:

Ռազմական գործում, ռազմավարական պլանավորման հարցերում Նորատ Տեր-Գրիգորյանցն ամենայն աջակցություն է ցուցաբերում պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանին, միաժամանակ ստանձնում է պաշտպանության առաջին փոխնախարարի պաշտոնը: 1993թ.-ին, Տեր-Գրիգորյանցը կարճ ժամանակով ստանձնում է պաշտպանության նախարարի պաշտոնը: Մեծ է Տեր-Գրիգորյանցի լուրման Հայաստանի Ջինված ուժերի կայացման եւ Հայաստանի ռազմական դոկտրինայի մշակման գործում:

Գեներալ Գուրգեն Դալիբալթայանը 1980-1987 թթ.-ին եղել է Հյուսիսկովկասյան ռազմական օկրուգի զորքերի հրամանատարի տեղակալ մարտական պատրաստության գծով: Նա Հայաստանի զինված ուժեր է եկել պահեստազորից, պատկանելի տարիքում՝ 65 տարեկան հասակում: 1991թ.-ին Դալիբալթայանը նշանակվել է ՀՀ Նախարարների խորհրդին առընթեր Հայաստանի Պաշտպանության կոմիտեի շտաբի պետ, 1991-1992 թթ.-ին զբաղեցրել է ՀՀ Ջինված ուժերի գլխավոր շտաբի պետ-պաշտպանության նախարարի առաջին տեղակալի պաշտոնը: 1993-2007 թթ.-ին գեներալը դարձյալ ծառայել է Հայաստանի բանակին՝ լինելով քաղաքացիական պաշտոնում. Դալիբալթայանը ՀՀ նախագահի խորհրդական-Գլխավոր ռազմական տեսուչ էր:

Իր կյանքի վերջին տարիները Գուրգեն Դալիբալթայանն անցկացրեց բանակում՝ իր խորհուրդներով օգնելով պաշտպանության նախարարին: 1996-ին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը Գուրգեն Դալիբալթայանին շնորհել է գեներալ-գնդապետի կոչում: Փառապանծ գեներալն իր մահկանացուն կնքել է 2015-ին: Խորհրդային բանակի սպա Արկադի Տեր-Թադեոսյանը ծառայել է Աֆղանստանում, Գերմանիայում, Չեխոսլովակիայում, Բելառուսում: 1988 թվականից միացել է Արցախի ազատագրման պայքարին եւ ակտիվ մասնակցություն է ունեցել կամավորականների զինվորական մարզման գործում: 1990 թվականին դարձել է «Սասունցի Դավիթ» կամավորական ջոկատի անդամ:

Կոմանդոսը ավելի պրակտիկ մասնակցություն է ունեցել արցախյան պատերազմին՝ լինելով առաջնագծում: 1991-ին Արկաղի Տեր-Թադևոսյանը ղեկավարում էր Արցախի ինքնապաշտպանության ուժերը: Նա մեծ դերակատարություն է ունեցել Հադրութի շրջանի Տոլ գյուղի և Շուշիի ազատագրման օպերացիաներում<sup>105</sup>: Հայաստանի բանակը կարդային սպաների և երկրապահ հրամանատարների ներդաշնակություն է՝ մեր պետության արժանապատվության խորհրդանիշը, հասարակության անվտանգության երաշխիքը<sup>106</sup>:

### Սամվել Բաբայան՝ պատերազմի հերոսը, Արցախի սարսափը (09.02.2018)

Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել: Անկախ այն հանգամանքից, որ Սամվել Բաբայանն այսօր ճաղերի հետեւում է՝ նա մեծ դերակատարություն է ունեցել արցախյան պատերազմում: Սամվել Բաբայանն այն մարդկանցից մեկն է, որ հաղթեց պատերազմում՝ պարտվելով խաղաղությանը:

Բաբայանը նրանցից մեկն է, ով փառավոր կենսագրություն է կերտել պատերազմի տարիներին, իսկ խաղաղության տարիներին դարձել է դեսպարիզմի խորհրդանիշ՝ Արցախում ստեղծելով ըստ էության, խանական համակարգ: Երբ սկսվեց համազգային շարժումը, Բաբայանն ընդամենը 23 տարեկան էր, սակայն 1988–91 թթ.-ին ղեկավարել է Ստեփանակերտի 2-րդ կամավորական ջոկատը, եղել է կենտրոնական շտաբի անդամ, ԼՂՀ ինքնապաշտպանության ջոկատների հրամանատարի տեղակալ:

<sup>105</sup> Հայոց բանակի կազմավորման գործում և պատերազմական հաղթանակներում Տեր-Գրիգորյանցի և Դալիբայթյանի կողքին պետք է գնահատել նաև գեներալներ Անդրեանյանի, Իվանյանի, Զինեիչի, Հարությունյանի, Խաչատրյանի, Ապրիամովի և մյուսների մեծ վաստակը:

<sup>106</sup> [in.am/2294285.html](http://in.am/2294285.html). 07.02.2018թ.:

1991թ.-ի հունիսին «Կոլցո» օպերացիայի ժամանակ, անձնագրի անճշտությունների պատճառաբանությամբ, ԽՍՀՄ Ներքին գործերի հրամանով ձերբակալվում և 6 ամսից ավել պահվում է Բաբայի բանտերից մեկում՝ դաժան ու անմարդկային պայմաններում: 1992–93 թթ.-ին Բաբայանը ղեկավարել է մի շարք մարտական օպերացիաներ՝ ռազմի դաշտում ղեկավարելով զինակիցների գործողությունները:

1993 թ. նոյեմբերից մինչև 1999 թ. դեկտեմբեր Բաբայանը եղել է ԼՂՀ Ինքնապաշտպանության բանակի հրամանատարը, 1995–1999 թթ.-ին՝ ԼՂՀ Պաշտպանության առաջին նախարարը: Բաբայանը 29 տարեկան հասակում արժանացել է գեներալի կոչման, ԼՂՀ «Ոսկե Արծիվ» շքանշանակիր է: Սամվել Բաբայանը մասնակցել է նաև կարգավորման բանակցություններին, նրա ստորագրությունը դրված է զինադադարն ազդարարող փաստաթղթերից մեկի տակ:

«Իժո» մականունով հայտնի Սամվել Բաբայանը խաղաղության տարիներին Արցախում հաստատեց, ըստ էության, ռազմական դիկտատուրա՝ իրեն ենթարկեցնելով ԼՂՀ իշխանության բոլոր մարմինները, այդ թվում՝ նախագահ Ռոբերտ Քոչարյանին: Բաբայանը ստեղծել էր համակարգ, որը դարձել էր Արցախի ժողովրդի նվաստացման ռեպրեսիվ մեթոդ: Բաբայանն աստիճանաբար իր քաղաքական և տնտեսական ազդեցությունն է տարածում նաև Հայաստանում: Ասում են՝ նա ընդունել է միայն Վազգեն Սարգսյանի հեղինակությունը. վերջինս եղել է միակ պաշտոնյան, ով պարբերաբար սանձել է Արցախի զինված ուժերի հրամանատարին: Սամվել Բաբայանը եղել է Հայաստանի 1998-ի պետական հեղաշրջման ակունքներում:

Անվտանգության խորհրդի այդ օրերի անդամներից մեկը պատմում էր, թե ինչպես է ԼՂ խնդրի շուրջ քննարկումներից մեկի ժամանակ գեներալը շանտաժի ենթարկել առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին՝ վերջինիս հիշեցնելով Արցախում ծառայող հայաստանցի պատանիների մասին<sup>107</sup>: Սամվել Բաբայանն օգնեց

<sup>107</sup> Տե՛ս ծանոթ. 17:



Ռոբերտ Քոչարյանին՝ Հայաստանում տիրանալ իշխանության: Դերերը փոխվեցին. հիմա արդեն Քոչարյանն էր խաղի կանոններ թելադրում ԼՂՀ ՊԲ հրամանատարին: Քոչարյանը Բաբայանին օգտագործում էր որպես Վազգեն Սարգսյանի հակակշիռ: 1999-ի հոկտեմբերի 27-ի ոճրագործությունից հետո Ռոբերտ Քոչարյանը թերես համարեց, որ Սամվել Բաբայանն իրեն այլևս պետք չէ:

Սամվել Բաբայանը 2000-ին ձերբակալվեց ԼՂՀ նախագահ Արկաղի Ղուկասյանի դեմ մահափորձ կազմակերպելու մեղադրանքով և դատապարտվեց 14 տարով, սակայն 4,5 տարի անց նրան ներում շնորհվեց: Դժվար է ասել՝ ինչքանով կապ ուներ Բաբայանը այս հանցագործության հետ, սակայն այն առիթ դարձավ, որպեսզի փոշիացվի երբեմնի ամենագոր գեներալի համակարգային ազդեցությունը: Ազատություն ձեռք բերելուց հետո Սամվել Բաբայանն ընդմիջտ հեռացավ Արցախից, թերես նաև՝ հաղթանակի բարոյական ակունքից:

Բաբայանի հայաստանյան գործունեությունը նրա կենսագրության ամենաանփառունակ էջն է: Նրա ողջ պոտենցիալը մսխվեց Ռոբերտ Քոչարյան-Սերժ Սարգսյան իրական կամ մտացածին հակադրության գործընթացում, որտեղ Բաբայանի ծառայությունները պարբերաբար պահանջարկված էին դառնում համակարգի այս կամ այն առանցքային դեմքի համար: Մեծ հաշվով՝ համակարգային բազարների հետեանքով Արցախի հերոսը հերթական անգամ հայտնվեց բանտում: Այս անգամ՝ ԱԱԾ նկուղում:

...Յուրաքանչյուր հերոսի կտորված ճակատագրով լիմոնի պես ճզմվում է նաև մեր հաղթանակը՝ հանրային ընկալումների, պատկերացումների մակարդակում<sup>108</sup>:

## Էջմիածնեցի գեներալների հերոսական անցյալը և օլիգարխիկ ներկան (10.02.2018)

Համազգային շարժման մասին մեր անդրադարձն ամբողջական, համապարփակ չի լինի, եթե չանդրադառնանք Երկրապահի այսօրվա վերնախավը մարմնավորող Մանվել Գրիգորյանին և Սեյրան Սարոյանին: Մարտական փառավոր ուղի անցած հրամանատարներ, ովքեր ռազմի դաշտում վաստակեցին հերոսի անուն և փառք, գեներալի ռաադիր, սակայն խաղաղության տարիներին չդիմացան իշխանության և օլիգարխիկ կյանքի գայթակղություններին<sup>109</sup>:

Մանվել Գրիգորյանը 1989թ.-ի գարնանը՝ Էջմիածնի կամավորական առաջին, ամռանը՝ Հաղորդի շրջանի Էդիլու, Հախուլու, Աղբուլաղ, Խունանջուղ, Բուլթան, Դորդուկչի և Մելիքաշեն գյուղերի ինքնապաշտպանական ջոկատների ընդհանուր հրամանատարն էր: Գրիգորյանը 1990-ին ձերբակալվել է Լեոնային Ղարաբաղի Հանրապետությունում տեղակայված ԽՍՀՄ ներքին զորքերի կողմից, դեկտեմբերին փախել է բանտարկությունից: 1989-1993 թթ.-ին Մանվել Գրիգորյանը մասնակցել է Լեոնային Ղարաբաղի Հանրապետության հարավային սահմանների պաշտպանական մարտերին, 1992-1994 թվականներին՝ Հայաստանի հարավարևելյան և Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջաններում ծավալված մարտական գործողություններին: Ղեկավարել է Հաղորդի շրջանի Հողեր գյուղի ազատագրական գործողությունը՝ ստանձնելով նույն շրջանի ենթատարածքի պաշտպանությունը:

Գեներալ Սեյրան Սարոյանը 1989-94-ին մասնակցել է ՀՀ Ճամբարակի, Նոյեմբերյանի, Արարատի (Երասխ) և ԼՂՀ Շահումյանի, Մարտակերտի, Լաչինի, Քելբաջարի, Ֆիզուլիի շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին:

Սա Երկրապահի էջմիածնեցի գեներալների մարտական ուղու

<sup>108</sup> lin.am/2295096.html. 09.02.2018թ.:

<sup>109</sup> Էջմիածնեցի գեներալների շարքում չի կարելի անգրեյել նաև Գագիկ Մեյրույանի անունը, որի վաստակը պակաս չէ մյուս երկուսից:

ամփոփ պատկերն է: Բոլոր նրանք, ովքեր կասկածի տակ են դնում գեներալներ Մանվելի ու Սեյրանի հերոսությունն արցախյան պատերազմում, անսկզբ մեղանշում են պատմության եւ արդարության դեմ: Մյուս կողմից՝ հաղթանակը նսեմացնում եւ պատերազմը շահարկում են բոլոր նրանք, ովքեր արդարացնում են Գրիգորյանի ու Սարգսյանի այսօրվա օլիգարխիկ բարքերը, էջմիածնում հաստատված բեսարեղելը՝ վկայակոչելով գեներալների հերոսական անցյալը: Պատերազմում հերոսությունը պետք է արժեւորվի, գնահատվի պետության կողմից, սակայն՝ ոչ թե պատգամավորական մանդատների ու օլիգարխիկ փայերի, այլ՝ պետական հոգածության, մեծարանքի ձեռով: Մանվել Գրիգորյանն ու Սեյրան Սարգսյանն իրավամբ կերպարներ են, որոնցով կարող էին դաստիարակվել բազմաթիվ սերունդներ: Վազգեն Սարգսյանի կենդանության օրոք կար այդ հնարավորությունը, որովհետեւ գեներալները ծառայության մեջ էին առաջնագծում՝ երեսնյան քաղաքական եւ օլիգարխիկ թոհուրոհից հարյուրավոր կիլոմետրեր հեռու: 2000-ից սկսած՝ իշխանությունները Երկրպագի վերնախավին ու առաջին հերթին՝ Մանվելին ու Սեյրանին ինտեգրեցին օլիգարխիկ համակարգին՝ նրանց կտրելով հաղթանակի ոգեղեն աղբյուրից:

Մանվել Գրիգորյանի ու Սեյրան Սարգսյանի կենսագրությունները 88-ից հետո գրեթե փոխկապակցված են: Նրանք միասին են միացել համազգային շարժմանը, միասին են կերտել հաղթանակը: Հիմա էլ՝ գեներալական զույգը անբաժան է, սակայն՝ ոչ թե առաջնագծում կամ հաղթական բանակի հրամանատարական պատվաբեր դիրքերում, այլ՝ Սերժ Սարգսյանի աջակցության առաջին շարքերում:

...Հերոսների մի մասը դարձել է հավերժի ճամփորդ՝ իր սպարապետ Վազգեն Սարգսյանի հրամանատարությամբ, մյուսները հայտնվել են արքատության եւ անիրավության հորձանտառում՝ նաեւ իրենց փառավոր հրամանատարների ստեղծած գիշատիչ համակարգի հետեանքով<sup>110</sup>:

<sup>110</sup> [in.am/2295814.html](http://in.am/2295814.html), 10.02.2018թ.:

## Արծվաշենի անկման առեղծվածը, 12 հերոսների նահատակությունը

(11.02.2018)

Համազգային շարժումը ու դրան հաջորդած պատերազմը մեր ժողովրդի պատմության ամենահերոսական, լուսավոր էջերից են: Սակայն նույնիսկ հաղթական պատերազմներում լինում են ցավալի կորուստներ, հայրենագրկության ու վշտի պահեր: Գեղարքունիքի մարզի արեւելյան հատվածում մի չնաշխարհիկ գյուղ կար՝ Արծվաշենը: Գյուղը հիմնադրվել է 1854 թվականին՝ Շամշադինից տեղափոխված հայերի կողմից: Խորհրդային տարիներին Արծվաշենում չորս արդյունաբերական ձեռնարկություն է գործել, իսկ դա նշանակում է, որ Խորհրդային Հայաստանի իշխանությունները հասկանում էին գյուղի ռազմավարական նշանակությունը:

Արծվաշենը մի առանձնահատկություն ուներ՝ աջ եւ ձախ կողմերից<sup>111</sup> շրջափակված էր աղբբեջանական սահմանով: Հայ-աղբբեջանական հակամարտության առաջին օրերից գյուղի վրա կախվեց տեղահանության, զուցե նաեւ՝ ժողովրդի բնաջնջման վտանգը:

Արծվաշենի ինքնապաշտպանական մարտերը սկսվեցին 1989 թ.-ին եւ ձգվեցին շուրջ երեք տարի՝ մինչեւ 1992-ի օգոստոսի 8-ը: Այդ օրն ընկավ Գեղարքունիքի մարզի արեւելյան հատվածում գտնվող Արծվաշեն գյուղը: Գյուղը մինչեւ հիմա օկուպացված է Աղբբեջանի կողմից: 1992-ի օգոստոսի 4-ից երեք օր շարունակ Արծվաշենի պաշտպանությունն իրականացրել են Վանաձորի 016 մոտոհրաձգային գնդի զինվորները, որոնք այդ օրերին մոտ 4500 մարդու կյանք են փրկել՝ ապահովելով նրանց դուրսբերումը արդեն իսկ օղակի մեջ հայտնվող ու արնաքամ լինող Արծվաշենից: Օգոստոսի 7-ին 016-ի 12 զինվոր մնացին փակված օղակում: Կատաղի մարտը տարբեր զինատեսակներով զինված թշնամու դեմ տեւեց մոտ չորս ժամ: 12 քաջեր նահատակվեցին հերոսի մահով՝ վասն հայրենյաց, արծվաշենցիներին հնարավորություն տալով անվտանգ

<sup>111</sup> Չորս կողմից:



լքել գյուղը: Նույնիսկ ադրբեջանցի գնդապետը, ով հերոսների դիե-րը փոխանցել է հայկական կողմին, չի կարողացել թաքցնել իր ակնածանքը:

«Մինչևե վերջին փամփուշտը արհաբար կովեցին: Նրանք ձեռն ազգի պարծանքն են», – ասել է նա: Արծվաշենի անկումից հետո շահարկումների պակաս չկար: Պատերազմի թեժ օրերին տաքուկ երե-անում հանրահավաքներ անող ընդդիմությունն իշխանությանը մեղադրում էր դավաճանության մեջ, որոշ «հայրենասերներ» անգամ նշում էին գումարի կոնկրետ չափը, ինչի դիմաց Արծվաշենը «վաճառվել» է:

Սակայն բանականությունն այլ բան է հուշում. Արծվաշենը չու-ներ ընդհանուր սահման Հայաստանի հետ ու հնարավոր չէր անա-ռիկ պահել գյուղը, մանավանդ, որ պատերազմի մեջ գտնվող Հա-յաստանը մարդկային եւ այլ ռեսուրսների օպտիմալ օգտագործման անհրաժեշտություն ուներ: Սակայն ամենակարեւորն՝ արծվաշենցի-ների անվտանգության հարցն էր. ժողովրդի գլխին կախված էր ցեղասպանվելու վտանգը, եթե իշխանությունները խոհեմ չգտնվեին եւ որոշում չկայացնեին գյուղացիների տեղահանության մասին<sup>12</sup>:

Նույնիսկ Արծվաշենի անկումը նշանավորվեց հերոսականությամբ: 12 քաջեր մարտիրոսվեցին, որպեսզի փրկեն հազարավոր արծվա-շենցիները կյանքերը: Արծվաշեն համայնքից բռնի տեղահանված ընտանիքների թիվը ներկայումս կազմում է 719, որոնցից 664 ըն-տանիքներ բնակություն են հաստատել ՀՀ Գեղարքունիքի մարզի բնակավայրերում եւ 55 ընտանիքներ այլ մարզերում: Մարդիկ դեռ հույս ունեն, որ մի օր վերադառնալու են հարազատ գյուղ, իրենց լքված օջախները<sup>13</sup> ...

<sup>12</sup> Այդ գործում անգնահատելի դեր խաղաց Հայաստանի իշխանությունների կող-մից Արծվաշենում պարեպ նշանակված «Տիգրան Մեծ» ջոկապի իրամանադար, ՀՀ Գեղարքունի խորհրդի պարզամակր Սմբար Այվազյանը:

<sup>13</sup> [in.am/2296298.htm](http://in.am/2296298.htm). 11.02.2018թ.:

## Դավաճանն՝ է արդյոք Տեր-Պետրոսյանը շարժման ու Արցախին (12.02.2018)

Համազգային շարժումը բեկումնային նշանակություն ունեցավ մեր ժողովրդի մտածողության, քաղաքական նոր մտքի ու մշակույթի ձեւավորման հարցում: Այնուամենայնիվ, կան կարծրատիպեր, որոնք մնացին «անձեռնմխելի»: Հայաստանի հասարակությունը հաղթանակի բանալին շարունակում է տեսնել հայ-ադրբեջանական հակադրության, հակամարտության մեջ՝ խաղաղությունը նույնացե-լով կապիտուլյացիայի հետ: Հենց այս բարդույթի հիմքով շատերը պնդում են, որ «Ղարաբաղը մերն է» կարգախոսով իշխանության եկած ՀՀ-ն ու Լեւոն Տեր-Պետրոսյանը դավաճանել են շարժա-նը: Նախ՝ նկատենք, որ «Ղարաբաղը մերն է» կարգախոսն էմոցիո-նալ հարթության վրա է եւ քաղաքական առումով՝ նույնիսկ իմաս-տազուրկ է. Ղարաբաղն ապրանք չէ, տարածք է, որը պատկանում է այն ժողովրդին, ով դրա վրա ապրում է: Կարծես՝ հենց սա էր շարժման հիմնական նպատակը՝ ապահովել Արցախի հայկա-կանությունը եւ անվտանգությունն, ինչը լավագույնս իրականություն է դարձել դարաբաղյան առաջին պատերազմի տարիներին՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի իշխանության շրջանում:

Եթե «Ղարաբաղը մերն է» կարգախոսն, այնուամենայնիվ, դի-տարկում ենք քաղաքական հարթության վրա՝ դրա տակ հասկա-նալով Արցախի վերամիավորումը Հայաստանին, ապա հակամար-տությունը տրանսֆորմացվեց ոչ թե ՀՀ-ի կամ Տեր-Պետրոսյանի ուրացման, այլ՝ ԽՍՀՄ փլուզման հետեւանքով: Հայաստանին Ար-ցախի վերամիավորման պահանջը կարող էր ակտուալ լինել ԽՍՀՄ գոյության պայմաններում, որովհետեւ անհեթեթ էր պատկերացնել, որ միության շրջանակներում հնարավոր կլիներ հայկական երկ-րորդ հանրապետության ստեղծումը:

Մյուս կողմից՝ ԽՍՀՄ փլուզումն արմատապես փոխեց իրավի-ճակը. Արցախի վերամիավորման պահանջը միջազգային հանրու-թյան կողմից չէր ընկալվում՝ համարվելով տարածքային պահան-

ջատիրություն հարեան երկրի նկատմամբ: Բացի այդ՝ ԽՍՀՄ փլուզումը հանգեցրեց նաեւ Ադրբեջանի անկախությանն, ինչը Արցախին հնարավորություն տվեց, ինքնորոշման սկզբունքի լեզուի միջոցով, նույնպես հռչակել անկախություն, մանավանդ, որ Արցախը երբեք մաս չի կազմել ինքնիշխան Ադրբեջանին: Վերամիավորման պահանջի տրանսֆորմացիան Արցախի անկախության հռչակման՝ ոչ թե Տեր-Պետրոսյանի կամ որեւէ մեկի ուրացման, այլ՝ աշխարհաքաղաքական նոր իրողությունների, եթե կուզեք՝ արցախյան շարժման քաղաքական հասունացման հետեանք է:

Սակայն Տեր-Պետրոսյանի «դավաճանություն» թեզը պոպուլյար դարձավ հատկապես 1997-ի նոյեմբերից, երբ նրա «Պատերազմ, թե՛ խաղաղություն» կոնցեպտուալ հոդվածին հակադրվեց իշխանության, այսպես կոչված, «մաուզերիստական» թեզը՝ քաղաքականության հետ չառերեսվող մաքսիմալիստական կարգախոսներով, որոնք, իհարկե, չհանգեցրեցին 8000 քառակուսի կիլոմետր տարածքով Ղարաբաղի միջազգային ճանաչմանը, սակայն Հայաստանն, ըստ էության, դուրս թողեցին տարածաշրջանային բոլոր նախագծերից: Խաղաղության օրակարգը կապիտուլյացիայի հետ նույնացնում են միայն այն ժողովուրդները, որոնք ունեն պետական մտածողության ավանդույթների դեֆիցիտ, կասկածի տակ են դնում հիմնավոր փաստարկներով միջազգային հանրությանը ներկայանալու իրենց մտավոր, դիվանագիտական պոտենցիալը:

Լեւոն Տեր-Պետրոսյանի խաղաղության օրակարգը չի ենթադրել Արցախի վերադարձ ադրբեջանական ենթակայության ներքո, այլ նախապայմաններ է ստեղծել՝ ռացիոնալ ու ռոջամիտ փոխզիջումների համար, որոնք ինստիտուցիոնալ հիմքերի վրա կդնեին Արցախի ինքնիշխանությունն ու անվտանգությունը եւ միջազգային երաշխիքներ կստեղծեին Հայաստանի, Արցախի ու Ադրբեջանի խաղաղ գոյակցության համար:

Բնավ նպատակ չունենք՝ պաշտպանության տակ վերցնել Տեր-Պետրոսյանի դարաբաղյան քաղաքականությունը, պարզապես հարկ ենք համարում արձագանքել մեր նախորդ հրապարակումներին հաջորդած կարծիքներին եւ փորձագիտական մակարդակով արձա-

նագրել, որ առաջին նախագահի պաշտոնավարման տարիներին տեղի է ունեցել հաղթական պատերազմ, կնքվել է բարենպաստ ստատուս-քվոն ամրագրող զինադադար եւ գոյություն չունի որեւէ փաստաթուղթ, որտեղ Տեր-Պետրոսյանն ընդունած լինի ադրբեջանական ինքնիշխանությունն Արցախի տարածքում: Եթե սա համարվում է ուրացում կամ դավաճանություն, ուրեմն համաշխարհային պատմությունը ցայսօր անհաղորդ է ռազմական կամ դիվանագիտական հաջողություններին<sup>114</sup>:

### Հաղրուփի պատմական հանրահավաքը

(13.02.2018)

Երեսուն տարի առաջ՝ 1988թ. փետրվարի 12-ին, սկսվեց համազգային շարժումը: Լեւոնային Ղարաբաղի Հաղրուփ քաղաքում տեղի ունեցավ առաջին հանրահավաքը, որի մասնակիցները պահանջում էին վերամիավորել Արցախը Հայաստանի հետ:

Հանրահավաքի կազմակերպիչներն էին ԼՂ Գերագույն խորհրդի ապագա նախագահ Արթուր Մկրտչյանը, Իգոր Մուրադյանը, Գրիգորի Հայրապետյանը, Էմիլ Աբրահամյանն ու այլք: Իհարկե, որեւէ մեկը չէր կարող ենթադրել, որ Հաղրուփի հանրահավաքը դառնալու է պատմական եւ դրանից սկսվելու է էպոխալ նշանակություն ունեցող համազգային շարժումը: Փետրվարի 12-ի հանրահավաքն ուներ նաեւ իր ֆորմալ առիթը. այդ օրը տեղի էր ունենալու կոմկուսի շրջկոմի պլենումը, որտեղ քննարկվելու էր Ղարաբաղի ճակատագիրը:

Ամբողջ խնդիրն այն է, որ Հաղրուփի կուսակալիվը հայտնվել էր երկկողմանի ճնշման կիզակետում: 1988թ. հանրահավաքային փուլի սկզբում Արցախի ընդհատական արդեն աշխատում էր մոտ 150 մարդ: Այդ նվիրյալների ջանքերով Լեւոնային Ղարաբաղում անցկացվել էր ոչ պաշտոնական հանրաքվե կամ հանրային հարցում, որի մասնակիցներն արտահայտվել էին Հայաստանի հետ վերամիավորման օգտին:

<sup>114</sup> [in.am/2296623.html](http://in.am/2296623.html). 12.02.2018թ.:



Արցախից տասնյակ նամակներ էին գնացել Մոսկվա՝ Միխայիլ Գորբաչովի և կուսակցության այլ ղեկավարների անուններով, և վերջիններս քաջաձանթ էին այն տրամադրություններին, որոնք կային Ղարաբաղում: Մոսկվան և Բաքուն որոշել էին ԼՂԻՄ-ի կուսակտիվի միջոցով խեղդել ծիլեր տվող համաժողովրդական շարժումը: Հաղորդի կուսպլենումն այդ շարքի առաջին ժողովն էր, որը պետք է տեղի ունենար մոսկովյան կաբինետներում գծված սցենարով: Հաղորդի հանրահավաքի պատմականությունը կայանում է հենց նրանում, որ, ըստ էության, վիժեցվեց մոսկովյան սցենարը:

Կուսակցական պլենումի փոխարեն Հաղորդի կենտրոնում տեղի ունեցավ բազմամարդ հանրահավաք, որը վերածվեց համազգային շարժման. հաջորդ օրերին հանրահավաքներ էին տեղի ունենում Արցախի մայրաքաղաքում և մյուս շրջկենտրոններում: Նախապատրաստվում էր փետրվարի 20-ի համազգային պողոթումը, որի կենտրոնը դարձավ Ազատության հրապարակը:

Չնայած փետրվարի 20-ից ողջ հայության և միջազգային հանրության ուշադրության կենտրոնում Ազատության հրապարակն էր՝ Հաղորդի հանրահավաքը պատմական է, որովհետև ԼՂԻՄ հենց այդ շրջկենտրոնից սկսվեց համազգային շարժումը:

Պատմական օրվա առիթով նկատենք, որ 88-ի համազգային շարժման շնորհիվ մենք կարողացանք հասնել հաղթանակի դարաբաղյան պատերազմում, սակայն այդպես էլ, մեծ հաշվով, անիրագործելի մնաց Հայաստանում և Արցախում ժողովրդավարական պետությունների ստեղծման նպատակը: Մինչդեռ՝ Հաղորդի հանրահավաքի հիմքում հենց ժողովրդի կամքն էր, որը հաղթահարեց պետական խոչընդոտները<sup>115</sup>:

<sup>115</sup> [in.am/2297263.html](http://in.am/2297263.html). 13.02.2018թ.:

## Վազգեն Մանուկյանի «Երեք հեղափոխությունների» բանաձեռը (14.02.2018)

Այսօր Ստեփանակերտում կազմակերպվել է տոնական երթ և հանրահավաք՝ նվիրված Արցախյան շարժման 30-ամյակին: Երթի մասնակիցները պաստառներով, դրոշներով, կոչերով, «Միացում» վանկարկելով, մայրաքաղաքի կենտրոնական փողոցներով շարժվել են դեպի Ստեփանակերտի Վերածննդի հրապարակ, որտեղ էլ կայացել է Ղարաբաղյան շարժման 30-ամյակին նվիրված տոնական միջոցառում: Միջոցառումը կազմակերպված է եղել պետական մակարդակով. ոգեշնչման խոսք է ասել նախագահ Բակո Սահակյանը:

88-ի շարժման արցախյան արժեւորման ֆոնին խիստ ուշագրավ ու նաեւ անտրամաբանական է թվում Հայաստանի իշխանությունների լուրջությունը, մանավանդ, որ 1988-ի փետրվարի 20-ից հենց Երեւանի Ազատության հրապարակն է դարձել համազգային շարժման կենտրոնը: Համենայնդեպս, մինչ այս պահը հայտնի չէ փետրվարի 20-ին անցկացվելիք պետական որեւէ միջոցառման մասին: Տեղյակ ենք միայն, որ այդ օրն Ազատության հրապարակում օրվա խորհրդին նվիրված հանրահավաք է անցկացնելու Լեւոն Տեր-Պետրոսյանի ՀԱԿ-ը:

Ի դեպ, շարժման 30-րդ տարեդարձի առթիվ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում ծավալուն հարցազրույց է տվել «Ղարաբաղ» կոմիտեի կոորդինատոր<sup>116</sup>, Հայաստանի առաջին վարչապետ<sup>117</sup> Վազգեն Մանուկյանը:

Համազգային շարժման ղեկավարներից մեկը խոսել է «Ղարաբաղ» կոմիտեի ղեկավարած շարժման արձանագրած երեք հեղափոխության մասին:

<sup>116</sup> *Տե՛ս ծանոթ. 9:*

<sup>117</sup> *Տե՛ս ծանոթ. 2:*

«Բոլոր այդպիսի՝ անկախության համար շարժումները, երբ որ դու կախյալ վիճակից հասնում ես անկախ վիճակի, համարվում էին հեղափոխական: Մենք ես նման վիճակից հասանք անկախության: Հետեաբար, այդ հեղափոխություն ասվածը որոշակի առումով կար», – ասել է Վազգեն Մանուկյանը՝ թերեւս արձանագրելով, որ երրորդ հանրապետության ծնունդը համազգային շարժման ամենամեծ ձեռքբերումն է:

Երկրորդ հեղափոխություն Վազգեն Մանուկյանը համարում է պետական կառուցվածքի փոփոխությունը, երբ Հայաստանը տոտալիտար, ավտորիտար ռեժիմից անցավ ժողովրդավարական կառավարման: Այս դեպքում՝ ցավոք, պետք է արձանագրենք հակահեղափոխության շատ արագ հաղթանակը, որովհետեւ 90-ականների կեսերից Հայաստանում տեղի է ունենում ժողովրդավարության գահավիժում, ինչը ներկայումս հանգեցրել է նույնիսկ, այսպես կոչված, սովետական կառավարման ռեստավրացիային:

Վազգեն Մանուկյանի նշած երրորդ հեղափոխությունը՝ կոմունիստական, սոցիալիստական համակարգից անցումը ազատ տնտեսական, շուկայական համակարգի, ծախողված է համարում անգամ Վազգեն Մանուկյանը: «Այդտեղ սայթաքեցինք թե՛ մենք, թե՛ ողջ հետխորհրդային տարածքը, եւ ամբողջությամբ չստացվեց այն, ինչ ուզում էինք», – ասել է «Ղարաբաղ» կոմիտեի կորդինատորը: Այնքան էլ պարզ չէ, թե կոնկրետ ինչ սայթաքումների մասին է խոսում Մանուկյանը, սակայն փաստն այն է, որ 90-ականների բարեփոխումները չունեցան ինստիտուցիոնալ բնույթ, ինչի հետեւանքով այսօր Հայաստանում ձեւավորվել է օլիգոպոլ համակարգ:

Նույնիսկ Վազգեն Մանուկյանի հարցազրույցից հստակ կարծիք է ձեւավորվում, որ Հայաստանը վաղուց շեղվել է 88-ի հունից եւ արդիականացման նոր անհրաժեշտություն ունի:

Ի դեպ, այսօր Վազգեն Մանուկյանի ծննդյան օրն է: Ընդհանրապես նեք համազգային շարժման ղեկավարներից մեկին՝ մաղթելով առողջություն եւ հաջողություններ<sup>116</sup>:

## Սերժ Սարգսյանի ու Ռոբերտ Քոչարյանի բացակայությունը

(15.02.2018)

Երեկ Ստեփանակերտում տպավորիչ հանրահավաք-երթով նշանավորեցին արցախյան շարժման 30-րդ տարեդարձը: Ստեփանակերտի գանգվածային միջոցառումը առաջնորդում էին ԼՂՀ գործող եւ երկրորդ նախագահներ Բակո Սահակյանն ու Արկաղի Ղուկասյանը:

Օրվա խորհրդի արժեւորման ու ԼՂՀ պատմության ամբողջական ընկալման տեսանկյունից տեղին կլիներ նաեւ ԼՂՀ առաջին նախագահ Ռոբերտ Քոչարյանի ներկայությունը Ստեփանակերտում: Բայց այնպիսի տպավորություն է, որ Քոչարյանն իրեն առհասարակ մեկուսացրել է այն գործընթացներից, որոնք տեղի են ունենում Հայաստանում եւ դրա շուրջ: Ամիսներ շարունակ Քոչարյանը եւ նրա գրասենյակը չեն արձագանքել Հայաստանում եւ դրա շուրջ տեղի ունեցող որեւէ իրադարձության: Օրեր առաջ Քոչարյանի գրասենյակի ղեկավարը տեղեկացրել էր, որ երկրորդ նախագահը բացակայում է հանրապետությունից:

Ռոբերտ Քոչարյանն՝ իր քաղաքական կարիերայով, պարտական է 88-ի համազգային շարժմանը, որի շնորհիվ պրովինցիալ գործարանի պարտկոմը հայտնվեց Արցախի, ապա Հայաստանի քաղաքական կյանքի օլիմպոսում: Սակայն Քոչարյանի գործունեության հատկապես հայաստանյան հատվածն ուղղված էր հենց 88-ի արժեքների, այն նպատակների ու երազանքների դեմ, որ շարժման տարիներին ձեւավորվեցին Ազատության հրապարակում: Գուցե Քոչարյանի վարքագիծը կոնկրետ դրսևորում է ոչ այնքան 88-ի, որքան՝ դրա հետ ասոցացվող գաղափարների, իդեալների հետ: 88-ի ֆենոմենը դրա համաժողովրդականությունն էր, հասարակության առանցքային դերը քաղաքական օրակարգի եւ որոշումների կայացման գործընթացում:

Ռոբերտ Քոչարյանի իշխանության կայացումը թե Ղարաբաղում, թե Հայաստանում կայացել է ժողովրդի կամքին հակառակ՝ ընտ-

<sup>116</sup> [in.am/2297988.html](http://in.am/2297988.html) 14.02.2018թ.:



րողների ազատությունների եւ իրավունքների հաշվին: Քոչարյանի արժեքային համակարգի հիմքում ավտորիտար մտածողությունն է եւ, քնական, նույնիսկ օրինաչափ է նրա մերժողական, արհամարհական վերաբերմունքը 88-ի շարժման ու ցանկացած գործընթացի հանդեպ, որտեղ հիմնական դերը վերապահված է ժողովրդին: Հեղափոխության նկատմամբ «զենետիկ» վախ ունի նաեւ Սերժ Սարգսյանը, որովհետեւ 2008-ին նրա նախագահությունը կայացել է, ըստ էության, հեղափոխությունն արյան մեջ խեղդելու հետեանքով:

88-ը, իր ոճով, բովանդակությամբ, դասական հեղափոխություն էր եւ պատահական չէ, որ Հայաստանում պետական մակարդակով չի արժեւորվում համազգային շարժման 30-րդ տարեդարձը: Իշխանության վերնախավում, ամենայն հավանականությամբ, վախեր կան, որ հեղափոխության հետ ասոցացվող անզամ պատմական իրադարձության արժեւորումը Հայաստանում կարող է հանրային նոր զարթոնքի ազդակ դառնալ<sup>119</sup>:

### Շարժման լուսավոր տղաները

(16.02.2018)

1988թ. սեպտեմբերին «Ղարաբաղ կոմիտեն», նկատի ունենալով ձերբակալվելու հավանականությունը, պայքարն ընդիստակում շարունակելու համար, ստեղծեց մի զուգահեռ գաղտնի կոմիտե հետեւյալ կազմով՝ Երջանիկ Աբգարյան, Դավիթ Շահնազարյան, Ավետիք Իշխանյան, Արշակ Սաղոյան, Ալբերտ Բաղդասարյան, որոնց հաջորդ տարվա մարտին միացան նաեւ Վիտյա Այվազյանը, Սմբատ Հակոբյանը եւ Ստեփան Ղարազեբակյանը (Մարգարյան): «Ղարաբաղ» կոմիտեի մտավախություններն ու մտահոգությունները իրականություն դարձան արդեն մի քանի ամիս հետո, երբ դեկտեմբերի 7-ի ավերիչ երկրաշարժն առիթ օգտագործելով՝ ձերբակալվեցին «Ղարաբաղ» կոմիտեի անդամները:

Եթե չլիներ Կոմիտե-2-ը, շատ դժվար կլիներ համազգային շարժման հետագա ընթացքի կազմակերպումը, երբ բանտում էին համազգային շարժման առաջնորդները: Զուգահեռ կոմիտեի ջանքերի շնորհիվ համազգային շարժումը նոր թափ հավաքեց՝ Մոսկվայի կենտրոնական իշխանություններին կանգնեցնելով փաստի առջեւ: Կոմունիստական վերնախավում այլեւ անիմաստ էին համարում «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին շղթայված պահելը կամ Հայաստանում նոր ձերբակալությունները, որովհետեւ խորապես համոզված էին, որ համազգային շարժումն անհրաժեշտության դեպքում կարող է ծնել տասնյակ կոմիտեներ, նոր առաջնորդներ ու հոնտորներ:

Պատահական չէ, որ 1988-ի մայիսի 30-ին, բանտարկությունից երեւան վերադարձած Լեւոն Տեր-Պետրոսյանը հայտարարեց, որ «Ղարաբաղ» կոմիտեն ողջ հայ ժողովուրդն է: Կոմիտե-2-ի գործիչներից շատերն առանցքային դերակատարություն ունեցան ՀՀ-ում եւ Երրորդ հանրապետության առաջին իշխանության մեջ:

Դավիթ Շահնազարյանը ՀՀ քաղաքական թեմի ակնառու գործիչներից մեկն էր, ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան, ով Տեր-Պետրոսյանի իշխանության առաջին տարիներին զբաղվել է ԼՂ խնդրով: Շահնազարյանն այսօր էլ ԼՂ խնդրով լավագույն փորձագետներից մեկն է՝ ոչ միայն Հայաստանում, այլ նաեւ՝ միջազգային հեղինակավոր շրջանակներում: Դավիթ Շահնազարյանը եղել է նաեւ ՀՀ ԱԱ նախարարը եւ շատերի կարծիքով մեծ ավանդ է ունեցել Հայաստանի հատուկ ծառայությունները Մոսկվայի վերահսկողությունից դուրս բերելու հարցում:

Երջանիկ Աբգարյանը զբաղեցրել է Մաքսային ծառայության պետի պաշտոնը, իսկ Լեւոն Տեր-Պետրոսյանի հրաժարականից հետո ծավալել է ակտիվ ընդդիմադիր գործունեություն: Արշակ Սաղոյանը մինչեւ 2000-ականների սկիզբը Հայաստանի ամենապոպուլյար ընդդիմադիրն էր: Ավետիք Իշխանյանը զբաղվում է ակտիվ իրավապաշտպան գործունեությամբ, իսկ Ալբերտ Բաղդասարյանն այսօր էլ ձգտում է նոր հեղափոխության, այս անգամ՝ Ժիրայր Սեֆիլյանի համախոհների հետ միասին: Սմբատ Հակոբյանը Ազատամարտիկների դաշինքի ղեկավարներից մեկն է,

<sup>119</sup> [in.am/2298608.html](http://in.am/2298608.html). 15.02.2018թ.:

Ատեփան Մարգարյանը նախորդ խորհրդարանի ամենակտիվ ընդդիմադիր պատգամավորների շարքում էր: Վիտյա Ալվազյանը նահատակվեց 1990-ի օգոստոսի վերջին՝ ՀԱԲ-ին զինաթափելու գործողության ժամանակ: Նա հետմահու արժանացել է Ազգային հերոսի կոչման<sup>120</sup>:

### Ինչո՞ւ է կեղծում Կոմանդոսը կամ արդյո՞ք Տեր-Պետրոսյանը «հանձնում» էր Ղարաբաղը

(17.02.2018)

Այսօր Շուշիի օպերացիայի ղեկավարներից մեկը՝ գեներալ Արկադի Տեր-Թադեոսյանը հայտարարել է, թե զինվորականները կարող էին առաջ գնալ, բայց 1994թ.-ին իշխանությունները պայմանագիր կնքեցին՝ ուղիղ ակնարկելով, թե մտադրություն է եղել Արցախը թողնել Ադրբեջանի կազմում: Նախ՝ արձանագրենք, որ առնվազն կոռեկտ չէ, երբ բարձրաստիճան զինվորականը քննարկում է քաղաքական ղեկավարության որոշումները: Նման պրակտիկա գոյություն չունի ամբողջ աշխարհում<sup>121</sup>:

Առավել ես՝ դատապարտելի է, երբ թեկուզե վաստակաշատ գեներալն արհեստականորեն ուռճացնում է սեփական դերակատարությունը՝ նսեմացնելով մյուսներին ու փաստորեն խեղաթյուրելով պատմությունը: Սա առաջին դեպքը չէ, երբ Կոմանդոսը հանդես է գալիս քաղաքական հայտարարություններով՝ նսեմացնելով իր վաստակը արցախյան պատերազմում եւ հայտնվելով քաղաքական ինտրիգների կիզակետում:

Տարիներ առաջ Կոմանդոսին փորձեցին ներքաշել Վազգեն Սարգսյանի դեմ ուղղված քարոզչական կամպանիայի մեջ, ինչի

<sup>120</sup> [in.am/2299273.html](http://in.am/2299273.html). 16.02.2018թ.:

<sup>121</sup> Պետք է արձանագրել նաեւ, որ Շուշիի ազատագրումից հետո Ա. Տեր-Թադեոսյանը ո՛չ ՁՈւ կատուցներում, ո՛չ էլ պարտագնական գործողություններում մասնակցություն չի ունեցել: Ուստի նրա դատապարտումները 1992թ. մայիսից հետո տեղի ունեցած իրադարձությունների մասին «գրոշի» արժեք չունեն:

հետեանքով նա արժանացավ համընդհանուր քննադատության: Համոզված ենք՝ նույնքան սկանդալային եւ ինտրիգային է գեներալի այսօրվա հայտարարությունը:

Տեր-Թադեոսյանն, ըստ էության, փորձել է զարգացնել այն մտացածին վարկածը, որ զինվորականությունն արցախյան պատերազմում հաղթել է ի հեճուկս Լեւոն Տեր-Պետրոսյանի ցանկության: 1994-ի զինադադարի մասին Կոմանդոսի ներկայացրած տեսակետը նույնպես՝ հեռու է իրականությունից, որովհետեւ արդեն մայիսի սկզբին հակամարտության կողմերը ուժասպառ էին եղել, եւ Հայաստանի իշխանությունը գտավ ամենապատեհ առիթը՝ զինադադարը բարենպաստ պայմաններով կնքելու համար:

Այդու կողմից՝ ժամանակակից պատերազմները պահանջում են մեծ ռեսուրսներ՝ մարդկային, տնտեսական, ֆինանսական եւ պետք է օբյեկտիվ լինել՝ Կոմանդոսի ասած՝ «առաջ գնալու» համար Հայաստանը պարզապես չունի ռեսուրսներ: Ավելի էժանագին է այն պնդումը, թե Տեր-Պետրոսյանը գնացել է զինադադարի՝ Ղարաբաղն Ադրբեջանի կազմում թողնելու համար: Հինադադարի համաձայնագիրը, ճիշտ հակառակը, այն բացառիկ փաստաթղթերից մեկն է, որտեղ լիարժեքորեն ամրագրվում է Արցախի սուբյեկտությունը: Եւ առհասարակ՝ ճիշտ չէ, երբ բարձրաստիճան զինվորականը տարիների հեռվից քարկոծում է գերագույն գլխավոր հրամանատարի, որին պատիվ է արել պատերազմի ամենաթեժ պահերին<sup>122</sup>:

### Ինչո՞ւ «Ղարաբաղ» կոմիտեից հեռացվեց Իգոր Մուրադյանը

(18.02.2018)

Այս օրերին տարբեր ձեւաչափերով անդրադարձ է կատարվում 88-ի շարժմանը, հնչում են տարբեր, նույնիսկ իրարամերժ գնահատականներ: Շարժման օրակարգն ու կազմակերպչական կառույցը

<sup>122</sup> [in.am/2300004.html](http://in.am/2300004.html). 17.02.2018թ.:



ծեավորվել են բազմաթիվ բաց ու փակ քննարկումների, թեժ բանավեճերի, անգամ մարդկային բարդ հարաբերությունների համատեքստում: Դեռևս 1987-ին Հայաստանում եւ Արցախում գործել են մի քանի նախաձեռնություններ, որոնց նպատակը եղել է ԼՂԻՄ-ի վերամիավորումը Հայաստանին: Շարժումը սաղմնային վիճակում հետապնդել է միայն այս խնդիրը:

Ստեղծված խմբերի շրջանում մեծ հեղինակություն է վայելել տնտեսագետ Իգոր Մուրադյանը, որի գաղափարական եւ կազմակերպչական մեծ ազդեցությունը պահպանվել է ընդհուպ 1988-ի մայիսը: Սակայն նույնիսկ շարժման, այսպես կոչված, ոչ հրապարակային փուլում բանավեճերի թեմա է դարձել օրակարգը: Քննարկումների ակտիվ մասնակից, պատմաբան Համբարձում Գալստյանը ՀՆԱՀ կուսակցական ղեկավարության դեմ պայքարի ու երկրի ժողովրդավարացման ռազմավարության կողմնակիցն է եղել: Սակայն այդ փուլում Իգոր Մուրադյանը մեծ հեղինակություն է ունեցել եւ սաղմնավորվող շարժման օրակարգում ընդգրկվել է միայն Ղարաբաղի հարցը:

Ազատության հրապարակի առաջին հանրահավաքները բացահայտել են Վաչե Սարուխանյանի հոետորական ծիրքը, սակայն երբ 1988-ի մարտի 2-ին Գրողների միությունում ձեւավորվել է առաջին «Ղարաբաղ» կոմիտեն, դրա կազմում Վաչե Սարուխանյանի անունը չի եղել, նրա եւ Իգոր Մուրադյանի միջեւ առաջացել էին անհաղթահարելի կազմակերպչական տարածայնություններ: Գրողների միության հավաքում առաջին «Ղարաբաղ» կոմիտեի անդամներ են ընտրվել Իգոր Մուրադյանը, Գագիկ Սաֆարյանը եւ քաղաքագետ Մանվել Սարգսյանը: Կոմիտեում եղել են ներկայացուցիչներ նաեւ Արցախից:

Իգոր Մուրադյանի փաստացի ղեկավարությամբ կոմիտեն անցկացրել է երեք հրապարակային ժողով, որի ընթացքում կոմիտեին մաս են կազմել նաեւ Վազգեն Մանուկյանը, Համբարձում Գալստյանը, Սամսոն Ղազարյանը, Սամվել Գետրոյանը, Վանո Սիրադեղյանը, Ալեքսան Հակոբյանը: 1988-ի մարտ-մայիս ամիսներին շարժման օրակարգում բացառապես Հայաստանին Ղարաբաղի վերամիավորման հարցն էր: 1988-ի մայիսին «Ղարաբաղ» կոմիտեի

անդամ են դառնում Լեւոն Տեր-Պետրոսյանը, Ռաֆայել Ղազարյանը, Դավիթ Վարդանյանը եւ Բաբկեն Արարոցյանը: Մայիսը բոլոր առումներով շրջադարձային էր շարժման համար, որովհետեւ հարստացավ նաեւ դրա օրակարգը. Ղարաբաղի խնդրից զատ՝ դրվեցին նաեւ Հայաստանի ժողովրդավարացման եւ սուվերենիտետի պահանջները:

Մայիսին 19-ին շարժման մեջ ավարտվեց, պայմանական ասած, Իգոր Մուրադյանի շրջանը. նա հեռացվում է կոմիտեից: Վազգեն Մանուկյանն ասում է, որ կոմիտեի մյուս անդամներին դուր չի եկել նրա ակտիվ շփումները կուսակցական պաշտոնյաների հետ, կան մարդիկ, ովքեր պնդում են, որ վեճերի հիմնական թեման եղել է հենց շարժման օրակարգը. Իգոր Մուրադյանը եղել է այն կարծիքին, որ պետք է սահմանափակվել միայն Արցախի խնդրով: Նույնիսկ կան տեսակետներ, որ կոմիտեից մտածված դուրս են թողնվել գործիչներ, ովքեր ունեին Ղարաբաղյան ծագում (այդ ժամանակ Մանվել Սարգսյանը նույնպես հեռացել է կոմիտեից)<sup>123</sup>: Իգոր Մուրադյանը 1988-ի մայիսից հարթակում չէր, սակայն նա ղեկտեմբերին ձերբակալվեց «Ղարաբաղ» կոմիտեի 11 անդամների հետ ու տեղափոխվեց Մոսկվա<sup>124</sup>:

### «Ղարաբաղ» կոմիտեի հավաքի պահանջ

(18.02.2018)

Համազգային շարժման 30-ամյա տարեդարձն աղիթ հանդիսացավ, որ լսենք դրա ակտիվ դերակատարների, պատմաբանների տեսակետներ, վերլուծություններ: Իրավիճակն առավել քան տխուր է, որովհետեւ նույն իրադարձությունների, պատմական անցքերի, անձանց դերակատարության մասին գնահատականներն այնքան

<sup>123</sup> Իգոր Մուրադյանի հեռանկարցուց հեղու Մանվել Սարգսյանը մնացել է Կոմիտեի կազմում, բայց մեկ երկու ամիսներում հեռու ինքնակամ հրաժարվել է հեղուակ համագործակցությունից:

<sup>124</sup> [in.am/2300487.html](http://in.am/2300487.html). 18.02.2018թ.:

իրարամերժ են, որ ակամայից թվում է՝ խոսքը չի վերաբերվում նույն գործընթացին, շարժմանը: Ծիշտ այդպես է նաեւ Երրորդ հանրապետության պատմությունը՝ մասնատված, բզկտված, հարմարեցված իրար հաջորդող առաջնորդների քմահաճույքներին, քաղաքական կոնյունկտուրային: Իհարկե, ստեղծված տխուր իրավիճակը պայմանավորված է սուբյեկտիվ հանգամանքով:

88-ի շարժման, Երրորդ հանրապետության ակտիվ դերակատարները դեռ կենդանի են, նրանցից շատերն ունեն ընթացիկ քաղաքական շահեր, ինչը, բնականաբար, թույլ չի տալիս անաչառ հայացքով նայել ոչ հեռու անցյալի պատմությանը, 88-ի շարժմանը, Հանրապետության կայացման առաջին տարիներին: Գործող իշխանությունների մեջ կան համազգային շարժման ակտիվ դերակատարներ, այդ թվում՝ նախագահ Սերժ Սարգսյանը, սակայն նրանց վախեցնում է համազգային շարժման 30-ամյա տարեդարձի արժեւորումը, որովհետեւ դրանից դիվիդենտներ կարող են ստանալ ընդդիմադիր ՀԱԿ-ը եւ նրա առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանը: Մյուս կողմից՝ վերջիններս հնարավորինս «ծածկել» են 88-ն՝ արհեստականորեն նսեմացնելով «Ղարաբաղ» կոմիտեի կոորդինատոր<sup>125</sup>, ՀՀ առաջին նախագահ Վազգեն Մանուկյանի, համազգային շարժման ակունքներում կանգնած Իգոր Մուրադյանի, մյուսների առաքելությունը: Հայոց պատմության դպրոցական<sup>126</sup> դասագրքերում 88-ի շարժումն ու Երրորդ հանրապետության պատմությունը խայտառակ, ոչ պրոֆեսիոնալ մատուցում ունեն, ինչի հետեւանքով սերունդներն անհաղորդ են մնալու մեր պատմության հերոսական էջերից մեկին: 88-ի շարժումը, Երրորդ հանրապետությունը պետք է ունենան մեկ միասնական, ընդհանրական պատմություն, Հանրապետության հիշարժան տոները պետք է դառնան համազգային համախմբման ակունք՝ պալատական կամ կուսակցական դիսկրետ միջոցառումների վերածվելու փոխարեն:

<sup>125</sup> Տե՛ս ծանոթ. 9:

<sup>126</sup> Կեղծիքն ավելի շար է բուհական դասագրքում (տե՛ս Աշոտ Սարգսյան, Հայաստանի նորագույն պատմության ուրացումն ու կեղծումը (1988-1998), Երևան, 2015:

Մենք հպարտ Հանրապետություն ենք՝ հերոսական անցյալով ու ապագայի տեսլականով, եւ անթույլատրելի շռայլություն կլինի քաղաքական պատմությունը մասնատել, հատվածաբար ներկայացնել՝ ըստ երեք նախագահների կառավարման շրջանների ու սուբյեկտիվ ընկալումների: Չի կարող լինել Լեւոն Տեր-Պետրոսյանի կամ Վազգեն Մանուկյանի շարժում, գոյություն ունի միասնական համազգային շարժում, որի ղեկավարները եղել են Տեր-Պետրոսյանն ու Վազգեն Մանուկյանը<sup>127</sup>: Չեն կարող լինել Տեր-Պետրոսյանի, Ռոբերտ Քոչարյանի կամ Սերժ Սարգսյանի հանրապետություններ, գոյություն ունի մեկ միասնական Երրորդ Հանրապետություն՝ իր երեք նախագահներով: Ամուր պետություն, պետական ավանդույթներ ստեղծելու համար՝ Երրորդ հանրապետության միասնական պատմություն ունենալու անհրաժեշտություն ունենք: Կյո՞ղ պատմության ակունքում պետք է լինի 88-ի պատմության ամբողջացումը:

...«Ղարաբաղ» կոմիտեն գոնե մեկ անգամ իրար գլխի հավաքվելու անհրաժեշտություն ունի՝ թեկուզեւ իրարից խռոված ու օտարված անդամներով:

Երեսուն տարի առաջ ազգային միասնության խորհրդանիշ դարձած տղաները միասնական կոչով պետք է դիմեն Հայաստանի իշխանություններին՝ փետրվարի 20-ը պետական տոնացուցում ազգային միասնության օր հռչակելու եւ 88-ի համազգային շարժման պետական թանգարան ստեղծելու առաջարկություններով<sup>128</sup>:

### Անավարտ առաքելություն (20.02.2018)

Փետրվարի 20-ը համազգային շարժման 30-րդ տարեդարձն է, ավարտին է մոտենում նաեւ մեր խորագիրը, որ մեզ տարավ մինչեւ ազգային զարթոնքի երանելի օրերը, մեր Հանրապետության ակունք-

<sup>127</sup> Տե՛ս ծանոթ. 3:

<sup>128</sup> [tin.am/2300824.html](http://tin.am/2300824.html), 18.02.2018թ.:



ները, վերապրեցինը հաղթանակի հպարտությունը, նահատակված ընկերների կրուատը: Նոմինալ առումով համազգային շարժումը լուծեց իր գլխավոր խնդիրը՝ Արցախն ազատագրված է, երաշխավորված է նրա հայկականությունը: Համազգային շարժման շարունակությունը դարձավ արցախյան պատերազմը, որն ավարտվեց հայկական զինուժի փայլուն հաղթանակով:

Համազգային շարժման արդյունք է Երրորդ հանրապետությունը. Օգոստոսի 23-ը, Սեպտեմբերի 21-ը համազգային շարժման կարևոր հանգրվաններ են, Փետրվարի 20-ի տրամաբանական շարունակությունը: Մյուս կողմից՝ դժվար է խոսել համազգային շարժման բոլոր նպատակների իրականացման մասին, որովհետև 88-ը ազգայինի եւ ժողովրդավարության ներդաշնակություն էր, օպտիմալ բանաձե: Շարժման ժողովրդավարական օրակարգն, ըստ էության, ձախողել ենք: Իհարկե, Հայաստանը 90-ականների սկզբին բացառիկ հաջող քաղաքական մի շրջան է ունեցել՝ խարսխված ազատական եւ ժողովրդավարական արժեքների, համոզումների վրա:

Դա Երրորդ հանրապետության հաջող ընթացքի բացառիկ շրջան էր, որը՝ չնայած պատերազմին, երկրում հնարավոր էր դարձրել ուժեղ ընդդիմության գոյությունը, պետական որակապես նոր համակարգի ստեղծումը, տնտեսական ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացումը, սակայն 90-ականների կեսերից՝ Հայաստանը նահանջեց ազատական, ժողովրդավարական արժեքներից, ինչի հետեանքներն այսօր զգացնել են տալիս քաղաքական, հանրային հարաբերություններում: Պետության ինքնիշխանությունն ուղիղ համեմատական է քաղաքացու ազատության, սուբեկտության հետ: Եթե Հայաստանի քաղաքացին պետության հիմնական սուբեկտը չէ, ապա Հայաստանի այսօրվա ընթացքը հակոտնյա է 88-ի գաղափարներին, համազգային շարժման ոգուն:

Համազգային շարժման 30-րդ տարեդարձի օրը ստիպված ենք խոստովանել, որ 88-ի առաքելությունն անավարտ է մնացել՝ առնվազն ժողովրդավարական օրակարգի, ազատության գաղափարի ինստիտուցիոնալիզացիայի մակարդակում: 88-ի շարժումը բացառիկ էր եւ պատմության տեսանկյունից՝ անկրկնելի: Նոր 88 լինել չի

կարող՝ թեկուզե այն պատճառով, որ Հայաստանը անկախ պետություն է, իսկ երեսուն տարի առաջ գործընթացի հիմքում ազգային-ազատագրական պայքարի գաղափարն էր: Սակայն Հայաստանի անկախությունն արժեւորման, Հայաստանի քաղաքացին՝ ազատության անհրաժեշտություն ունեն:

Հայաստանի պետությունը կարող է ուժեղ լինել՝ միայն ժողովրդավարությամբ, ազատ ու հպարտ քաղաքացով: Ազատության գաղափարը, ժողովրդավարությունը, երոպական զարգացումը՝ ահա այն արժեքները, որոնք պետք է դառնան մեր հասարակության կոնսոլիդացիայի նոր առանցքը՝ նրան 88-ի ակունքներին վերադարձնելու նպատակով<sup>129</sup>:

<sup>129</sup> [1n.am/2301403.html](http://1n.am/2301403.html). 20.02.2018թ.:

ՀԱՎԵԼՎԱԾ



**«Դրո», «31», «Հոկտ. 27», «Սասնա ծռեր». հայկական  
«ոռինհուղության» աղետալի հետեանքները**  
(02.07.2017)

Հակառակ փորձագիտական որոշ վերլուծությունների, որոնցով ակնհայտորեն փորձ է արվում լեգիտիմացնել քաղաքական բռնությունը, Երրորդ հանրապետության քաղաքական պատմությունը բնութագրվում է անարդյունավետ, վատ կառավարման և դրան հակադրվող ահաբեկչական փորձերի հարուստ դրվագներով:

Անարդյունավետ կառավարումը միշտ նպաստել է հանրային տրամադրությունների արմատականացմանը, որի ֆունի «հեղափոխական», «հայրենասիրական», «ազգային» խմբերն իրենց զգացել են ինչպես «ծուկը ջրում»՝ իրենց մաքսիմալիզմով մեր հասարակության և հատկապես միջազգային հանրության աչքերում լեգիտիմացնելով գործող իշխանություններին, ստեղծելով նրանց անայլընտրանքայնության առասպելը:

Սկզբունքորեն բռնությունը ռացիոնալ հետեանքների բերել չի կարող՝ անկախ մոտիվներից, դրան տրվող փաթեթավորումից: Սովորաբար բռնություններն ու ահաբեկչություններն իրենց օրակարգում ունենում են պաթոսիկ ձեակերպումներ, սրտակեղեք կարգախոսներ: Զարմանալ կարելի է, երբ փորձագիտական մակարդակով փորձ է արվում ահաբեկչական գործողությունը տեսակավորել «չար» և «բարու» ջրբաժանով՝ դրանից բխեցնելով, որ, օրինակ, Նաիրի Հունանյանի ոճրախմբի արածը ահաբեկչություն է, իսկ ահա Վահան Հովհաննիսյանն ու նրա երեսուն զինյալները կամ Պավլիկ Մանուկյանն ու նրա «ծռերը» «Ռոբին Հուդեր» են, ովքեր արդարություն էին բերելու երկրին և իրականացում մեր ազգային իղծերին:

Կատարյալ անհեթեթություն է այս վարկածը, մանավանդ Հայաստանում տեղի ունեցած և կանխված ահաբեկչությունների միջև առկա է տեսանելի ինստիտուցիոնալ, օրակարգային, ոճային կապ: Բացարձակապես պատահական չէ, որ «Դրո», «31», «Հոկտեմբերի

27», «Սասնա ծռեր» գործերով անցնում են մարդիկ, ովքեր միեւնույն կուսակցության՝ ՀՅԴ-ի գործող կամ նախկին անդամներ են:

Սա ինքնին ուշագրավ փաստ է եւ խոսում է այն մասին, որ ավանդական կուսակցության՝ տասնամյակների ագրեսիվ քարոզչությունը տվել է իր «պտուղները»՝ միայն թե այդպիսի վերածելով ոչ թե Ստամբուլը, այլ մեր հարազատ երեսանը: Այս ահաբեկչական գործողությունները դաշնակցականության չհայտարարված հաշվեհարդարն են 88-ի արժեքային համակարգի դեմ:

Այս կայացած ու կանխված ակտերի արանքում հայ ավանդական ամուլ քաղաքական միտքը կարողացավ 1998-ին հասնել առնվազն գաղափարական ռեանշի՝ «հայկական թերմիդորականության» հաղթանակին:

«Հայկական թերմիդորականությունը»՝ Ռոբերտ Քոչարյանի գլխավորությամբ, սարսափելի քաղաքական ծուլվածք էր երրորդ հանրապետության դեմ՝ պարտկոմա-կոմերիտական նախկին եւ դաշնակցական ներկա էլիտաների մասնակցությամբ: Ու պատահական չէ, որ «հայկական Թերմիդորի» կառավարման տարիներին տեղի ունեցավ մեծամասշտաբ երկու ահաբեկչություն՝ 1999թ. հոկտեմբերի 27-ին ինքնիշխանության օրակարգ ունեցող էլիտայի, իսկ 2008-ի մարտի 1-ին՝ ազատության ձգտում ունեցող հասարակության դեմ:

Սակայն վերադառնանք, ըստ էության, ահաբեկչական ակտերին եւ նկատենք, որ ընդհանուր են նաեւ «31», «Հոկտեմբերի 27», «Սասնա ծռեր» խմբերի կարգախոսները, կոչերը, որոնցում բացակայում են քաղաքական ուղերձները, եւ ամեն բան հանգում է գեների միջոցով արդարություն հաստատելու ուտոպիային կամ Մեծ Հայաստան ստեղծելու ցնորքին: Այլ քաղաքական տեքստեր, ուղերձներ, ռացիոնալ օրակարգ, որոնք կմիավորեին հանրությանը, պարզապես գոյություն չունեն:

Այս բոլոր գործերի համար ընդհանուր է նաեւ ամբաստանյալների հեղափոխական, էպատաժային դատավարական պահվածքը: Աղմուկը, բոլոր դեպքերում, փոխարինում է քաղաքական ասեղիքի բացակայությանը:

Պատահական չէ, որ թվարկված բոլոր ահաբեկչական ակտերը կամ դրանց փորձերը հանգեցրել են կամ հանգեցնելու են նույն, մեծ հաշվով՝ երկու աղետայի հետեանքներին:

«Դրոն» եւ «31»-ի գործը չհանգեցրին արդարության կամ ժողովրդավարության հաստատմանը, այլ նպաստեցին իշխանության ներսում ուժային սեգմենտի ուժեղացմանը եւ 98-ի հեղաշրջմանը: Նաեւ նպաստեցին հայ-ռուսական այդ ժամանակվա՝ հիմնականում հորիզոնական հարաբերությունների փլուզմանը եւ 97-ի հայ-ռուսական տիրաառչակ պայմանագրի կնքմանը<sup>130</sup>:

Նաիրի Հունանյանը Հայաստանը չազատեց «արյուն ծծողներից», բայց իր դավադիր կրակոցներով նպաստեց Հայաստանի ֆորպոստացմանը եւ Ռոբերտ Քոչարյանի «միլիարդանոց» դիկտատուրային:

«Սասնա ծռերի» կրակոցները Հայաստանը չազատեցին ոչ գաղութացումից, ոչ էլ ատելի իշխանությունից, այլ միայն նպաստեցին Սերժ Սարգսյանի անձնիշխանության ներքին եւ միջազգային լեգիտիմության ամրապնդմանը, մեր բանակի նկատմամբ ռուսական զինուժի վերահսկողության ուժեղացմանը՝ 2016-ի դեկտեմբերին կնքված հայ-ռուսական միացյալ զորախմբի պայմանագրով:

Հայկական «ոռինիստություն» սլաքներն ուղղված են մեր արնաքամ լինող երկրի դեմ<sup>131</sup>:

## Սփյուռքը դառնում է սպառնալից

(16.12.2017)

«Հ ԱՄՆ վերջին բացահայտումից հետո, թերեւս արժե անդրադառնալ Սփյուռքին՝ մանավանդ, որ սա ամենեւին էլ առաջին դեպքը չէ, որ արտերկրում ապրող հայությունից, ավելի շուտ՝ դրա տարբեր սեգմենտներից մարտահրավերներ են ուղղվում Հայաստանին»:

<sup>130</sup> Հայ-ռուսական համագործակցության այդ պայմանագիրը կնքվել է հենց հասարակական հորիզոնական այդ հարաբերությունների հիմքի վրա՝ որպես այդպիսին միակը երկու երկրների դարավոր հարաբերություններում:

<sup>131</sup> [lin.am/2167784.html](http://lin.am/2167784.html). 02.07.2017թ.:



տանի կայունությանը, մեր երկրի անվտանգությանը: Հայաստանի եւ Սփյուռքի օրակարգերը ներդաշնակ չեն եղել դեռ համազգային շարժման տարիներին, երբ հայ ավանդական քաղաքական միտքը՝ դաշնակցած սովետահայ պալատական մտավորականության եւ կոմունիստական պրոպագանդայի հետ, պանթուրքիզմի սպառնալիքով ահաբեկում էր ազատության ճանապարհը բռնած Հայաստանի ժողովրդին: Դա իսկական զաղափարական, քարոզչական տեղոր էր՝ ավելի վտանգավոր, քան՝ Մոսկվայի արածը:

Հայաստանի անկախությանը հակադրվելու հարցում դաշնակից էին դարձել Մոսկվայի կոմունիստական իշխանությունն ու հայ ավանդական կուսակցությունները՝ հատկապես ՀՅԴ-ն: Համազգային շարժումը «կտրել» էր ոչ միայն կոմունիստական նոմենկլատուրայի, այլ նաեւ Դաշնակցության հացը, որը տասնամյակներ շարունակ Հայ դատը դարձրել էր իր քսակը լցնելու, Սփյուռքն «ընկերների» քմահաճության թիրախ դարձնելու միջոց: Երեսնամյա ձեռավորվում էր պետականաստեղծ, ռացիոնալ քաղաքական հոսանք՝ մարզինալ դարձնելով ուժերի, որոնք իրենց կենսագրության ամբողջ շրջանում իրական հայրենիքի գաղափարը ստորադասել են «Մեծ Հայաստանի» ցնորքին, պրագմատիզմը՝ կենացին:

Տնավեր այդ հոսանքը Երրորդ հանրապետության առաջին տարիներին իրեն դուրս էր գցում Հայաստանում որոշումներ կայացնելու գործընթացից, եւ պատահական չէ, որ երիտասարդ պետության դեմ առաջին ահաբեկչական գործողությունը՝ «Դրո»-ի գործը կապված էր ՀՅԴ-ի ու Սփյուռքի որոշակի շրջանակների հետ: Էլ ավելի պատահական չէ, որ տակավին վերջերս «Դրո»-ի գործով ցմահ ազատազրկման դատապարտված Արմենակ Մնջոյանը ՀՅԴ ղեկավարությանը մեղադրեց ռուսական հատուկ ծառայությունների կողմից հավաքագրված լինելու մեջ: Ըստ Մնջոյանի տրամաբանության՝ «Դրո»-ի գործը հենց ՀՅԴ վերնախավի ու ռուսական հատուկ ծառայությունների «սիրային գրկախառնության» դրսեւորում է:

«Դրո» ահաբեկչական ցանցը իսկական դիվերսիա էր մեր պետության, պատերազմի մեջ գտնվող, դեռ մինչեւ վերջ չձեռավորված բանակի դեմ: «Ախպարական» հետք կար նաեւ «ՅԻ»-ի գոր-

ծում, որը դարձյալ կապվում է ՀՅԴ-ի անվան հետ: 1995-ին Վազգեն Սարգսյանի սպանությունը կանխվեց, չորս տարի հետո՝ հնարավոր չեղավ... Սփյուռքի հետ կապված՝ վիճակը հիմա ավելի ողբերգական է դարձել, որովհետեւ արտագաղթը ձեռնախոյզ է ոչ միայն Հայաստանի սոցիալական պատկերը, այլ նաեւ որակապես փոխել է Սփյուռքը՝ այն դարձնելով իրական մարտահրավեր Հայաստանի անվտանգության համար:

Վերջին 25 տարիներին Հայաստանը լքածները դարձել են Սփյուռքում եղանակ ստեղծողները՝ դուրս մղելով պետականաստեղծ փոքր սեգմենտին, Սփյուռքը դարձնելով ռազմաքաղաքականությունների միջավայր: Հայաստանից գնացածների մի մասը «Սասնա ծոեր»-ի կողմնակիցներն են, մյուսները՝ հակառակորդները, քայց նրանց միավորում է վայրի ռազմակալիզմը: Ուսումնասիրեց վերջին տարիների ահաբեկչության փորձերը, բոլոր խմբերում կամ Սփյուռքի ներկայացուցիչներ են, կամ՝ փողեր: «Սասնա ծոեր»-ի ոգեշնչողը՝ Ժիրայր Սեֆիլյանը, սփյուռքահայ է, «ծոությանն» ակտիվ խրախուսել են Սփյուռքից, մղել արկածախնդրության: «Նորք-Մարաշի» զինված խմբի ղեկավար Արթուր Վարդանյանի փողերը նույնպես՝ Սփյուռքի ծագում ունեն: Նույնը վերաբերում է Սամվել Բաբայանի գործին, որտեղ հստակ երեւում են ռուսահայ ծագման փողեր: Էլ չենք խոսում ԱԱԾ-ի վերջին բացահայտման մասին, որի հիմնական «հերոսը» ԱՄՆ քաղաքացի հանդիսացող հայ է:

Ամերիկաներում տաք նստած որոշում են Հայաստանում ապրողների ապագան եւ դիսկոմֆորտ են զգում, որ օտարված են Հայաստանի որոշումների վրա ազդելու հնարավորությունից: Այս հարթության վրա էլ ձնվում են դավադիր մտադրություններն ու խմբերը, որոնց հիմնական թիրախը Սերժ Սարգսյանն է, որը, անկախ իր բոլոր թերություններից, այսօրվա էլիտայում միակն է, որ ասոցացվում է այսօրվա հանրապետության, 88-ի շարժման հետ: Սփյուռքը՝ իր հնացած ու քյարթու մաքսիմալիզմով եւ նորացած մատղաշ ռազմակալիզմով դարձել է լուրջ սպառնալիք Հայաստանի անվտանգության համար: Համարժեք գործողություններ են պետք, քանի

ստեղծված իրավիճակի ֆոնին «Կյուսիսային քամին» հերթական ավերը չի գործել Հայաստանում<sup>132</sup>:

### 18-րդ տարեկիցին ընդառաջ. «Դրո», «31»-ի գործ, Հոկտեմբերի 27՝ ՀՅԴ արյունոտ հետքերը (18.10.2017)

Արյո՞ք պատահականություն է, որ ԱԺ-ում ահաբեկչություն իրականացրած Նաիրի Հունանյանի հանցախմբի բոլոր անդամները ՀՅԴ նախկին անդամներ են: Թերեւս՝ ոչ: Հասարակության մի հատվածն էլ մեղավոր չէ, որ Հոկտեմբերի 27-ը կապում է ավանդական կուսակցության անվան հետ, որովհետեւ Նաիրի Հունանյանը հայրենադավ կրակոցներից անմիջապես հետո օգնության խնդրանքով որոշել էր դիմել ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանին՝ թերեւս համարելով, որ կուսակցական ծրագրի մինիմումն արված է՝ Վազգեն Սարգսյանը սպանված է:

Դեռ ոչ հեռավոր 1995-ին ՀՅԴ-ն Վազգեն Սարգսյանին սպանելու մտադրություն է ունեցել: Սա արդեն ոչ թե հղում է ոճրագործի խոսքին կամ ենթադրություն է, այլ փաստ, որը բխեցվում է, այսպես կոչված, «31»-ի գործից: Առհասարակ, տեղին է անել մի քանի ուշագրավ դիտարկում՝ բացահայտելու համար ՀՅԴ գործունեության որոշ հանգամանքներ Երրորդ հանրապետության պատմության տարիներին: «Դրո»-ի, «31»-ի, ՊՊԾ գնդի իրադարձությունների անմիջական մասնակիցները նախկին եւ ներկա դաշնակցականներ են եւ սրա պատճառը պետք է փնտրել այս կուսակցության գաղափարա-քաղաքական ակունքներում, «մաուզերիստական» մտածողության խորքերում: Տասնյակ տարիներ դաշնակցական սերունդներ, զենքի վրա երդվելով, դաստիարակվել են «Ստամբուլն արյան ծովի վերածելու» ցնորամատությամբ: Կուսակցված բացասական էներգիան պետք է ունենար իր դրսետրումը՝ եթե ոչ Ստամբուլում, ապա Երեւանի կենտրոնում, խորհրդարանի շենքում, որտեղ սպանվեց իրա-

<sup>132</sup> [in.am/2263290.html](http://in.am/2263290.html). 16.12.2017թ.:

կան հաղթանակի խորհրդանիշ Սպարապետը՝ ճանապարհ բացելով ՀՅԴ-ի «արշավանքի» համար, սակայն՝ ոչ թե Էրզրո, այլ Ռոբերտ Քոչարյանի իշխանություն: Վերջինս, ի դեպ, իր պարտկոմա-դաշնակցական բովանդակությամբ, իսկական մարտահրավեր էր 88-ի շարժմանը, նրա արժեհամակարգին, Երրորդ հանրապետությանը: Հետագա զարգացումները հուշում են, որ Հոկտեմբերի 27-ի ոճրագործությունը համագործակցության կամուրջ, խաչմերուկ է ուսական կայսրության, Ռոբերտ Քոչարյանի եւ ՀՅԴ-ի միջեւ: Պատահական չէ, որ այսօր ՀՅԴ ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանը, նույնիսկ հայկական բանակի հերոսությունն Ապրիլյան պատերազմում, վերագրում է ուսական զենքին, իսկ «31»-ի գործով ցմախ ազատագրվածն դատապարտված նախկին դաշնակցական Արմենակ Մնջոյանը բանտից ակնարկում է, որ ՀՅԴ այսօրվա վերնախավը հավաքագրված է ուսական հատուկ ծառայությունների կողմից:

Մի ուշագրավ փաստ նույնպես, կարծում ենք, անվազն խորհելու առիթ կտա մեր ընթերցողներին: Հայաստանում ահաբեկչական ակտեր եղել են 1990–94 թթ.-ին եւ ահաբեկչական «բումը» վերականգնվել է 1998-ից հետո: Կարող եք հետեւել ժամանակագրությանը եւ համոզվել, իսկ մենք բավարարվենք հիշեցումով, որ կայունության քառամյակում՝ 1994–98 թթ.-ին ՀՅԴ գործունեությունը կասեցված է եղել: Հետեւությունները թողնում ենք ընթերցողներին<sup>133</sup>:

### Հայաստանի առաջին առերեսումը ահաբեկչության հետ (28.12.2017)

1994-ի դեկտեմբերի 28-ին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը հեռուստատեսային ելույթով Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցությունը հայտարարում է կասեցված: Պատճառն, ըստ նրա, այն է, որ անվտանգության մարմինները հայտնաբերել են «Դրո» ահաբեկչական կառույցը, որն արդեն իրականացրել է մի

<sup>133</sup> [in.am/2229312.html](http://in.am/2229312.html). 18.10.2017թ.:



քանի սպանություն: Կառուցյին վերագրվում էր նաեւ թմրանյութերի վաճառք: Այդ կառուցյին վերագրվեց նաեւ Համբարձում Գալստյանի սպանությունը<sup>134</sup>: Ավելի ուշ ՀՀ Գերագույն դատարանը հաստատել է ՀՀ նախագահի հրամանագիրը:

Երրորդ հանրապետության ամենաաղմկոտ իրադարձություններից մեկն արժանացավ տարբեր գնահատականների: Իրավական հարթության վրա Լեւոն Տեր-Պետրոսյանի հրամանագիրը գուցե նույնիսկ խոցելի է, որովհետեւ նախագահն իրեն փաստացի վերագրեց դատարանի ֆունկցիա<sup>135</sup>: Մյուս կողմից՝ Հայաստանը դեռ չունեւ Սահմանադրություն ու գործող օրենսդրությունը սողանցքներ թողնում էր նախագահի նման հրամանագրի համար: Մեկ այլ հանգամանք էլ կա, որը վիճահարույց է դարձնում Տեր-Պետրոսյանի հրամանագիրը: Դա անմիջապես նախորդեց 1995-ի խորհրդարանական ընտրություններին՝ անհարկի շահարկումներ ծնելով եւ նպաստելով ՀՅԴ «հերոսականացմանը»:

Դժվար է միանշանակ պնդումներ անել, թե բովանդակային հարթության վրա որքանով են հիմնավոր Տեր-Պետրոսյանի կամ դատարանի փաստարկները, սակայն դրանց արժանահավատություն են հաղորդում մի քանի հանգամանքներ: ՀՅԴ-ն այդպես էլ չէր ինտեգրվել Հայաստանի քաղաքական կյանքին՝ փորձելով պետություն կառուցել պետության մեջ: «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքին հակասում էր թե ՀՅԴ կառուցվածքը (Բյուրոն գտնվում էր արտերկրում)<sup>136</sup> եւ թե գործելաոճը (դռնփակ Ընդհանուր ժողովներ, զենքի վրա երդում եւ այլն): Սակայն ավելի ուշագրավ է մեկ այլ հանգամանք. Հայաստանում ահաբեկչությունը տարածված էր մինչեւ 1994-ը եւ ահաբեկչական նոր բում եղավ 1998-ից հետո, երբ ՀՅԴ գործունեությունը վերականգնվեց: 1994-98 թթ.-ին Հայաստանում ահաբեկչություն չի եղել: Ձեռնպահ

<sup>134</sup> Համբարձում Գալստյանի սպանությունն այդ կառուցյին չի վերագրվել:

<sup>135</sup> Նախագահի հրամանագրով ՀՅԴ-ի գործունեությունը կասեցվել է ժամանակավորապես եւ գործել է 15 օր: Դատարանը այս կուսակցության գործունեությունը կասեցրել է սեփական դատարանության հիման վրա՝ մինչեւ վերջինս իր կանոնադրությունը կհամապարասխանեցնի ՀՀ գործող օրենսդրությանը:

<sup>136</sup> Եւ՝ ղեկավար մարմնի անդամներ էին օտարերկրյա քաղաքացիներ:

մնանք մեկնաբանություններից՝ հետետությունները թողնելով ընթերցողներին: Հավելենք մեկ այլ հանգամանք. ՀՅԴ նախկին կամ գործող անդամներ են եղել հետագա տարիների ահաբեկչական ակտերի մասնակիցները՝ Նաիրի Հունանյանն ու Նրա խմբի անդամները, Ժիրայր Սեֆիլյանն ու «Սասնա ծռերի» առանցքային դեմքերը:

1998-ին Ռոբերտ Քոչարյանը վերականգնեց ՀՅԴ գործունեությունը եւ ազատ արձակեց կուսակցության առանցքային դեմքերին՝ առանց իրավական հիմքերի: Հրանտ Մարգարյանն, Արմեն Ռուստամյանն ու մյուսները քանտից ազատ են արձակվել իրավիճակի փոփոխության հետեանցով. նրանց որեւէ մեկը չի արդարացրել, իսկ դա նշանակում է, որ մեկ այլ իրավիճակում նրանք տեսականորեն կարող են կրկին հայտնվել ճաղերի հետեւում: Սակայն Ռոբերտ Քոչարյանը մի ծառայություն Հայաստանին, այնուամենայնիվ, մատուցել է. նա ՀՅԴ-ին դարձրել է համակարգի մաս, ըստ այդմ՝ դարձնելով կառավարելի ու կանխատեսելի:

Հիմա ՀՅԴ Բյուրոն Հայաստանում է, Սփյուռքում հայդատական «գործնի» ռեսուրսը սահմանափակվել է, կուսակցության սնուցման աղբյուրը դարձել է քրեաօլիգարխիկ համակարգը: ՀՅԴ ֆորմալ անդամներն այլեւս չեն կրակում, սակայն նրա «ծռության» ցանցային դրսեւորումներին ակնատես եւք լինում հայրենիքում եւ Սփյուռքում: Ձենքի վրա երդվելու հոռի մշակույթը դեռ երկար տարիներ իրեն զգացնել է տալու<sup>137</sup>...

## 88-ի երեք դասերը

(20.02.2018)

Այսօր 88-ի համազգային շարժման 30-րդ տարեդարձն է: Այն հայ ժողովրդի քաղաքական պատմության ամենալուսավոր էջերից մեկն է, որն ուղղակիորեն կապված է Երրորդ հանրապետության հիմնադրման, արցախյան պատերազմի հաղթանակի հետ: Համազգային շարժման մասին կարելի է անվերջ խոսել, այն քննարկել կրկնրես ժամանակահատվածի եւ ավելի գլոբալ համատեքստում,

<sup>137</sup> lin.am/2270690.html. 28.12.2017թ.:

սակայն այսօր ցանկանում ենք կենտրոնանալ 88-ի երեք դասերի վրա, որոնք մեթոդաբանական ուղեցույց կարող են դառնալ բոլոր այն ուժերի համար, ովքեր հավակնում են հանդես գալ պետության արդիականացման ծրագրով կամ այլընտրանք դառնալու հայտ են ներկայացնում: 88-ի շարժման գլխավոր առանձնահատկությունը հասարակության սուբյեկտությունն է: Շարժման ղեկավարությունը բոլոր սկզբունքային որոշումները կայացրել է՝ Ազատության հրապարակից ազդակներ ստանալով կամ նույնիսկ՝ հենց հրապարակում՝ ժողովրդի հետ միասին:

Հասարակության սուբյեկտությունը կանխորոշեց շարժման ժողովրդավարական բնույթը, ինչը հնարավորություն տվեց Երրորդ հանրապետության հիմքում դնել ժողովրդավարության, ազատականության գաղափարները: Երբ այսօր արձանագրում ենք, որ իշխանությունները շեղվել են 88-ի ուղեգծից, առաջին հերթին՝ նկատի ունենք նրանց հրաժարումը ժողովրդավարության և ազատականության արժեքներից:

Շարժման երկրորդ առանձնահատկությունը դրա կառավարման արդյունավետ մեխանիզմն էր, ինչի շնորհիվ խորհրդային Հայաստանում երկիշխանություն առաջացավ՝ առնվազն 1989-ի մայիսից<sup>138</sup>: «Ղարաբաղ» կոմիտեն իրական այլընտրանք էր կոմունիստական իշխանությանը՝ քաղաքական, արժեքային և ինստիտուցիոնալ մակարդակներում: Իրական այլընտրանքի կարետր հատկանիշը՝ քաղաքական հաղթանակի հասնելն է բացառապես սահմանադրական, լեզավ ճանապարհով: Պատահական չէ, որ համազգային շարժումը կոմկուսին հաղթեց Գերագույն խորհրդի 1990թ.-ի մայիսի ընտրություններում՝ խորհրդային օրենսդրության և ընտրական համակարգի տառիչ և ոգուն համապատասխան: Դա մեծապես լեզիտիմացրեց ՀՀԷ-ի հաղթանակը անգամ Մոսկվայի աչքերում: Եւ վերջապես՝ 88-ը ցույց տվեց, որ քաղաքական գործընթացը հաջողության է հասնում, երբ ձեռավորում է համաշխարհային համատեքստին համահունչ քաղաքական օրակարգ:

<sup>138</sup> Հսրակ երկիշխանական վիճակ էր արդեն 1988 թվականի օգոստոսից մինչև Կոմիտեի ձերբակալությունը դեկտեմբերի 10-ին:

«Ղարաբաղ» կոմիտեին, այնուհետև ՀՀԷ-ին հաջողվեց հաղթահարել ազգային էգոիզմը և համազգային շարժումը դիտարկել ԽՍՀՄ ժողովրդավարական շարժման, արևելատերության երկրների դեմոկրատիզացիայի համատեքստում: Պատահական չէ, որ համազգային շարժումը վայելում էր միջազգային հուժկու աջակցություն՝ միեւնույն ժամանակ, որպես արտաքին քաղաքականության կոնցեպտ առաջարկելով «երրորդ ուժի բացառման» սկզբունքը: Այս երեք կարետր սկզբունքները 88-ի շարժումը բացառիկ դարձրեցին ոչ միայն մեր ժողովրդի պատմության, այլ՝ ԽՍՀՄ ժողովրդավարական շարժումների մեջ<sup>139</sup>:

<sup>139</sup> [in.am/2301454.html](http://in.am/2301454.html), 20.02.2018թ.:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խմբագրի կողմից .....	5
Ինչպես կոմունիստները զրկվեցին իշխանությունից, ՀՅԴ-ն՝ «հացից» .....	7
Ո՞վ էր ղեկավարում համազգային շարժումը.....	9
Ղարաբաղը պահողների ու ծախողների մասին.....	11
Փլատակների տակ մնացած կայսրություն, փլատակներից հառնող շարժում.....	13
Թե ինչու Մոսկվան չներեց Կարեն Սերոբիչին.....	14
Ինչո՞ւ էինք հավատում Գորբաչովին .....	16
«Ղարաբաղ» կոմիտեն՝ Dream Team .....	18
Որսասեր պարտկումը .....	20
Միացումից՝ անկախություն, ԼՂՀ-ն՝ միջազգային ճանաչման շեմին .....	23
Ինչո՞ւ անկախականները հայտնվեցին համազգային պայքարի լուսանցքում.....	25
Ինչո՞ւ քաժանվեցին Տեր-Պետրոսյանի եւ Վազգեն Մանուկյանի ճանապարհները .....	26

Շարժման «Գարունը». Վանոյի ու Վազգենի ֆենոմենը .....	29
«Ղարաբաղ» կոմիտեի ու Սուրեն Հարությունյանի «պատմական» հանդիպումը .....	31
Նոյեմբերի 24-ի պատմական որոշումը .....	33
Շարժման առաջին ծրագիրը .....	35
«Շեփոր Աշոտի» լեգենդը .....	36
Արթուր Մկրտչյանի սպանության առեղծվածը .....	38
Համազգային շարժման էկոլոգիական սկիզբը .....	39
Թե ինչպես Մոսկվան արյուն թափեց Երեանում .....	41
Սերոբիչը նեղացավ, Սուրեն Հարությունյանին չընդունեցին, Մոսկվայանը պարտվեց .....	43
Ո՞վ պատվիրեց Համբարձում Գալստյանի սպանությունը .....	45
ՀՀ-ի առաջին «ուրացումը» .....	46
Հայաստանի եւ Արցախի վերամիավորման ամերիկյան հետքը ..	48
Շանթի հացադուլը .....	49
Թե ինչպես «բարեփոխական» Գորբաչովը դարձավ հայ ժողովրդի աչքի «գրողը» .....	51
88-ը բացառիկ է, բայց մի՞՞չէ .....	53
Վանոյի կարոտած խոսքերը .....	54
Համազգային Ամանոր, որին հաջորդեց վառողի հոտը .....	58
Շարժման ոգին՝ Վազգեն Սարգսյանը .....	60
Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատմական այցն Արցախ .....	62

Լեւոն Տեր-Պետրոսյանը փորձեց, սակայն չկարողացավ միավորել եկեղեցին .....	65
Երկրապահությունը .....	67
«Ազգային» ՀՅԴ-ն եւ «ապազգային» ՀՀԵ-ն .....	69
Լեւոն Տեր-Պետրոսյանի ֆենոմենը .....	70
Շարժման հիմնական դասը, որը կարող է սրբել ցանկացած իշխանություն .....	73
«Ղարաբաղ» կոմիտե-2 .....	74
Համազգային շարժման առաջին երեսնցի զոհը եւ «բարի Սովետի» լեգենդի փլուզումը .....	76
Զինագործ հերոսը նահատակվեց իր նախագծած նոնակի փորձարկումից .....	78
Ո՞վ էր կանգնած ՀԱԲ-ի թիկունքում .....	79
Երկու Ռաֆայելները կամ համազգային շարժման մտավորական դեմքը .....	81
Ուսանողական լուսավոր շարժումը, որի ընդերքից ծնվեց ոճրագործը .....	83
«Ղարաբաղ» կոմիտեի պառակտումները .....	85
Համազգային գթությունից՝ համազգային անեծք .....	86
1990-ի հունվարին արդեն պատերազմ էր .....	88
Մոսկեսը մարտիրոսվեց Երասխի մարտում .....	90
Ո՞ր եւ կոմիտեի տղաները .....	91
Փետրվարի 20-ից՝ Սեպտեմբերի 21 .....	92



Հերոսացած պատգամավորը .....	94
Քոչարյանն ու Սարգսյանը հեռացան 88-ի արժեքներից .....	96
Գիտեմ, որ Երեան այլեա չեմ գա, ինձ կբերեն.....	97
Ո՛ւմ էր պետք Չաուչի եւ Վիտյա Այվազյանի մահը.....	98
Մոնթեն' ազգային հերոս, ԱՍԱԼԱ-ի համար՝ դավաճան .....	100
Բանակը ձեավորվեց շարժման ընդերքում.....	102
Վազգենը՝ պատերազմի եւ խաղաղության մասին .....	103
Ինչո՞ւ ընտրությունը կանգ առավ Լեւոն Տեր-Պետրոսյանի վրա.....	105
Ի՞նչը խանգարեց Վազգեն Մանուկյանին.....	107
Ինչո՞ւ Սերժ Սարգսյանը Արցախից տեղափոխվեց Հայաստան..	110
Տեր-Պետրոսյանի ֆենոմենը, Ջվիադի փախուստը Հայաստան, էջիբեյի չկայացած «լոգանքը» Սեւանում .....	112
Հայկական հակահեղափոխության ուրվականը համազգային շարժման ստվերում .....	115
Հեղափոխական ընտրություններ .....	116
Մի քանի միջ շարժման ու պատերազմի մասին .....	118
Բլեյանի դպրոցի Աշոտները.....	120
Շուշիի ազատագրման առեղծվածը, ի՞նչ էր անում Տեր-Պետրոսյանը Թեհրանում.....	122
Մեր հաղթական բանակի փառավոր գեներալները .....	124
Սամվել Բաբայան՝ պատերազմի հերոսը, Արցախի սարսափը ...	126

Էջմիածնեցի գեներալների հերոսական անցյալը եւ օլիգարխիկ ներկան.....	129
Արծվաշենի անկման առեղծվածը, 12 հերոսների նահատակությունը.....	131
Դավաճանե՞լ է արդյոք Տեր-Պետրոսյանը շարժմանն ու Արցախին.....	133
Հաղորդի պատմական հանրահավաքը .....	135
Վազգեն Մանուկյանի «Երեք հեղափոխությունների» բանաձեւը.....	137
Սերժ Սարգսյանի ու Ռոբերտ Քոչարյանի բացակայությունը .....	139
Շարժման լուավոր տղաները .....	140
Ինչո՞ւ է կեղծում Կոմանդոսը կամ արդյո՞ք Տեր-Պետրոսյանը «հանձնում» էր Ղարաբաղը .....	142
Ինչո՞ւ «Ղարաբաղ» կոմիտեից հեռացվեց Իգոր Մուրադյանը ....	143
«Ղարաբաղ» կոմիտեի հավաքի պահանջ .....	145
Անավարտ առաքելություն .....	147
ՀԱՎԵԼՎԱԾ.....	151-163
«Դրո», «31», «Հոկտ. 27», «Սասնա ծռեր». հայկական «ոռքինհոլության» աղետալի հետեանքները.....	153
Սփյուռքը դառնում է սպանուլիք.....	155
18-րդ տարեկիցին ընդառաջ. «Դրո», «31»-ի գործ, Հոկտեմբերի 27՝ ՀՅԴ արյունոտ հետքերը .....	158
Հայաստանի առաջին առերեսումը ահաբեկչության հետ .....	159
88-ի երեք դասերը .....	161

ՍԱՐԳԻՍ ԱՐԾՐՈՒՆԻ

1988-Ի ՇԱՐԺՄԱՆ

30-ԱՄՅԱԿԸ



«Անտարես» իրատարակչատուն  
Երևան 0009, Մաշտոցի 50<sup>ա</sup>/1  
Հեռ.՝ +(374 10) 58 10 59, 56 15 26  
Հեռ./ֆաքս՝ +(374 10) 58 76 69

[antares@antares.am](mailto:antares@antares.am)

[www.antares.am](http://www.antares.am)